

Խ Ա Ն Դ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ. ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ԱՐՐԱՀԱՄ ԵՐԵՒԱՆՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՑՆ

1721 — 1736 թ.

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1938

АКАДЕМИЯ НАУК СССР. АРМЯНСКИЙ ФИЛИАЛ

АБРААМ ЕРЕВАНЦИ

ИСТОРИЯ ВОЙН

1721—1736 г. г.

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАНА
ЕРЕВАН 1938

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ. ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

9(47.925)
Ա-16

ԱՐՐԱՀԱՄ ԵՐԵՒԱՆՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՑՆ

1721—1736 թ.

1622
9178



ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

Տպագրվում է ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական
Ֆիլիալի նախագահության կարգադրությամբ

Մ.Բ.ՐԱՀԱՄ ԳԵՐԵՎԱՆՅՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ


1935 թ. աշնանը ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի պատմա-հնագիտական սեկտորի ուշադրությունը գրավեց Յերևանի Պետական Թանգարանի համար 675 ձեռագիրը, վորի վերնագիրն է «Պատմութիւն պատերազմացն, որոք եղեն յօսմանոց ի վերայ քաղաքացն հայաստանեայց և պարսից հեա զուժարելոյ Մահմատ սուլտանին Ազվանից ի վերայ արքային պարսից Շահ-սուլթան Հուսէինի»:

Վերոհիշյալ համար 675 ձեռագիրը գրված է մեր ժամանակի շղագրով, առկա է մեծ թերթերի վրա և ունի 52 յերես. Ձեռագրի 1—39 էջը բռնում է Աբրահամ Յերևանցու «Պատմութիւն պատերազմացն» աշխատությունը, իսկ 40—51 էջերում եջմիածնի ժամանակակից Պետրոս Քյուրթուր կաթողիկոսը պատմում է թե ինքը և Աղեքսանդր վարդապետը ինչպիսի հալածանքներ են կրել Ղազար կաթողիկոս Ջանկեցուց, և թե նա եջմիածնին ինչ նյութական փասաներ է հասցրել: Գրքի ճակատին կա հետևյալ մակագրությունը. «Նվիրում եմ Ազգազրահան քնկերության մատենադարանին առանց սակայն տպագրության իրավունքի», վոր պատկանում է Վենետիկի Մխիթարյաններին: 1928 թ. հունվարի 13, ԼԵՈ:

Այսպիսով պարզվում է, վոր Աբրահամ Յերևանցու պատմության ներկա պատճենն արտագրված է Վենետիկում՝ մի ուրիշ հիմնական ձեռագրից և, յերկրորդ՝ պատճենն արտագրողը բաց է թողել հեղինակի անունը:

Պատմա-հնագիտական սեկտորը գնահատելով այս

17776



Պատ. խմբագիր՝ պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյան

Պետհրատի տպարան. Գլավիտի լիազոր Ա. 4002. Հրատ. 12.

Պատվեր № 932. Տիրած 1000.

աշխատությունների կարևորությունը Հայաստանի և Վրաստանի պատմությունը համար՝ սկսեց այդ ձևադիրը պատրաստել ապագությունը համար:

Հետագայում պարզվեց, վոր Արրահամ Յերեանցու կազմած ներկա պատմությունը Վենետիկի հիմնական ձևադիրը ոգավել է Ղ. Ալիշանը յուր «Այրարատ» աշխատության մեջ Յերեանի պատմությունը կազմելիս, սակայն առանց ազդուրը հիշելու (տես Ալիշան «Այրարատ», 305), իսկ պատմարան Լեոն Վենետիկից ստանալով Արրահամ Յերեանցու պատմության մեր հրատարակած պատճենը, մի շարք աշխատություններում քաղվածքներն է արել նրանից. այսպես, որինակ՝ 1914 թ. իր հրատարակած «Պատմությունը Երեանի հայոց թեմական գաղտնի» աշխատության մեջ (եջ 71—72) Լեոն գրում է. «Այս—1724 թ. պատերազմը ինչպես և ոսմանյան զորքերի շարժումները Ատրպատականում և այլ տեղեր մանրամասն նկարագրել է ականատես Արրահամ Յերեանցին, մինչև այժմ անհայտ մնացած մի հայ պատմագիր, վորի գործը դեռ ձևադիր, գանվում է Վենետիկի Մխիթարյան վանքի մատենադարանում»: Ապա նույն յերեսի ծանոթություն մեջ Լեոն ավելացնում է. «Այս ձևադիրը նեա յես ծանոթացա 1908 թվին, Վենետիկ գնացած ժամանակ... պատմությունը գրված է մաքուր գրարար լեզվով և պարունակում է իր մեջ շատ հետաքրքրական, մինչև այժմ անծանօթ մնացած մանրամասնություններ»: Նույն աշխատության 72—73 էջերում Լեոն Արրահամ Յերեանցուց քաղվածորեն մեջ է բերում Յերեանի հայ բողաների կազմակերպած ինքնապաշտպանությունը պատմությունը:

Նույն հեղինակն իր «Սոջայական կապիտալ» (322 էջ) աշխատության մեջ Արղալահ փաշայի հարձակումները նկարագրելիս ոգավում է Արրահամ Յերեանցու պատմությունից:

Մեր հրատարակած նոր հեղինակը մինչև այժմ չի հրատարակված ազդուրների շարքին և պատկանում է կա-

րևոր տեղ է բռնում XVIII դարի մեր պատմությունը համար: Նա ընդգրկում է 1721—1736 թվականների ժամանակաշրջանը՝ աղվանների դեպի Իրան կատարած արշավանքից սկսած մինչև Նազր շահի բնարությունը Մուզանում:

Բացի սրանից, պարունակում է մի շարք հետաքրքրական իրողություններ հայ-առևանական, վրացի-առևանական, աղվան-իրանական և, մանավանդ, առևան-իրանական հարաբերությունների և պատերազմների մասին:

Բուրբուրին նոր են և մեր պատմության համար կարևոր 1724 թ. Յերեանի արվարձանում տեղի ունեցած հայ-առևանական ընդհարումների նկարագրությունները, վոր հեղինակը մեջ է բերում յերկրորդ գլխում: Բացի սրանից, մենք գտնում ենք նույնպես մի շարք նոր տվյալներ Թահմազ Ղուլի խանի (Նազիր շահի) քաղաքական, ուղղմական գործունեությունը վերաբերյալ:

Իր ամբողջ գործն Արրահամ Յերեանցին բաժանել է յոթը գլուխների՝ հետևյալ կարգով.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. Թէ որպես շահ Թահմազ որդի սրբային պարսից Հուսէինի ձեռն էարկ զթագավորութիւն հօր իւրոյ գյափշտոկեալն յաղուանից յինքն գարձուցանել, և թե որպես Մցիսիթ քաղաքն ասպատակեցաւ ի լակղի թաթարաց և յետոյ առաւ յօսմանուոյ: Եջ 3—8:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. Թե որպիսի մարտիւ պատերազմի առին օսմանցիք զԵրեան: Եջ 9—26:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. Թե որպես մարտիւ պատերազմի Սոյ և Թաւրեզ քաղաք պարսից առան յօսմանցուոյ: Եջ 27—42:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. Ձիարդ ի ձեռն Ղուլի խանին շահ Թամազն մարտիւ պատերազմի էառ զմեծ քաղաքն Շօշ ի ձեռաց աղուանից և նստաւ յաթոռ թագավորութեան հօր իւրոյ: Եջ 43—48:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. Ձիարդ էառ Ղուլի խանն զհամազանն ի ձեռաց յօսմանցուոյ բազում պատերազմաւ: Եջ 49—56:

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ. Պարտութիւն շահ Թամազի յօս-

մանցւոց և գահընկեցութիւն: Թագաւորութիւն շահ Արբաս
մանկան: Միանեծանութիւն Ղուլի խանի և յաղթութիւնք
նորին: Եջ 57—81:

Գլխիկ ԵՌԹՆԵՐՈՐԳԻ. Արշաւանք Ղուլի խանի ի հայս,
ի վիրս, յաշխարհն Ազուանից և յերկիրն լեկզու: Պատե-
րազմ և պարտութիւն զօրացն յօսմանցւոց: Բանակելն Ղուլի
խանի ի Մուզան դաշտի և թագաւորելն ի վերայ պարսից:
Եջ 87—94:

Առանձին արժեք ունեն յերկրորդ և յութերորդ գլուխ-
ները: Յերկրորդ գլուխը, ինչպես ասվեց, մեր պատմութեան
համար նոր և կարեւոր նյութ և պարունակում, իսկ յութե-
րորդ գլուխը միքանի մանրամասնութեաններ և տալիս
վրաստանի պատմութեան համար: Ղուլի խանի Հայաստան
կատարած արշավանքների մանրամասնութեանները մեզ
ծանոթ են ժամանակակից ականատես պատմագետ Արբասամ
Կրեատցու պատմութեանից: Արբասամ Յերեանցին նույնը
տալիս և անցողակի և համառոտ: Շատ անբավարար են
պատմագրի տված տեղեկութեանները՝ Գիլանը ուսաներից
հետ վերցնելու մասին:

Ընթերցողների դյուրութեան համար զբքի վերջը գրել
ենք անհրաժեշտ ցանկեր՝ անձնանունների, տեղանունների,
և նյութացուցակ:

ԱՐԲԱՆԱՐ ԵՐԵՒԱՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՑՆ

1721—1736

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՅՆ,

1. r

ՈՐԲ ԵՂԵՆ ՅՕՍՄԱՆՅՈՑ Ի ՎԵՐԱՅ ՔԱՂԱՔԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՒ ՊԱՐՍԻՑԻ ՅԵՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՑ ՄԱՀՄՈՒՏ ՍՈՒԼՏԱՆԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ Ի ՎԵՐԱՅ ԱՐՔԱՅԻՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՀ ՍՈՒԼՏԱՆ ՀՈՒՍԷ[ԻՆԻՆ]

[Գ Լ Ո Ւ Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն]

Թէ՛) որպէս շահ Թամազ որդի արքային պարսից Հիւսէինին ձեռն էարկ զբազաւորութիւն իւր իւրոյ զպափօսակեալն յազուանից յինքն դարձուցանել, եւ քէ որպէս Մցիիք Բաղաբն առպասակեցաւ ի լակզի քարարաց եւ յեւոյ առաւ յամանցւոց:

§ 1 *Յետ²⁾ զուժարելոյ ազվանից Մահմուտ սուլտանին ի վերայ արքային պարսից շահ սուլտան Հիւսէինին (յորժամ էառ զմեծ քաղաքն Շօշ զաթոռ թագաւորութեան նորա եւ սպան զնա եւ զորդիս նորա) յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի հայկազեանս թուականի [1721 թ.], ի ժամանակի, յորժամ սասանեալ, զզրդեալ, խոռվեալ ծփիւր աշխարհն Պարսից, եւ իշխանք զաւառացն ի հերքել լայնածաւալ միապետութիւն նորա՝ հակառակ միմեանց յարուցեալ տազնապէին եւ զաշխարհն ամենայն հարուածովք սրոյ եւ գերութեան յաւեր ածել ձգէին, — սուէնս Հայոց, որ ըստ երեւլի մասին ընդ պարսից տէրութեան գրաւեալ կայ, ի սակս բազմանալոյ անօրէնութեանցն զմե-*

¹⁾ Ձեռագրում սրա վերևի տողի մեջտեղում իբրև արոհող վերնագիր գրված է Մասն:

²⁾ Ձեռագրում սրա վերևի տողի մեջտեղում իբրև արոհող վերնագիր գրված է Գլուխ:

ծամեծ պատուհաս ընդունէր: Զի ոչ եթէ միայն առ ի ներքուստ վրդովմանց աշխարհին ի յընդանի գաւառակից պետաց հակառակ միմեանց յարուցելոց զհարուածս սրոյ և սովու կրէր, այլ և ի հագարացոց սահմանակից պետութենէ անտի և ի լակղի թաթարացն յարձակելոց զանհամար անձանց՝ արանց և կանանց, երիտասարդաց և կուսից, մանկանց և տղայոց առհասարակ՝ զչարաշար գերութիւն և զկոտորումն ընդունէր:

§ 2 Արդ¹⁾ ի սկսանիւ չարեացս աչսոցիկ, զորս հանդերձեալ եմք պատմել, մի ոմն յորդոց անտի պարսից արքային ապրեալ ի միջոյ եղբարցն իւրոց կոտորելոց, թամազ անուանեալ, փախստական լինէր, գայր, հասանէր յեկրատանս, որ այժմ թաւրէզ անուանի: Զեւն ի գործ արկանէր զզօրս գումարել, ի մարտ պատերազմի միխի ընդդէմ աղուանից սուլտանին և զմեծ քաղաքն Շօշ, զաթոռ թագաւորութեան հօր իւրոյ, ի ձեռաց նորա թափել: Զիշխանս յիւրաքանչիւր տեղեաց յինքն ձգել ձեռն արկանէր և զխորհրդականսն առ ինքն կոչէր: Գուռն կազմէր զօրացն, որք մերձենային առ նա և էին իբրև երեսուն և երեք հազար սպառազէնք: Վաստէր, կազմէր, պատրաստէր և ի վերայ նոցա զիշխան մի, Ֆրափօտօն անուանեալ, զօրավար կացուցանէր: Եւ առաքէր ի վերայ աղուանից սուլտանին. և ինքն զտեղի առեալ անդէն ի թաւրէզ քաղաքի ամրանայլ: Եւ եղև յերթալ զօրուն և ի հասանիլն նոցա ի Համատան՝ յաւելան ի նոսա այլ բազում գունդք, և եղև իբրև յիսուն և հինգ հազար վառեալ սպառազէնք: Սաղացին անտի, գնացին տազնապաւ և հասեալ բանակեցան զՇօշաւ: Ընդդէմ ելին նոցա ազլանքն, ճակատեցան, ի զիմի հարան միմեանց երկօքին զիմամարտքն և զերեսս զաշտին զիակամբք անկելոց ծածկեցին: Ի պարտութիւն մատնեցաւ Ֆրափօտօնն, և անկան զօրք նորա սրով սուսերի, և ինքն հինգ հարիւրով միայն մագապուրծ գերծեալ փախստական դառնայլ

1) Զեռագրում սողակգրին գրված է 2:

առ շահ թամազ տէրն իւր ի թաւրէզ: || Զայն տեսեալ շահ թամազն սրտաբեկ եղև, զանի հարաւ, թէ զուցէ¹⁾ չետինն ամենայն չարեաց ի վերայ իւր հասցէ, զի ոչ մնացին առ նմա զօրք, բայց եթէ փոքր մի աւելի, քան զհինգ հարիւր սպառազէն:

§ 3 Հրեշտակս²⁾ արձակեաց շահ թամազն ի Վիրս առ Վաղզան իշխանն Մցխիթալ՝ գալ, հասանել յիւր թիկունս: Հրովարտակս առաքեաց առ նա սակ, թէ «Գոռոզն ազլանից վտարանջեաց ի տէրութենէս մերմէ. գումարեցաւ ի վերայ հօր իմոյ, էառ զՇօշ քաղաքն և սպան զհայրն իմ և զեղբարս իմ և բռնացեալ չաւեր ամէ զթագաւորութիւնն մեր: Արդ փուլթն, աճապարեմ գալ առ իս, և հասցուք վանել զկործանիչս թագաւորութեան մերոյ»: Պատասխանի արար անդէն Վաղզանն, թէ «Ոչ կարեմ անտէր թողուլ զերկիրս և գալ, քանզի և ի վերայ իմ չարուցեալ են թշնամիք ի մարտ պատերազմի»: Ընդ որ բարկացեալ շահ թամազն՝ հրաման ետ Մանձէտղուլի խանին, որ իշխանն էր միում ի կողմանցն Վրաստանի, երթալ, բռամբ ամել զնա առ ինքն: Ազդ եղև Վաղզանայ գալուստն նորա, ել արտաքս ի քաղաքէ անտի զօրօքն հանդերձ և այլ ևս բազում երիտասարդօք քաղաքին ի դաշտ տեղի և մնայր գալստեան նորա: Իբրև հետե, զի յամեաց նա, ել ի ճանապարհ՝ պատահիլ նմա, ուր և գտցէ: Եւ եղիտ զնա ի տեղի մի, որ յայլազեաց բարբառս Մուղքօրբի³⁾ անուանի: Ի վերայ յարձակեցաւ, եհար և սատակեաց զզօրս նորա և դարձաւ ի քաղաք իւր:

§ 4 Այլ⁴⁾ Մանձէտղուլին առանց զօրաց զինու փախստական եղեալ յերեսաց Վաղզանայ՝ առ լակղի թաթարսն էանց: Եւ էառ ի նոցանէ յիւր թիկունս զվեց հազար լակղի և զիմեաց գալ ի վերայ Վաղզանայ, ի մտի եղեալ

1) Զեռագրում գուցէ:
 2) » սողակգրին գրված է 3:
 3) » Սնուղ ֆօրբի:
 4) » սողակգրին գրված է 4:

2.v

յանկարծակի յեղակարծիւ զիշերայն հասանիլ ի վերայ, զզրուես քաղաքին աննիդ, անփակ դտանել և զօրօքն հանգերձ վազվաղակի ի ներքս մխիլ և դամենայն զործն չարեաց փուլթանակի ի միում ժամու վճարել: Եւ ի սոյն զործ վկաթողիկոսն վրաց օգնական իւր ւնէր, որ ի ներքուստ ի քաղաքէ անտի ծածուկ նենգութեամբ մատնտու քաղաքին լինէր: Եւ զայս չայն սակս գործել յանձն առեալ էր, զի Մահմէտղուլին, որ ուրացող ոմն էր, սմա ազնակից էր և զրով և բանիւ զգաւառն Կախեթու պարզեւել խոստանայր, եթէ մատնութեամբ սորա զՄցխէթ և զՎաղզանն ի ձեռս իւր արկանիցէ: Զի և ինքն կաթուղիկոսն յազատ տոհմէ լեալ՝ աշխարհական իշխանութեամբ ևս զաւառաց ինչ Վրաստանի ճորացեալ էր և զԿախէթն¹⁾ ևս ի վերայ այնոցիկ յաւելուլ ցանկայր:

§ 5 Յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասերորդի երկրորդի հայկազեանս թուականի [1723 թ.] յամսեանն մայիսի յաւուրն երկրորդի կաթողիկոսն այն զիրս ինչ ի ծածուկ զրեալ՝ առ Մահմէտղուլին առաքէր՝ ժամադիր, պայմանադիր նմա լինէր՝ աննիդ, անփակ զզրուես քաղաքին թողուլ: Եւ զայս նենգութիւնս նորա Վաղզանն ոչ իմանայր: Ի վերայ այսր ամենայնի յորժամ այր ոմն զլուր զործոյ և զալստեան Մահմէտղուլոյն²⁾ հասուցանէր Վաղզանայ, ի նմին ժամու կաթուղիկոսն առ նմա եղեալ՝ զբանն զայն սուտ և ընդունայն ցուցանէր, և Վաղզանն անգիտացեալ նենգութեանց նորա՝ հաւատայր նմա և անկասկած լինէր, թէպէտ և զզօրսն հանապազ ի պատրաստութեան պահէր: Քանզի ուրացօղն այն յառաջմէ վկաթողիկոսն զաղտնի նենգութեամբ զինքն թշնամի իւր և իշխանին Վաղզանալ հաւատարիմ երեկոցաննել խորհրդակցեալ էր, և նա այսպիսի խորամանկութեամբ զմիտան Վաղզանայ զողանայր: Եւ եղև ի ժամադրեալ աւուրն, մինչ չև

1) Ձեռագրում գեակերն:
2) Մահմէտղուլին:

ևուսացեալ էր օրն, հասին լակզիքն ի Մցխիթ քաղաք, ի ներքս մտին յանկարծակի և լցին զքաղաքն ամենայն: Հարին զնոսա, որք ընդգէմ ելին, և առին չաւար զստացուածս քաղաքին, զոսկեղէնս և զարծաթեղէնս և զայլ բազում ինչ, բայց զմարդագերի ոչ արարին: Վասն զի զօրքն, որք պահպանք բերդին էին, տեսեալ զամբոխն թաթարաց՝ մարտ եղին կարճել զչարխն նոցա, և նոքա այնուհետև անկարացեալք գերի վարել՝ յաւարն փութացան: Այլ Վաղզանն ի լինել խոսվութեանն այսպէս յեղակարծիւ՝ ոչինչ կարաց առնել, բայց միայն || առեալ զկինն և զորդիս իւր՝ ել ի քաղաքէ անտի յանձանօթս և փախեալ ի Մոսկովաստան: Իսկ կաթուղիկոսն, որ մատնիչն էր քաղաքին, իբրև ելին լակզիքն ի քաղաքէ անտի և մեկնեցան, ել և ինքն ընդ նոսա և զնացեալ յարեցաւ ի Մահմէտղուլին, և զօրս բազումս ժողովեցին յարձակիլ միւս անգամ ի վերայ Մցխիթալ:

3.r

§ 6 Մի¹⁾ ոմն յորդուց անտի Վաղզանալ, Շահնաւազ²⁾ անուանեալ, փախստեայ գնայր, անցանէր ի սահմանս օսմանցուց և հասանէր ի Կարին քաղաք առ Մուսթաֆա³⁾ փաշայն Կարնոյ: Զի սա ի խուճապել հօր իւրոյ ի փախչիլ՝ ոչ կարաց ընդ նմա լինել և փութացաւ ի Հոսոմաստան անկանիլ: Ընկալաւ զնա փաշայն և վազվաղակի տեղեկացեալ ի նմանէ զամենայն անցս, որ ընդ հայր նորա անցին, սուրհանդակս առաքեաց ի Կոստանդնուպօլիս առ Ահմէտ սուլտանն օսմանցուց՝ հրովարտախօք հանդերձ սսել նմա, թէ «Մի ոմն յորդուց իշխանին վրաց եկն առ իս և սսէ, թէ՛ հայր իմ նեղեալ յերեսաց թաթարաց՝ եթող զերկիր իւր և էանց ի Մոսկովաստան, և արդ եկայք, առէք զՄցխիթ քաղաքն և դուք ախրեցէք երկրի մերում»: Յայնժամ պատասխանի արար նմա սուլտանն հրովարտախօք և զօրավար կացոյց զնա ամենայն զօրացն չայնմ կողման:

1) Ձեռագրում աղասկզբին գրված է 5:
2) զ Եսան Այվազ:
3) Մուսթա:

պատուէր ետ նմա առ իւր առնել զորդին Վաղզանայ և երթալ, առնուլ զՄցխիթ քաղաք: Ել փութանակի Մուստաֆա փաշայն երկոտասան հազար զօրօք ի վերայ Մցխիթայ և էառ զնա յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի երկրորդի հայկազեանս թուականի [1723 թ.] յամսեանն զեկտեմբերի:

§ 7 Եւ ի վախճանիւ այսմ ամենայնի՝ հրաման ետ զորդին Վաղզանայ ի զգուշութեան պահել. և պահէին զնա վեց պահապանօք ի կապանս ի տան միում ի Մցխիթ քաղաքի: Դէպ եղև, զի մի ոմն ի պահապանաց անտի յազգէ վրաց էր և նա ինքն էր, որ մատուցանէր նմա զկերակուր: Եւ զայս գործ յայն սակս նմա յանձն արարեալ էին, զի սա միայն ի մէջ նոցա, որք պահապանք էին, գիտէր զվրացի խօսիլ. և որդին Վաղզանայ վրաց լեզուաւ միայն կարէր խօսիլ և ոչ իմանայր զհագարացոց բարբառն: Հրաման եղեալ էր ի փաշայէն վրացոյն այնմիկ՝ զայն սպասաւորութիւն առնել և խօսակից լինիլ նմա: Եւ եղև ի հանապազորդեան նորա ի խօսակցութիւն ընդ նմա, ի հասարակ մարդկային զթոյ և ի համազգային սիրոյ շարժեալ՝ կարեկից լինէր նմա և հնարս վասն ազատութեան նորա խորլ հէր ընդ նմա: Եւ յետ ոչ բազում աւուրց ի հասարակ գիշերի, մինչդեռ այլ պահապանքն ի քուն էին, հնարս գործեալ եհան զնա ի կապանաց և ի տանէ անտի, և փախուցեալ զերծան երկոքինն ի Մոսկովաստան: Իբրև ազդ եղև փախուտն նոցա փաշային, հեծեալս արձակեաց զկնի նոցա, այլ ոչ կարային գտանել:

[Գ Լ Ո Ս Ե Ե Ր Կ Ր Ո Ր Դ]

Թէ որպիսի մարտիւ պատերազմի առին օսմանցիք զԵրեվան:

§ 8 Իբրև¹⁾ տիրեաց օսմանցին Մցխիթայ, զընակութիւն կալաւ նստիլ անդ յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի երկրորդի հայկազեանս թուականի [1723 թ.] յամսեանն զեկտեմբերի: Յաւուրան յայնոսիկ ազդ եղև Սարու-Մուսթաֆա փաշային, թէ սուլտանն ազվանից յետ նուաճելոյ զքաղաքն Շօշ՝ հաստատեալ է ի Համատան և զէմ եղեալ է անտի այս արշաւեք: Հրովարտակս զրեաց փաշայն առ սուլտան Ահմէտն՝ իրազեկ առնել զնա, թէ «Ազվանն հանդերձեալ է յերևան գալ, և յորժամ այս լինի, այնուհետև յաջողի նմա արշաւել ի վերայ Մցխիթայ՝ հանել ի ձեռաց մերոց»: Իբրև ծանեաւ զայս սուլտանն, փութանակի զԱրդուլա փաշայն, որ մականուամբ Քօփուրլու անուանիւր, զօրավար կացոյց և առաքեաց զնա եօթանասուն և հինգ հազար զօրօք ի վերայ երևանայ:

§ 9 Եկն, եհաս նա ի կարին քաղաք և անդէն դանդի էառ ամիս մի, զի ձմեռն էր: Եւ ի ժամանել ամսեանն մարտի՝ չու արար անտի, || եկն, եհաս և բանակեցաւ նա ի տեղի մի, որ յայլազեաց բարբառս Առփայ-չայ կոչի: Եւ առաքեաց առաջի երեսաց իւրոց ք զրգիւ մարտի զերկուս յիւրոց զօրականաց անտի, որոյ միում անուն էր Եալլուզ Հասան, և ինքն էր կարնեցի, և երկրորդին՝ Ղօշ Ալի: Եւ երկոքին ունէին զօրս իբրև հազար ութ հարիւր: Այն ինչ հասին նոքա ի տեղի մի Եղեվարդ անուանեալ մերձ Երեվանայ, ազդ եղև իշխանին երևանայ, որում անուն էր

4.7

1) Ձեռագրում սողակգրին գրված է 1:

Միհրապի. և ել նա ընդդէմ նոցա երկոտասան հազար սպա-
ռազինօք: Ի դիմի հարան միմեանց երկուքին զիմամարտքն,
և յայնմ վայրի բազում վիրաւորք լերկոցունց կողմանց
անկանէին: Հարին, կոտորեցին օսմանցիքն ի զօրացն
պարտից աւելի քան զմետասան հազար սպառազէն, և մնա-
ցեալքն փախտեալ լինէին իշխանաւն հանդերձ և եկեալ
ի քաղաք անդ ամբանային և միւս անդամ ելանել ար-
տաքս ոչ իշխէին:

§ 10 Այլ¹⁾ Ղօշ Ալին և Եալղուզ Հասանն յառաջ
խաղացեալ գային, պատէին զգիւղաքաղաքն Կարբի, որ
մերձ է Երևանայ և ասպատակել կամէին: Ջախ իրրև տե-
սին կարբեցիք, զահի հարան յերեսաց նոցա և ի վերայ
ուստերաց և դստերաց իւրեանց տարակուսեալ վարանէին:
Որք աստուածասէրք էին ի նոսա, ազօթիւք առ Աստուած
պաղատէին՝ ողորմիլ, անխայել յանձինս իւրեանց և ոչ
մատնել ի սուր և ի գերութիւն զուստերս և զգստերս իւր-
եանց: Ապա զլխաւորքն նոցա խորհուրդ արարեալ ընդ
միմեանս՝ գայր մի ի միջոյ իւրեանց առաքեցին ազգ առ-
նել իշխանին Երևանայ և ասել, թէ «Ահաւասիկ զօրն օս-
մանցուց եկեալ, հասեալ պաշարեաց զԿարբի: Յեթէ կամք
իցեն տէրութեանդ, առաքեսցես մեզ զօրս ի պահպանու-
թիւն, և մեք պատրաստեալ կամք զնել զանձինս ի վերայ
քաղաքիս. ի մարտ պատերազմի ելցուք ընդդէմ նոցա և
վանեսցուք»: Այլ իշխանն Երևանայ ոչ լուաւ նոցա օգնել
ինչ, զի և անձին իւրում չէր բաւական: Եւ կարբեցիքն
գառաջինն ոչ փութացան բանս հպատակութեան առ օս-
մանցիսն առաքել, այլ աճապարեցին գտունս իւրեանց ամ-
բացուցանել և զանցս մտից գեղջն խնուլ, իրրև թէ ընդդէմ
կալոց իցեն նոցա:

§ 11 Եւ այսպէս զգուշացեալ կային յաւուրս ինչ,
մինչև եկն, Ենաս անդ Արղուլլա փաշայն ամենայն զօրօք,
զի նա էր գլուխ ընդհանուր զօրուն: Վասն զի կարբեցիքն

1) Ձեռագրում տողակորին գրված է 2:

համարէին, թէ իշխանն Երևանայ զօրս առաքէ ի պահ-
պանութիւն իւրեանց, և ոչ զիտէին, թէ նա ամենեին ան-
զօր, անզօրավիզ՝ յամբութիւն բերգին միալն ասպատանեալ
կայ: Բայց ի խնամոց Աստուծոյ եղև այս, զի Արղուլլա
փաշայն վոչ վաղվաղակի յարձակեցաւ ասպատակել զգիւ-
ղաքաղաքն, այլ նախ առաքեաց բանս խաղաղութեան խօ-
սիլ ընդ նոսա և ասել, թէ «Դուք ի սկզբանէ ի վաղ ժա-
մանակաց հետէ հպատակք էիք և այժմ ընդդէմ ամբառնայք
ընդվզիլ. զի՞ կայ ձեր զինվորի վասն երկրիս, որոյ տէ-
րութիւնն ոչ է ձեր, և ի տարապարտուց զգիւղն ձեր ի
սուր և ի գերութիւն մատնէք: Եւ արդ զարձարուք դուք
յառաջին հպատակութիւն ձեր, և ես ոչ թոյլ տաց զօրաց
խոնց առնել ինչ չար ձեզ. պահապանս եղից առ ձեզ զգունդ
մի, և ամենեին ձեզ փսաս ինչ ոչ հասցի»: Իրրև ի միտ
առին զբանս զայս առաջակայք գիւղաքաղաքին, յերկիւղէ
և ի յուսոյ տազնապեալք՝ խորհուրդ առնէին ի մէջ իւրեանց:
Ոմանք ասէին. «Մի գուցէ այսպիսի բանիւք նենգութեամբ
զմեզ նուաճեալ՝ ստեսցէ խոստման իւրում և ի գերութիւն
վանեսցէ զմեզ և զկանայս և զմանկունս մեր»: Այլք ասէին.
«Ոչ այդպէս է, այլ հարկ է մեզ հպատակ լինիլ, զի ոչինչ
կարողութիւն է մեր, և ոչ ուստէք օգնութիւն ընդդէմ կալոյ
այնչափ զօրաց բազմութեան»: Ապա հաստատեցին ի մէջ
իւրեանց այսպէս պատասխանի առնել. «Տացես մեզ, ասեն,
զաւուրս տասն, մինչև զմերս զամենեսեան ի հպատակու-
թիւն հաւանեցուցուք»: Ձիջաւ պարզամիտ բանից նոցա
փաշայն, զի ոչ կամէր զգիւղաքաղաքն ասպատակել և գեր-
կիւրն անմարդի առնել:

§ 12 Յետ¹⁾ այսորիկ առաջակայք գիւղաքաղա-
քին գայր մի առաքեցին || ի ծածուկ առ Միհրապի իշխանն
Երևանայ՝ ասելով, թէ «Մեք ահաւասիկ պաշարեցիալ ի զօ-
րացն օսմանցուց՝ առ հարկի բանս եղաք զօրագլխի նոցա
յեսա տասն աւուրց զԿարբի տալ, զի ոչ կարեմք զգէմ

1) Ձեռագրում տողակորին գրված է 3:

51

ունել այնչափ զօրաց նոցա բազմութեան»։ Իբրև լուաւ Միհրալին զբանս զայս, ոչ հաճեցաւ ընդ դաշն նոցա, այլ պատուէր ետ նոցա մարտնչել քաջութեամբ և ոչ անձնատուր լինիլ։ Եւ խոստացաւ նոցա զբարութ և զայլ պիտոյս սուսքել։ Պատճառս քաջալիքելոյ զնոսա զնէր զայս, թէ «Կաթուղիկոսն ձեր առ շահ թամազն գնացեալ է՝ հոգալ վասն վաճառաց պատերազմիս, որ ի վերայ մեր կայ. և արդ, երկայնամիտ լերուք, մինչև զլուր ինչ առ ի նոցանէ և զօգնութիւն ընկալցուք»։ Ըշմարիտ էր այս, զի Աստուածատուր կաթուղիկոսն հայոց յաւուրսն յայնոսիկ կոչեցեալ ի շահ թամազէն՝ գնացեալ էր առ նա. այլ զսոյն զայս պատճառս յուսադիր լինելոյ նոցա զնելն ամպարիշտ իշխանին՝ անօգուտ անմտութիւն էր։ Ի կորուստ անձանց նոցա վարէր զնոսա թշուառականն, զի էր օտարազգի և անհաւատ, և ոչ ինչ փոյթ էր նմա գերութիւն և կոտորումն քրիստոնեայ ազգին մերոյ։ Վասն զի եթէ հարազատ, հաւատարիմ խնամածու իցէր, զիմրդ մարթ էր նմա զնոսա այսպէս իբրև զոչխար ի սպանդ վարել։ Քանզի զԹ՛նչ համեմատութիւն էր անպարիսպ, անխրամ և անզօր գիւղաքաղաքի միոյ առ այնչափ բազմութիւն զօրացն, որք պաշարեցին զնա. թէպէտ և էին ի նմա բազումք, որք կարէին զինուորիլ։

§ 13 Այլ զլիաւորք գիւղաքաղաքին խորհուրդ արարեալ ընդ միմեանս՝ արհամարհեցին զբան նորս իրաւամբք և յանձն առին անձնատուր լինել զօրացն օսմանցւոց։ Պատրաստեցին տանել նմա զընծայս յուկոյ և արծաթոյ և յականց պատուականաց, զի հաճեցին զփաշայն։ Եւ ի ժամադրեալ աւուրն առաքեցին առ նա ի ձեռն նոցա, զորս ընտրեցին։ Ընկալաւ զնոսա փաշայն և սկսաւ հարց փորձ առնել զնոսա, թէ «Ո՞րչափ և քանի են անձինք¹⁾ ի գիւղաքաղաքի ձերում»։ Եւ նոքա ասեն. «Են արդեօք իբրև վեց հազար»։ Ապա ասէ փաշայն. «Եթէ ճշմարտիւ

1) Ձեռագրում անձին:

խոստանայք մեզ հպատակ լինիլ, հանէք յամենայն տանց և յանձանց զամենայն զէն պատերազմի և բերէք առ մեզ»։ Եւ նոքա յանձն առին այնպէս առնել։ Եւ առաքեաց ընդ նոսա փաշայն զգուհոյ մի զինուորաց և եկեալ հանին զամենայն զէն յիւրաքանչիւր անձանց և առ իւրեանս պահեցին։ Ապա խիլալս ետ փաշայն չորից զլիաւորաց գիւղաքաղաքին, որոնց միոյն անունն էր Աղաբար, երկրորդին՝ Սարգիս, երրորդին՝ Պօղոս, և չորրորդին՝ Աւագ։ Եւ պատուիրեաց փաշայն զնոյին, զոր եղ ի նմա, պահել զգուշութեամբ և ինքն պատրաստեցաւ երթալ ի վերայ Երևանայ։

§ 14 Չու¹⁾ արար Աբղուլա փաշայն ի զաշտ անտի Եղէվարդայ և եկն, բանակեցաւ ի տեղի մի հանգէս Երեվանայ՝ Սամբէկի Գալմա անուանեալ յանուանէ Չրմղոյն, որ անդ լիալ է։ Եւ որք շուրջ զԵրևանաւ գտան բնակք ի գեօղս և յագարակս, ամենեքեան փախուցեալք ի քաղաք անդ մտին։

Եւ յետ եօթն աւուրց պաշարման Երևանայ, մինչդեռ չէնն օսմանցւոց չև ևս յէջմիածին միեցեալ էր յասպատակել, եհաս հրովարտակ յօսմանցւոց սուլտանէն, յորում պատուիրէր փաշային անխայել յէջմիածին և ոչ կոխան տալ զօրաց իւրոց, պահապանս զնիլ նմա լիւրոց անտի զօրաց, զի մի ոք ինչ յափշտակիցէ անտի, կամ խուրիցէ զօր անդ յեղելոց։ Եւ եղև այս ի յաջողելոյ խնամոց գթութեանն Աստուծոյ։ Զի ի ժամանակին, յորում լինէր զօրացն օսմանցւոց ի Հայաստան միւիլ, ոմն բարեպաշտ մեծատուն ի հայոց ազգէ, Սեղբոս անուանեալ, որ իրաց պիտոյից արքունի պաղատանն ծառայելով շնորհս գտեալ էր և էր ինքն անուանի, քան զամենայն մեծամեծս հայոց, որք ի կոստանդնուպօլիս են, բարեխօս եղեալ էր վասն էջմիածնին, որպէսզի առ խնամս ազգիս հայոց և առ օգուտն արքունի հրաման տացէ սուլտանն և պատուիրեսցէ փաշային՝ ի սէջմիածինն անխայել և ոչ թոյլ տալ զօրաց իւրոց զայն։

1) Ձեռագրում տողակգրին զրված ե 4:

Յ.Վ

սուրբ տեղին ասպատակել: Եւ փաշայն, ըստ բանից սուր-
տանին հրովարտակի, զգուշացոյց զզօրսն յասպատակելոյ
և եղ անդէն գունդս զինուորաց ի պահպանութիւն: Ընդ
յայտսիկ աւուրս || Աստուածատուր կաթուղիկոսն հայոց ոչ
կայր յէջմիածինն, այլ ի Թաւրէզ առ Թամազ շահն գնա-
ցեալ էր:

§ 15 Եւ յորժամ Արդուլա փաշայն զիմէր յառաջ՝
առնուլ զբերդն Երեւանայ, նախ պատգամաւորս առաքեաց
խօսիլ ընդ նոսա բանիւք խաղաղութեան, զի առանց զինու-
մարտի տացեն զբերդն: Պատասխանի արար նմա իշխան
քաղաքին, որոյ անունն էր Միհրալի, և ասաց, թէ «Առա-
քեսցուք զբանս ձեր առ շահն մեր և, թէ հաճեսցի և հրա-
ման տացէ մեզ, տացուք ձեզ զբերդն. իսկ թէ ոչ, ոչ իշ-
խեմք մեք մեզէն տալ»: Իբրև ետես փաշայն, զի այս ոչ էր
պատասխանի՝ խաղաղութեամբ տալոյ զբերդն, պատրաս-
տեցաւ ի պատերազմ:

Ապա¹⁾ յառաջ մատոյց օսմանցին զզօրս իւր հան-
դէսլ Երևանայ պաշարել զնա և սկսաւ զդրօսն²⁾ կարգել, կա-
ռուցանել և արձակել ի վերայ բերդին:

Յայնժամ³⁾ հրաման ետ Միհրալին պարսկացն՝ եր-
թալ, խառնիլ ընդ հայսն և ի միասին մարտնչիլ: Մարտ
եղին ընդդէմ օսմանցուց զաւուրս վաթսուն և զբազումս
կոտորեցին ի թշնամեաց և ոչ ետուն նոցա մտանել ի ներքս:
Տեսեալ Արդուլա փաշային զնուազիլ իւրոցն՝ առաքեաց
ի մարս և կոչեաց անտի յիւր թիկունս. և եկին ի նոցանէ
լեռ [35,000] վառեալք ի պատերազմ, և ոչ նոքօք կարաց
յաղթել քաղաքին:

§ 16 Իբրև ետես փաշայն զհաստատութիւն քաղա-
քացուցն և զնուազութիւն իւրոցն, լքաւ այնուհետև զզօրսն
յառաջ միխլոյ: Եւ առաքեաց հրովարտակ առ սուլտան իւր
ասել, թէ «Բազում են զօրք քաղաքիս, և ի մէնջ անկան

1) Ձեռագրում տողակգրին զրված է 5:
2) » » այտեղ ու այլուրեք բով բառի փոխարեն հենց
այսպես դր:
3) Ձեռագրում տողակգրին զրված է 6:

բազումք. զի՞նչ արդեօք հրամայես առնել. առաքեա մեզ
զօրս ի թիկունս և կամ հրաման տաս դառնալ յեսս¹⁾»:
Յայնժամ սուլտանն հրամայեաց փաշային Գողահիոյ²⁾ հա-
սանիլ նմա ի թիկունս: Եւ եկն, եհաս նա տասն հազար
վառեալ զօրօք և բանակեցաւ մերձ:

Եւ³⁾ յետ երկից աւուրց ի մի վայր ժողովեալ՝ փա-
շայքն խորհեցան և ևս յառաջ մղել զզօրն և այլ ոչ թու-
լանալ: Եւ ի լուսանալ առաւօտու, յաւուրն հինգշաբթի,
յառաջ մղեցին զզօրն և մերձեցան յարձակաքաղաքն Երե-
վանայ: Եւ զի գետ մեծ կալ առաջի քաղաքին, Ջանդու-
անուանեալ, և եղև ընդ անցանեկն իւրեանց զայն գետ,
ձածկեաց բազմութիւն նոցա զերեսս անազին, ընդարձակ
գետոյն, և իբր ցամաքեալ՝ ոչ երևէր ջուր գետոյն: Եւ էանց
օսմանցին ի գետն և եհաս քաղաքին և ոչ կարաց միան-
գամալն յառաջ խաղալ, զի մարտիկքն քաղաքին մարտ եղեալ
ընդդէմ նոցա՝ արգելուին մինչև յօր հասարակ: Եւ սոքա
էին միայն հայք, քանզի պարսիկքն ընդ իշխանի քաղաքին
փախուցեալ՝ ի բերդն ամրացան և զհայսն թողին յանպա-
րիսպ քաղաքի անդ մարտնչիլ: Յայնմ աւուր երկու հա-
զարք ի քրիստոնէից ի սուր անկան: Եւ գլխաւորք պատե-
րագմողացն հայոց էին սոքա. Հունդիրեկեան Յովհաննէսն,
Բիչիրէկեան Պօղոսն, Կառչիկ Յովհաննէսն և Միրզէջանեան
Դաւիթն:

§ 17 Վարդապետ⁴⁾ ոմն էր ի քաղաքի անդ, Գրի-
գոր անուամբ, սա մտեալ ի վանս սրբոյն Սարգսի, որ ի
Ջորագիւղ անուանեալ թաղի անդ է, զբազմութիւն ժո-
ղովրդեանն հայոց կոչեալ ժողովեաց յայն վանս, և յառաջ-
նում ժամու գիշերոյն սկսան խորհուրդ առնել մեծամեծքն
ընդ վարդապետին և ասեն. «Զի՞նչ արասցուք. վաղիւն զմեզ

1) Ձեռագրում գրից արդեօք... դառնալ յեսս հասկածը զբաժ եր
փակագծերի մեջ:
2) Ձեռագրում Գողահիոյ:
3) » » տողակգրին զրված է 7:
4) » » տողակգրին զրված է 8:

զամենեան ի սուր սուսերի մաշէ օսմանցին և զկանայս և զմանկունս մեր ի գերութիւն վարէ»: Եւ խորհեալ¹⁾ հաստատեցին ի մէջ իւրեանց առնել, զոր կարևոր տեսանէին ի փրկութիւն անձանց իւրեանց և զաւակացն: Ի քաղաքի անդ ի տեղին, որ Կոնդի թաղ անուանիւր, էին քրիստոնեայք փօշայք²⁾, և [100] տուն, մեծատունք և քաջասիրտք, վարժք զինու պատերազմի: Եւ նոցա զլիաւորք ի ժամանակին յայնմիկ էին սոքա. առաջինն էր պարոն Ղազարոսն Բարսեբան, երկրորդն էր պարոն Կլղուզն, երրորդն էր պարոն Դաւիթն, չորրորդն էր պարոն Բէյրամն, և հինգերորդն էր պարոն Պետրոս: Սոքա և այլքն առնասարակ կոչեցեալք՝ եկին, ժողովեցան առ Գրիգոր վարդապետն: Յայնժամ ժողովուրդքն վարդապետուն հանդերձ լալազին ազադուկեցին || առ նոսա յօգնութիւն հասանել, զի կարացեն զանձինս իւրեանց և զկանայս և զմանկունս զերծուցանել յանօրինաց, որք հասեալ, պատեալ, պաշարեալ տազնապեն և յարձակեն յաւար հարկանել: Պատասխանի ետ Ղազարն և ասէ ցվարդապետն. «Վարդապետ, անաւասիկ ես զերկու հարիւր քաջամարտիկ երիտասարդս ունիմ, որոց ամենեքեան ունին զզէնս և վարժք են սրոյ և հրացանաց արձակելոց: Ըզնոսս ես ժողովեցից և նոքօք հանդերձ ոգւով չափ պատերազմեցայց»: Զհետ Ղազարու և այլ մեծամեծք հայոց խոստացան զնոյն առնել: Որք էին՝ Ունդուրէկեան պարոն Յօհանն, պարոն Փերիզուլն, պարոն Արզումբէկն, պարոն Թաղէոսն, պարոն Միլունն, պարոն Միլրտիչն, պարոն Մալխասն, պարոն Նիկողայոսն, պարոն Սրապիոնեան Աւետիսն, պարոն Ազազատէն, պարոն Նուրին, պարոն Զօհրապն, պարոն Ալէքսանն, պարոն Ազամն, պարոն Գալուստն և պարոն Երամն:

7.1

1133


4334
 4776
 1622

§ 18 Սոքա ամենեքեան միարան ի միասին խորհուրդ արարեալ ժողովեցին զընտիր ընտիր երիտասարդս

1) Չեռագրում խորեալ:
 2) Բոսայք բառի փոխարեն հենց այսպես փոսայք:

ի գիւղօրէիցն Երեւանայ և եղեն ինն հազար վառեալք ի պատերազմ ի Փարաքարայ, ի Գուգոււմբեթայ, ի Կաւակերտայ, ի յԱռընչոյ¹⁾, ի յԱւանայ²⁾, ի Չագայ և ի նորա գեղջէ. զի ամենայն այլ կարող պատերազմի գիւղօրէիցս այսոցիկ եկեալ ժողովեալ կային յարձակաքաղաքն³⁾ Երեւանայ: Այլ և ի քաղաքէ անտի Երեւանայ ի թաղէն, որ Հին Երեւան կոչի, ժողովեցան բազում խումբք երիտասարդաց վառելոց ի պատերազմ, որոց կառավարքն էին զօտէմարտիկ Նիկողայոսն, Մարիամին⁴⁾ որդի Անտոնիոսն և Պաթունին⁵⁾ որդի Բութիկն և տէր Մովսէսն: Եւ ամենեցուն զումարն եղև ինն հազար չորս հարիւր քառասուն և երեք սպառազէն քաջ պատերազմողք, ամենեքեան վառեալք սուսերաւ և թվանկաւ: Սոքա ամենեքեան զկանայս և զմանկունս և զարս անպէտս մարտի ի տունս իւրեանց թողեալ՝ եկին, զումարեցան կառավարչօքն իւրեանց հանդերձ ի թաղ մի Երեւանայ, որ Չորսգիւղ անուանի, պատերազմել վասն անձանց և վասն կահանց և որդւոց իւրեանց: Եւ բաշխեցին իւրաքանչիւր թաղից զունդս զունդս՝ պահել զմուսս ճանապարհաց քաղաքին: Եւ կալին պատրաստութեամբ, զի եթէ ի ներքս միեցցին զօրքն թշնամեաց, պատերազմեցին, իսկ եթէ ոչ, զտեղի կալցին: Զի շուրջ զքաղաքաւն էին այգիք և ծառատունկք ուռեաց բազում խիտք, զորս ի վաղ ժամանակաց տնկեալք էին լինիլ ի պահպանութիւն, ի պատսպարութիւն⁶⁾ քաղաքին: Իսկ և սրտաքոյ ծառաստանացն էր մեծ գետն Զանգու, և վասն ամին իրի զօրն օսմանցւոց զանդիւտէր միանգամայն ի քաղաք անդ մխիլ, զի ի մէջ խիտ ծառաստանաց անհնար էր զզէնս ի գործ արկանել, այլ զտեղի

1) Չեռագրում ի Յարեցոյ:
 2) ի Յաւանոյ:
 3) յարձակաքան:
 4) Մարիամեան:
 5) Խարսեան:
 6) ի պահպարութիւն քրիստոնէական և փակագծերի մէջ:



առեալ յայնկոյս դետոյն՝ զգորս արձակէլ ի վերայ քաղաքին և զհնարս խնդրէր յառաջ ընթանալոյ: Եւ երբեմն երբեմն ըստ մասին յառաջ մխիւր, ոչ ընդ իւրաքանչիւր կողմն քաղաքին, այլ ընդ կողմն Չորագեղջ, ընդ որ կողմն նուազ էր ծառատունկ:

§ 19. Իսկ իշխանն Երեվանայ և ամենայն մեծամեծք նորա ի ներքս ի բերդի անդ կային և անտի զգորս արձակեալ պատերազմէին: Սակայն յետ մերձենալոյ զօրացն օսմանցւոց ի քաղաք անդ՝ աչնուհետև զորքն նոցա առ ոչինչ օգտէին, զի դորքն ի բարձուստ արձակեալ զառաջիկայ մերձաւորսն ոչ կարեն հարկանել, այլ զպատշաճ հետակայս: Իշխանն Երեվանայ առեալ էր ի ներքս յամրոցն Երեվանայ ի մեծամեծացն հայոց զերկոտասան անձինս ամենայն տամբ նոցա, որոց զլիաւորք էին — մէլիք Սահակն՝ մէլիք Աղամալի որդին և եղբայր նորա Աղայ-Վէլին, պարոն Կարապետն, Միքայէլ Բարխուդարեան և Բաբաջանն Մոծակեան և այլք ընդ սոսա:

§ 20. Արդ, իբրև այսպէս պատրաստութեամբ կային քրիստոնեայքն արտաքոյ բերդին, եկին և այլ երեք հազար զօրք լիպիպոսացւոց || կուսէ յօգնութիւն օսմանցւոց և բանակեցան առ նոցա զիւրիւ առանձին: Եւ լեալ սոքա յանդընադոյսս քան զառաջինսն՝ առանց կարգի և հրամանի դքսին իւրեանց Արդուլայ փաշայի՝ զազանաբար յարձակեցան յառաջ՝ ի քաղաք անդ մխիլ ընդ կողմն Չորագեղջ, և զհետ նոցա այլք ևս բազումք յառաջնոցն խառնադանջք: Համարէին սոքա զզորոն յաղթութեան ինքեանք միայն վճարել և առանձին զանուն և զփառս քաջութեան ժառանգել, միանգամայն և աւարին յառաջ քան զառաջին զօրսն հասեալ ի վերայ՝ զչար ցանկութիւնս իւրեանց լիպոսն ընու: Եւ եղև ի մխիլն նոցա ի թաղն Չորագիւղ անուանեալ՝ տկարացան մարտիկքն, որք անդ կային, և փախեան յերեսաց նոցա մինչև ի թաղն Աղօրեաց: Ազդ եղև բոշայիցն, որք յայլ թաղս կային, եկին, հասին անդ երեք

հարիւր միանգամայն և մարտ եղեալ սրով և թվանկալ՝ յաղթեցին թշնամեաց խնամօքն Աստուծոյ և կոտորեցին ի նոցանէ զվեց ո [6,000] և զմնացեալսն ի փախուստ դարձուցին: Զի տեղին, ուստի մարտնչէին քրիստոնեայքն, էր բարձր, և տեղին թշնամեացն էր ցած: Բայց յայնմ աւուր անկան ի քրիստոնէից ոգիք իբրև հազար և երեք հարիւր: Տեսեալ Արդուլայ փաշայիս զանկարգութիւն եպիպոսացւոց բարկացաւ սրտմտութեամբ և պատուէր ետ իւրոցն՝ առանց հրաման տալոյ իւրոյ մի ոք յառաջ խաղալ:

§ 21. Հրաման ելեալ էր ի սուլտանէն առ Սարու Մուստաֆա փաշայն և առ Ռաջար փաշայն երթալ ի վերայ Երեվանայ, նիզակակից, մարտակից լինել Արդուլայ փաշային, և նա զիտէր, զի զալոց էին: Ազդ եղև Արդուլայ փաշային, թէ անա Սարու Մուստաֆայն և Ռաջարն մերձ են հասանիլ: Այլ նա, մինչ չև¹⁾ եկեալ էին, միւս անգամ լաւաւ մղեաց զզօրսն ընդ կողմն, որ կոնդի թաղ կոչի: Յայնմ ժամ զունդքն հայոց անապարեցին լայն կողմն՝ զղէմ ունիլ նոցա, մարտ եղին քաջութեամբ, հարին զնոսս և ի բաց դարձուցին: Յայնմ նուազի չորեք հարիւր սպառազէնք ի հայոց անտի և քառասուն բոշայք եղեն խոցք և անկան ի մահինս, այլ ոչ մեռան: Յայնմ հետէ այլ ոչ ևս յաւել զօրն օսմանցւոց յառաջ մխիլ մինչև ի գալ երկուց փաշայիցն, զորս ասացար, ²⁾ լր [38] հազար զօրօք: Եւ եղև յետ հասանելոյ նոցա խորհուրդ արար ընդ նոսս Արդուլայ փաշայն ի չորից կողմանց յառաջ մղել զզօրսն և անդու մարտնչիլ և ոչ թոյլ աալ զօրուն յետս ընկրկիլ:

§ 22. Իբրև լուան քրիստոնեայքն, զի երկու փաշայքն ևս եկին, չաւելան ի զօրս օսմանցւոց և լամենայն կողմանց իբրև զաւազ ծովու բազմութեամբ պատեալ, պա-

1) Չեռագրում միևնեւ:
2) «... ասացաք բառից հետո նշան ե գրված և ձախ լուսանցքում արված ե յերկտող հազելում. [...] եկին հա- [... = սին?]

շարեալ սպառնային պինքեանս կլանել, զահի հարան յերեսաց նոցա, զի գիտացին այնուհետև, թէ որչափ և կոտորեցին նոքա, այլ զհետ նոցա գալ և լնուլ զտեղիս նոցա ոչ պակասին: Իսկ զայս ինքեանց առնել ոչ էր հնար, որովհետև ի քաղաքի անդ փակեալ, պաշարեալ կային լամենայն կողմանց իբրև զձկուռնս ի ցանց. ոչ ուստեք էր լոյս նպաստութեան: Ժողովեցան առ Գրիգոր վարդապետ և ասեն. «Զինչ արասցուք, զի թշնամիքն օրըստօրէ զբազմութիւն իւրեանց առաւելուն, և մեք օրըստօրէ պակասեալ նուազիմք»: Պատասխանի ետ վարդապետն և ասէ. «Հրեշտակս արձակեցուք առ նոսա խօսիլ բանս հպատակութեան և խնդրեցուք զհաշտութիւն»: Եւ ասեն. «Զ՞ առաքեսցուք առ նոսա»: Զի երկնչէր իւրաքանչիւր ոք զայս յանձն առնուլ: Քանզի յալլում նուագի Յարութիւն անուամբ ոմն առաքեցաւ ի նոցանէ և մինչ չև էր հասեալ նորա առ փաշայն՝ կալան զինուորքն և սպանին, վասնզի զինուորացն, որք զքաղաքն լաւար առնուլ ցանկային, ոչ էր հաճոյ հաշտութեան պատգամաւորութիւնն:

§ 23 Ապա մի ոմն ի նոցանէ, Ախիջանեան Միրզէ անուանեցեալ, յառաջ մատեաւ զնել զանձն ի փրկութիւն հասարակաց և ասէ. «Ես վասն սիրոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յանձն առնում զնալ ի պատգամաւորութիւն, և եթէ սպանցեն զիս, յօժարութեամբ մեռայց. իսկ եթէ ապրեցայց, հասից առ փաշայն և զոր ինչ || յանձնէք ինձ առ նա խօսիլ, խօսեցայց»: Ապա հանդերձեցին զնա ընծայիւք և արձակեցին. զնաց ընդ նմա և ծառայ նորա: Իբրև աշխարհ մերձ եղև ի բանակն օսմանցւոց, յարձակեցան ի վերայ նորա զինուորքն, կալան զնա և տարեալ խոտորեցուցին ի տեղի մի և փողոտեցին: Իբրև ետես ծառայն զանցս տեառն իւրոյ, փախեաւ և ի պնդիլ զինուորացն զկնի նորա՝ ընկէց զինքն ի լեռնէն բարձու ի գետն Զանգու և խնամօք տեառն ապրեալ եհաս առ առաքիչսն իւր, պատմեաց նոցա զամենայն անցս, որք ընդ տէր իւր անցին, և ասէ. «Աւա՞ղ մեզ քրիստոնէիցս, զի մեղք մեր մե-

9.1

ծամե՞ք բազմացեալ են և անարժանս առնին զմեզ ողորմութեան Աստուծոյ»: Յայնժամ ձայն բարձեալ ժողովրդեանն՝ ողորմք մե՞ծաւ աղաղակեցին առ Աստուած քաւիչ լինել և մի արգելուլ զողորմութիւն իւր ի քրիստոնէից և կոծեցան ի վերայ սպաննեցելոյն: Ապա վարդապետն այն ժողովեալ զժողովուրդն յեկեղեցին՝ մատուց զպատարագ և խոստովանութեամբ մեղաց իւրեանց պատրաստեցան և հաղորդեցան ի կենարար մարմնոյ և յարենէ տեառն մերոյ և կային յիւրաքանչիւր տեղիս պատրաստութեամբ, ուր պիտոյ էր կալ:

§ 24 Եւ եղև ի վաղիւ անդր, որ օրն էր ուրբաթ, զօրքն օսմանցւոց ի չորս առաջս բաժանեալք մխեցան ի քաղաքն ի չորից կողմանց: Եւ մարտ եղեալ չառաւօտէ մինչև ցերեկոյ, սոքա՛ աստի, և նոքա՛ անախ, խառնեցան ընդ միմեանս հայքն և օսմանցիքն. և այնչափ եղև հեղումն արեան, մինչև կարմրանալ Զանգու գետոյն և երկրին, որ առ գետովն. և հոտ արեանց և զիականց կոտորելոցն զքաղաքն բովանդակ մինչև ի հեռաւոր տեղիս լցին: Եւ առաւ քաղաքն յեթիներորդում աւուր ամսեանն յունիսի, յամին հազար հարիւր եթանասներորդի երրորդի հայկազեանս թուականի [1724 թ.]: Կոտորեցան հզօրքն հայոց ի սուր սուսերի և զետահեղձ եղեն բազումք ի նոցանէ: Ի գերութիւն վարեցին օսմանցիքն զկանայս նոցա և զմանկունս և տարեալ լցին զնոսա ի բանակս իւրեանց և շար գործովք ապականեցին զնոսա:

§ 25 Եւ այս զիմրդ մարթ էր լինիլ, եթէ ոչ մատնեաց զնոսա Աստուած ի ձեռս անօրինաց: Եւ է՞ր աղազաւարդեօք մատնեաց զնոսա Աստուած, զորս արեամբ Միածնի իւրոյ զնեալ և սրբեալ, չորդեգրութիւն իւր ընկալեալ էր: Ոչ ի յօժարութենէ իւրմէ մատնեաց Աստուած, այլ մեղք և անօրէնութիւնք նոցա բռնադատեցին զարդարութիւն նորա, քանզի բազմացան մեղք և անօրէնութիւնք նոցա և բողոքեցին յերկինս: Եւ զի՞նչ էր պատճառն բազմանալոյ մեղաց նոցա: Այս իսկ էր, զի կարգաւորք և աշխարհականք առ հասարակ ի բաց թողեալ զուսումն աստուածային պատուի-

րանացն և այլ մասանց քրիստոնէական վարդապետութեան՝ զբարւոք պարիլն ըստ մարմնոյ միայն հոգային: Եւ թէպէտ օրբստօրէ ժամակարգութիւնք և պատարագք լինէին յեկեղեցիս, սակայն զայս ամենայն տխմարութիւն առանց ծանօթութեան իմանալի խորհրդոցն և առանց ներքին աստուածաշարութեան կատարելին: Եւ միով մեկին բանիւ ասեմ, թէ նոքա առ հասարակ միայն զտուրք կնիքն քրիստոնէական ունէին յոգիս իւրեանց և անուամբ միայն և արտաքին իրօք միայն զքրիստոնէական կրօնս պահէին, իսկ զներքինն, որ է ճանաչումն ամենասուրբ երրօրգութեան և մարդեղութեան բանին և փրկարար գործոց նորա և կրից ըստ պատշաճեալ իւրեանց չափուն ոչ ունէին և ունելոյ անփոյթք էին և ոչ գէթ ըղձային ճանաչել կամ ուսանիլ: Եւ վասն այսորիկ մի ոք զարմասցի, թէ զիւրդ Աստուած թոյլ տայ անհաւատից զայսպիսիս չար գործովք ապականել և ի հաւատոցն ուրացուցանել, վասնզի որ զԱստուած ոչ ճանաչէ և զՔրիստոսի անօրէնութիւնան և և զպատուիրանսն ոչ իմանայ և անփոյթ է ուսանիլ, այնպիսին թէպէտ և ոչ զայսպիսի՝) անցս կրեացէ, անպիտան է ի հաւատս և արժանի է ընդ մէջ կտրելոյ և զբաժին նորա ընդ անհաւատսն զնելոյ:

10. v

§ 26 Իսկ իշխանն Երեւանայ և որք ընդ նմա մեծամեծքն պարսից և հայոց ի բերդի անդ ամրացեալ կային, իբրև այս ամենայն իրք եղեն, լքան, լուծան, պարտասեցան և հատան ի յուսոյ զբերդն ի ձեռս իւրեանց ունելոյ և այնուհետև զանձինս իւրեանց միայն ապրեցուցանել հոգային: Յառաջ քան զաւուրս || զայսոսիկ, մինչդեռ մարանչէր օսմանցին ընդ քաղաքին Երեւանայ, շահ Թամազն, որ կայր ի Թաւրէզ, ել անտի վեց հազար զօրօք գնալ ի Սօրասան պարսից, զի զանգիտէր այնչափ զօրօք գալ հասանիլ ի պաշտպանութիւն Երեւանայ քաղաքին: Եւ յեւանել իւրում անտի զկաթողիկոսն Աստուածատուր,

1) Ձեռագրում պայսպիսի:

զոր առ իւր ունէր, որպէս ի վեր անդր պատմեցաք, արձակեաց յիւրմէ զնալ յէջմիածին: Իբրև եհաս նա անդ, լուաւ վասն նորա Աբղուլա փաշայն և առաքեաց, կոչեաց զնա: Եւ իբրև եկն նա, ընկալաւ զնա պատուով և հրամայեաց նմա զհանդերձ շքոյ զպեցուցանել և նստոյց զնա առ իւր և խօսեցաւ ընդ նմա բազում քաղցրութեամբ: Եւ զերիս աւուրս շքով մեծաւ պահէր զնա ի բանակի անդ: Յետ այնորիկ խօսել սկսաւ ընդ նմա վասն իրաց առաջիկայ պատերազմին և ասէ ցնա: «Զինչ արասցուք, զի յետ այսչափ նուաճելոյ մերոյ զքաղաքս գայս, նոքա, որք ի ներքս ի բերդի անդ ամրացեալ կան, զեռ ևս պնդեալ են պահել զնա և ոչ տան մեզ, զի խաղաղութիւն լիցի»: Պատասխանի ետ կաթողիկոսն և ասէ. «Փոքր մի ևս համբեր, և ես զնացեալ խօսեցայց ընդ նոսա և հրահանգեցից զնոսա ի հնազանդութիւն, և տացեն զբերդն»:

§ 27 Իբրև զնաց, մատեաւ կաթողիկոսն առաջի բերդին, աղջ եղև իշխանին, թէ կաթողիկոսն եկեալ կայ առաջի բերդիս: Եւ առաքեաց նա զմի ոմն յառաջակայից իւրոց խօսիլ ընդ նմա ի ներքուստ և հարցանել, թէ վասն որոց իրաց եկեալ իցէ և զինչ լուր ունիցի ի շահ Թամազէն: Եկն, եկաց նա ի տեղին խօսելոյ, եհարց ցկաթողիկոսն և ասէ. «Վասն որոց իրաց եկեալ ես, և զինչ լուր է ի շահէն մերմէ»: Պատասխանի ետ կաթողիկոսն, թէ «Ձեզ անտի նպաստութիւն ինչ լինելոյ ոչ զոյ ինչ յոյս, այլ դուք ձեզէն զօգուտն անձանց ձերոց խորհեցարուք»: Իբրև լուաւ զայս իշխանն, յոյժ տրամեցաւ և աւաղս և եղուկս կարգաց անձին իւրում և ելաց: Եւ առաքեաց զեւրիս ի մեծամեծացն հայոց, զորս առ իւր ունէր, զկարապետն, զՍահակն և զԱնտոնն և ասէ. «Գնացէք, տեսէք, զինչ կամի բանիւն այնու ծանուցանել մեզ կաթողիկոսն ձեր»: Իբրև եկին, պատմեաց նոցա կաթողիկոսն զիրս շահ Թամազին և եցոյց նոցա զխաղաղութեան բանսն փաշային, թէ «Սոստացաւ խաղաղութեամբ արձակել զձեզ, եթէ

խաղաղութեամբ տայցէք նմա զբերդն»։ Եւ երթեալ պատմեցին զբանս զայս իշխանին, և կաթուղիկոսն գնաց անտի պատասխանի առնել փաշային։ Եւ խնդրեաց զաւուրս ինչ լեւել, մինչև խորհեացին, և ինքն զնոց յէջմիածին։

§ 28 Յայնժամ իշխանն զմեծամեծս իւր ժողովեաց ի խորհուրդ, թէ զինչ արասցեն։ Եւ եղև ի խորհելն նոցա մի ոմն ի նոցանէ, որոյ անունն էր Մէժլումբէկ, ասէ. «Ինձ թուի, թէ հարկ է մեզ տալ զբերդն, և լաւ լինի մեզ դաշամբ ազատութեան անձանց մերոց տալ զնա, քան ընդդիմանալ նոցա յաւուրս ինչ և կորուսանել միանգամայն զսա և զանձինս մեր»։ Պատասխանի ետ և այլ ոմն ի բազմեկոցն, որ Չէրչի-բաշի անուանեալ էր, և ասէ. «Եթէ տայք օսմանցուց զբերդս զայս, ստուգիւ գիտասջիք, զի գտունս մեր աւար հարկանեն և զընտանիս մեր ի գերութիւն վարեն. վասնզի թէպէտ և այժմ ազատ արձակել զմեզ խոստանան, բայց յետ տալոյ մերոյ զբերդն՝ ստեն»։ Ապա ետ պատասխանի և այլ ոմն ի նոցանէ և ասէ. «Ոչ այդպէս, այլ զկաթուղիկոսն հալոց ի ներքս առցուք՝ տեղեկանալ միւս անգամ ի նմանէ վասն իրիս ախորիկ»։ Յայնժամ Միհրաբին զբանս զայստսիկ, զորս ասացին առաջակայքն իւր, եղ առաջի մեծամեծացն հալոց, զորս ի բերդն ընկալեալ էր, և ասէ, թէ «Այսպէս և այնպէս ասացին պարոնայքն մեր վասն բերդիս և վասն անձանց մերոց. և արդ դուք զինչ ասէք»։ Պատասխանի ետուն նորա և ասին. «Հրամանքն քո է»։ Ապա ասէ Միհրաբին. «Առաքեսցուք զոմն բերել զկաթուղիկոսն առ մեզ»։ Բայց ոչ զուք¹⁾ ի պարսկաց անտի համարձակեցան յղել, քանզի ստուգիւ գիտէին, զի օսմանցիքն ընդ գտանելն զուք ի պարսկաց անտի արտաքոյ բերդին՝ նոյն ժամայն խողխողեն։

§ 29 Ապա սահմանեցին զմի ոմն ի հայոց անտի առաքել հրովարտակօք առ փաշայն և խնդրել ի նմանէ, զի զկաթուղիկոսն հայոց միւս անգամ ի բերդն յղեսցէ, որպէսզի միջնորդութեամբ նորա || զաշն խաղաղութեան հաս-

11.7

1) Չեռազբում զոչ ոմ:

ստտեցի։ Եւ հանդերձեցին զպարոն Անտոնն առաքել և իջուցին զնա առասանաւ ի պարսպէ անտի ի վայր, զի զդրունս բերդին ոչ կամէին բանալ, թէպէտ և սպիտակ նշանակն խաղաղութեան արդէն կանգնեալ էին ի յամբարտակի անդ բերդին։ Իբրև գնացեալ մերձեցաւ նա ի բանակն օսմանցուց, հասին ի վերայ նորա ոմանք ի զօրուէն և ածին զնա առ փաշայն, թէ «Դու ուստի ես և մեր ուղղեալ էիր զնալ»։ Պատասխանի ետ Անտոնն. «Ի բերդէ անտի առաքեսցեալ եմ բերել զգիր առ վսեմութիւնդ»։ Եւ հանեալ զգիրն ետ ցփաշայն։

Իբրև ծանեաւ փաշայն զգրեալսն, առաքեաց վաղվաղակի ի զօրականաց իւրոց յէջմիածին՝ բերել զկաթուղիկոսն առ իւր։ Իբրև եկն կաթուղիկոսն և եկաց առաջի, հրամանս ետ նմա փաշայն բազմել և խօսեցաւ ընդ նմա և ասէ. «Միհրաբի խոսն խնդրէ զքեզ. երթ առ նա և տես՝ զինչ բանք են նորա առ մեզ»։ Եւ եկն կաթուղիկոսն ի դուռն բերդին։

§ 30 Առին զնա ի ներքս և ածին յապարանս իշխանին։ Եւ ամենայն մեծամեծքն պարսից և հայոց ժողովեցան անդ և ակն կալեալ սպասէին բանից նորա, որպէս զի զիւրդ ինչ առնել ցուցցէ նա վասն զանձինս իւրեանց սպրեցուցանելու, այնպէս առնիցեն։ Ապա կաթուղիկոսն բազում բանիւք յուսադիր արարեալ զնոսս՝ հաւանեցոյց հաւատալ խոստման փաշային և տալ զբերդն։ Եւ առեալ ի նոցանէ զբանս տալու բերդին՝ ել, գնաց առ փաշայն։ Եւ մատուցեալ նմա զպատգամս նոցա՝ աղաչեաց զփաշայն զղաշինս ազատ արձակելու զնոսս հաստատել։ Յանձն էառ զայս փաշայն և խիլալս պարգևեաց կաթուղիկոսին։ Ապա կարգեաց զզօրս իբրև վերիս հազարս՝ երթալ ընդ կաթուղիկոսին, մատուցանել զգիրն հաշտութեան և մտանել ի բերդն։ Գնաց կաթուղիկոսն կարգեալ զինուորօքն, մերձեցաւ ի բերդ անդ և մատոյց նոցա զգիրն։ Առին նորա զգիրն և տեսին՝ զինչ գրեալ էր և բացին նոցա զդուռն։ Եւ յառաջ

եմուտ ի ներքս կաթուղիկոսն, և զօրքն զկնի: Եւ փութացեալ զինուորացն՝ կալան զզօրսն բերդին պահել: Կաթուղիկոսն նստաւ ի հրապարակի բերդին, մինչև ամենայն զօրքն օսմանցւոց ի ներքս մտին խաղաղութեամբ: Ասլա էլ, զնաց Միհրալի խանն, և կաթուղիկոսն ընդ նմա՝ լանդիման լինել փաշային և յարգել զնա առաջակալիւք և զօրագլխօք իւրովք հանգերձ: Եւ ընկալեալ եղև Միհրալի խանն ի փաշայէն համբուրիւ խաղաղութեան: Հրաման ետ փաշայն, զի ամենայն պարսիկքն ի բերդէ անտի արտաքս ելցէն: Եւ ամենեքեան ելին: Եւ ապա ասէ՝ թէ՛ «Զլասուսմբէկն, զՇահլիրէկն և Արասալիրէկն ի Կ. Պօլիս առաքելոց եմ, քանզի խնդրեաց զսոսա Ահմէտ սուլտանն մեր»: Եւ էառ զերիս գայսոսիկ և եզ զնել ի քուրձ մի և հրամայեաց ընկենուլ ի Զանգու գետն և այնպէս կորոյս զնոսա: Իսկ զՄիհրալին և զայլ առաջակալս խաղաղութեամբ արձակեաց՝ երթալ ուր և կամեսցին: Եւ յետ վճարելոյ ամենայնի և խաղաղելոյ զօրացն օսմանցւոց՝ զնաց կաթուղիկոսն յէջմիածին:

[Գ Լ Ո Ւ Ն Ց Ե Ր Ո Ր Գ]

Թէ՛ որպիսի մարտի պատերազմի խոյ¹⁾ և Թաւրէզ Վաղաբ²⁾ պարսից առան յօսմանցւոց³⁾:

§ 31 Յամին⁴⁾ ոննգ հայկազեանս թուականի [1724 p.] ի զ[6] աւուր նոյեմբերի եհաս հրովարտակ յօսմանցւոց սուլտանէն առ Արդուլլա փաշայն՝ երթալ ի վերայ Դաւրէզու: Եւ սկսաւ կարգել զզօրսն ամենայն պիտոյից պատրաստութեամբ: Եւ ի լրանալ ամենայն պատրաստութեանցն ել ի ճանապարհ՝ զնալ ի վերայ Թաւրիզու յամսեանն փետրուարի յամին ոննգ [1725 p.]: Եւ յառաջ եհաս նա ի գաւառն Սոլայ: Եւ եղև ի մերձենալ նորա ի Սոյ՝ ամենայն պարսիկք զիւզօրէիցն նորա փութացեալ մտին ի բերդն Սոլոյ, ուր էին մտեալ և հայք բազումք: Եւ լորժամ ի պաշարման եղեալ նեղեցան և տագնապէին, ոմանք լառաջակալիցն հայոց կամէին, զի տացի բերդն, իսկ պարսիկք բարկացեալ ընդ այն՝ խորհէին զհայսն կոտորել և կորուսանել ի միջոյ իւրեանց: զի ասէին, թէ՛ «Ոչ կամիմք օսմանցւոցն տալ զբերդն»: Եւ || լուռ եղեն հայքն: Այս օսմանցին զդրսն կառոյց ընդդէմ բերդին և դաւուրս խ [40] արձակեալ՝ զբազում աւերս և զկոտորումն էած ի վե-

12.v

1) Ձեռագրում խոյա:

2) " Բաղաբ:

3) " սրանից հետո նոր սողի վրա իրբն սրահող վերնազիր զրված ե զլուխ Գ:

4) Ձեռագրում այս սողի դիմաց այլ լուսանցքում գրված ե քառասող հավելում. Յամին Թ [....]
 ճեցալ [....]
 նուրբամբ Օս [....]
 անդէն գ [....]

րայ նորա: Ապա զգորսն յառաջ մղեաց միանգամայն և եմուտ ի քաղաք և էառ զբերդն: Եւ մինչև ցվեց ժամ կոտորելով սրով սուսերի զհակամարտսն, որք էին պարսիկք, ելից դիակամբ զբերդն. և զքրիստոնեայս գերի վարեաց: Եւ յետ նուաճելոյ զբերդն Սոլայ՝ զիք [28] օր եկաց անդ փաշայն օսմանցւոց և յետ այնորիկ ի մասնէ զօրաց իւրոց պահապանս կացուցեալ ի բերդի անդ՝ խաղացոյց անտի զգորսն՝ գնալ ի վերայ Թաւրիզու:

§ 32 Ընդ այն աւուրսն Հասան փաշայն առաքեցաւ ի Համատան, որպէս ցուցանէր զայս հրովարտակն, որ եհաս Արդուլլա փաշային ի սուլտանէ իւրմէ. չորում գրեալ էր, թէ «Հրաման հոռու Հասան փաշային՝ երթալ ի վերայ Համատանայ»: Եւ ինքն Արդուլլայն, որ ուղղեցաւ գնալ ի Թաւրէզ, երթայր յուշիկ՝ նուաճելով զգաւառսն, յորս հասանէր: Եհաս ի Մարանդ գիւղաքաղաք, որոյ բնակիչքն համբաւեն, թէ թաղեալ կայ մայրն Նոյի¹⁾, և էառ զգաւառն զպն բովանդակ: Եւ անտի յառաջ խաղայր, գնայր և գնալով եհաս ի Սօֆիան²⁾ գիւղաքաղաք և եղիտ գնա անմարդի, ամայի լեալ ի բնակչաց իւրոց, զի բնակիչք նորա առեալ զլուր կոտորածի և գերութեան Երևանայ՝ փախուցեալք էին ի Թաւրէզ: Յետ սորա եհաս ի տեղի մի Շօր ջուր անուանեալ, որ մերձ է Թաւրէզու: Ազգ եղև իշխանին Թաւրէզու, որոյ անունն էր Ալայ-զոչի: Եւ ընդդէմ նմա բազում զօրօք և մարտեաւ ընդ Արդուլլա փաշային, ի պարտութիւն մատնեցաւ նա, և անկան ի զօրաց նորա իբրև ժո [10,000]: Եւ ինքն մնացեալ զօրօքն ի փախուստ դարձեալ՝ եմուտ ի Թաւրէզ քաղաքն և անդ ամրացաւ:

§ 33 Իսկ զօրքն օսմանցւոց յառաջ խաղացեալ՝ եկին, պաշարեցին զԹաւրէզ և կարգեալ կառուցին զդռսն՝

1) Ձեռագրում Նոյի բառի մօտ նշան է գրված և ձախ լուսանցբում արված է երկտող հավելում. [...] ւանելով Մայր- [...] =անդ?

2) Ձեռագրում Սօֆիա:

արձակել ի վերայ քաղաքին: Եւ զկ [60] օր հանապազ հրացանօք և զօրիւք հրձիգ արարեալ զշինուածս նորա զփայտակերտս և զկաւակերտսն քանդեալ կործանեցին: Եւ յետ կ [60] աւուր, իբրև հաեա՝ Արդուլլայն, զի տակաւին յամառեալ, պնդեալ ընդդէմ կան, հրաման ետ ամենայն զօրացն առ հասարակ յառաջ խաղալ և ի քաղաք անդ մխիլ և միանգամայն զդռսն ի վերայ արձակել: Եւ նոցա ամենեցուն առ հասարակ զազանաբար յարձակեալք՝ մխեցան ի քաղաք անդր և զաւուրս եօթն մարա եղեալ ընդ հակամարտսն՝ զութսուն և հինգ ու [85,000] զօրս կոտորեցին և առին, նուաճեցին զքաղաքն: Եւ գժողովուրդ քաղաքին և զկանայս և զմանկունս նոցա գերեցին և յաւար առին զստացուածս նոցա: Իբրև զազարեցան ի կոտորելոյ, և խաղաղեցաւ քաղաքն, հանդէս արար զօրաց իւրոց Արդուլլա փաշայն և հաեա, զի ի հարիւր լիսուն և ութ հազարացն քառասուն և երկու հազար միայն մնացեալ էր: Իբրև անցին աւուրք ամսոյ միոյ յետ նուաճելոյ զաւառին Թաւրիզու, անկաւ հիւանդութիւն մահու ի զօրսն օսմանցւոց, քանդի եհար գնոսս բարկութիւն Աստուծոյ յաղազս անպատմելի եղեոնազորութեան նոցա, զոր արարին և առնէին անդորմութեամբ իւրեանց և շնաբարոյ զազրագործութեամբ: Եւ ի հիւանդութենէ աստի բազումք սատակեցան և բազումք ևս գաղտագնաց փախստական եղեալ՝ ցրուեցան, և եղև յոյժ նուազութիւն զօրացն օսմանցւոց:

§ 34 Յամին ունեղ [1725 թ.] յղուանն, որ զմեծ Շօշ քաղաքն առեալ տիրէր, իբրև լուաւ գնուազիլ զօրացն օսմանցւոց, որ եղև ի հարուածոյ մահաբեր հիւանդութեան անկելոյ ի զօրսն, որպէս յառաջ քան զայս կարգեալ զլուսոյ պատմեցաք, ել նա բազում զօրօք գալ ի վերայ Թաւրիզու: Եւ եհաս ի գիւղաքաղաք մի մեծ Ֆախան անուանեալ, ընդ որով են երեք հարիւր գիւղօրէք: Եւ զօրացն պարսիցն ընդդէմ ելեալ նմա՝ պատերազմեցան ընդ զօրս նորա գաւուրս իս [40]: Եւ եհար գնոսս ազուանն արով սրեցե-

րիւ Եւ տիրեալ միանգամայն զ հարիւր [300] գիւղիցն Յախանայ՝ կոտորեաց զերիտասարդս նոցա սրով սուսերի և զամենայն, որ միանգամ կարօղ էր զինուորիլ. և նուազ արար զարս գաւառացն կիսոյ չափ: Տեսեալ զայս չարիս մնացեալ պաւառացն՝ շուրջանակի վառեցան զինու, կազմեցան, պատրաստեցան ելանել ընդդէմ նմա ի պատերազմ. եկին ի միասին և մտին ի բերդ մի փոքրիկ անմարտնչելի, որ ի բարբառս այլազգեաց անուանեցեալ է Քէչի-Գալէ, || այս է՝ ալծի բերդ: Լուաւ զայս աղուանն, եկն և պաշարեաց զնա: Իսկ որք ի ներքս էին, յամբողջին բերդին լուսացեալ՝ ոչ կամէին գալ ի հնազանդութիւն, այլ մարտընչէին:

13.v

§ 35 Տեսեալ զօրավար աղուանից, որոյ անունն էր Զըլալ, զի ոչ ինչ հնար գոյր յաղթելոյ նոցա, քանզի շունէին զգնտակաւոր դորս ձգելոյ ի վերայ բերդին, խորհեցաւ պատրանօք զնոսա ըմբռնել Եւ առաքեաց զայր մի ի պատգամաւորութիւն հրովարտակօք՝ խօսիլ ընդ նոսա բանս խաղաղութեան և ասել նոցա, թէ «Մի երկնչիք, միայն հնազանդ լիբուք մեզ, և մեք անփնաս թողումք զձեզ և ոչ թոյլ տամք ումեք չար առնել ձեզ»: Իբրև եհաս պատգամաւորն ի դուռն բերդին, առին զնա պարսիկքն ի ներքս և տարան առաջի քաղաքապետին իւրեանց, որոյ անունն էր Թարակօղլու Քալբալի Ղասուձ աղա: Եհարց քաղաքապետն ցալրն և ասէ. «Զի՞ եկեալ ես դու առ մեզ»: Եւ նա ասէ. «Զգիր բերեալ եմ լիշխանէ մերմէ»: Եւ մատուցց նմա զգիրն: Իբրև ընթերցաւ զայն քաղաքապետն, լոյժ հաւանեցաւ բանիցն և կոչեալ զամենայն ժողովուրդ բերդին՝ ետ զգիրն ընթեռնուլ լականջս ամենեցուն: Եւ լուեալ ամենեքեան հաւանեցան ընդ բանս պատրանաց զրոյն և լանձն առին հնազանդել Զըլալին և ելին արտաքս ի բերդէ անտի քաղաքապետին հանդերձ: Եւ քաղաքապետն եմուտ առ Զըլալ զօրագլուխն աղուանից, և նա առ երեսս ընկալաւ զնա պատուով և խնդութեամբ և հրամայեաց զգե-

ցուցանել նմա զպատուական պարեգօտ և նստուց զնա առ իւր: Եւ այնպէս մինչև ցերիս աւուրս սիրով և քաղցրութեամբ զնա և զժողովուրդն պահէր և խոտանայր արձակել, մինչև ամենայն ժողովուրդն ելին ի բերդէ անտի: Եւ լետ այնորիկ հրաման ետ զօրաց իւրոց կոտորել զամենեւին: Եւ կոտորեցին զնոսա և ոչ զորք ի նոցանէ ապրեցուցին: Եւ ել անտի Զըլալ իշխանն աղուանից զնալ ի վերայ Թաւրիզու:

§ 36 Իբրև լուաւ Թամազան փաշայն, որ լայնժամ տիրէր Համատանայ, ամբացուց զՀամատան զօրօք: Քանզի աղուանն լառաջագոյն զիմելոց էր ի վերայ Համատանայ որ է ի մի կողմն, և ապա անցանել, զնալ ի վերայ Թաւրիզու: Ի ժամանակին, լորժամ օսմանցին զԹաւրէզ էառ, աղուանն զՀամատան ոչ էր առեալ, այլ անդէն ի Շօշ նստեալ: Արդ աղուանն ի զիմելն իւրում երթալ ի Համատան՝ եկն, եհաս ի քաղաք մի Դէր-Կազին անուանեալ, լորում կային քառասուն հազար տունք: Եւ բնակիչք քաղաքին լալլ ուստեքէ էին ամեալք ի վաղուց ի շահ Աբբասէն, որք և աղանդով համաձայնք էին ընդ աղուանից, իսկ ի պարսից տարածայնէին, որպէս և օսմանցիքն: Եւ ի սակս այսորիկ զիմեաց աղուանն լուսով մեծաւ հնազանդեցուցանելոյ զնոսա և զնպաստութիւն մեծ ընդունելոյ ի նոցանէ: Իբրև եհաս անդ, մեծաւ լօժարութեամբ ընդ առաջ ելեալ նմա՝ ընկալան զնա հպատակութեամբ, զի ասացին, թէ «Աղուանք ընդ մեզ զմի աղանդ ունին և ոչ են իբրև զպարսիկս»: Զտեղի էառ անդ աւուրս ինչ և լետ նուաճելոյ զքաղաքն ամենայն՝ զգերդաստանս նոցա ամենեցուն եհան անտի և ասաքեաց երթալ բնակիլ ի Շօշ քաղաքի: Եւ զընտիր ընտիր պատերազմող երիտասարդս նոցա սպառազինեաց ընդ իւր երթալ ի վերայ Համատանայ:

§ 37 Յորժամ Զըլալ զօրագլուխն աղուանից բազում զօրօք մերձենայր հասանիլ ի Համատան, ազդ եղև Թամազան փաշային Համատանայ, և ել ընդդէմ նորա զօ-

րօք ի դաշտն Լալին անուանեալ՝ պատերազմիլ ընդ նմա: Ի պարտութիւն մատնեցաւ թամազանն և փախեաւ եմուս ի քաղաք անդ և այլ ոչ ել արտաքս: Յառաջ խաղաց աղուանն և եկն մարտնչիլ ընդ քաղաքին, բայց ոչ կարաց մերձիլ ի բերդն, այլ ի բացեալ աւուրս բազումս նստեալ՝ պաշարեաց զքաղաքն: Իբրև ետես, զի առանց դորի և հրագէն զնտակաց ոչ էր հնար առնուլ զնա, զի ոչ ունէր ընդ իւր զայնպիսի գործիս, եթող զնա և դարձաւ զնաց ի Ֆալհան: Զտեղի էառ անդէն և ոչ ևս համարձակեցաւ երթալ ի վերայ թաւրիզու: Իբրև լուաւ Արդուլա փաշայն թաւրիզու, թէ աղուանն լետս դարձաւ ի Համատանայ, գրեաց առ սուլտանն իւր, թէ աղուանն լետս դարձաւ ի Համատանայ լաւելուլ զգօրս և դարձեալ լարձակիլ ի վերայ նորն և լետ այնորիկ գալ ի վերայ թաւրիզու: Յայնժամ սուլտանն զչորս սուրհանդակս լղեաց առ Հասան փաշայն հրովարտակօք՝ ասել նմա, թէ «Կացուցի զքեզ զօրագլուխ զօրացն, որք են || ի կողմանսդ լալդոսիկ, և հրաման ետու զօրաժողով լինել և երթալ ի վերայ Համատանայ»:

14.v

§ 38 Իբրև ի միտ էառ Հասան փաշայն զբանս հրովարտակին, ձեռն էարկ զմեծ բազմութիւն զօրաց կուտել և ցեղ մի քրդաց բաշխան անուանեալ, ազգ ժպիրհ, այլադէմ, գազանասիրտ, արիւնարբու, որոց տեսիլ երեսացն զտեսողն պակուցանէ: Առաքեաց առ ազգս այս և էառ ի նոցանէ զեօթն հազար սպառազէն զբահաւոր: Է և ազգ մի մարջանի ասար անուանեալ, և ի սոցանէ էառ զութ հազար քաջամարտիկ: Է և ազգ մի արդիլաւանդ կոչեցեալ, և ի սոցանէ էառ զչորեքսասան հազար: Արդ զսոսա ի վերայ իւրոց հնգեասասան հազարացն լաւելեալ՝ և այլ ևս¹⁾ եղեն չորս բիւր երեք հազար չորեք հարիւր պատերազմող սպառազէնք: Եւ ինքն Հասան փաշայն էր այր անարկու, զժոխատեսիլ, անգութ, լորմէ ամենայն ոք սարսէր: Եւ լետ սուրբց այսպիսի պատրաստութեան իւրոյ չու արար ամե-

¹⁾ Ձեռագրում այստեղ մի քանի բառի տեղ և թողած:

նայն զօրօքն հանդերձ, խաղաց, զնաց և եհաս ի գաւառն, որ լալլազգեաց բարբառս Զաղով կոչի: Ընկալաւ զնա Ահմէտըէկն Զաղովու բազում շքով, և եղև նմա մնալ անդէն ամիսս երկուս: Եւ հրամայեաց Ահմէտըէկին տալ չիւրոց անտի զօրս իբրև երկու հազար չորեք հարիւր: Եւ նա ոչինչ կարաց ապուսել նմա լերկիւղէն, այլ զերկուս արս իւրաքանչիւր տանէ առեալ՝ հաւաքեաց երիտասարդս իբրև հընգեասասան հազար, ամենեքեան զբահաւոր ձիաւորեալ և այլ զինու զարդու վառեալք ի պատերազմ. որք լաւելան ի զօրս Հասան փաշային, և բովանդակն եղև վաթսուս և ութ հազար չորեք հարիւր: Եւ ապա ել ի Զաղովոյ զնալ ի Համատան և հասեալ ի գաւառ մի Քասրա անուանեալ՝ զտեղի էառ աւուրս ինչ: Անտի զնաց ի Գիրէնդ և ի Գիրինդոյ ի Հառնաւայ, ի Հառնաւոյ ի Մայտաշ և ի Մայտաշոյ ի Քըրմաշա, և անդէն եհար զնա տէր և հիւանդացաւ, ուր և մեռաւ իսկ լետ եօթն աւուրց:

§ 39 Եւ զօրն այնուհետև ոչ կարաց խաղալ անտի Եւ էր նորա որդի մի Ահմէտ անուամբ. զսա հրամանատար իւրեանց կացուցանել կամեցան ամենայն զօրքն: Եւ վասն սմին իրի խորհուրդ արարեալ մեծամեծքն՝ հրովարտակս առաքեցին ի Կ. Պօլիս առ սուլտանն՝ ծանուցաս նել նմա զմահն զօրագլխին իւրեանց: Եւ վաղվաղակի զչորփառաւոր սուրհանդակս հրովարտակօք առաքեաց առ նոսա ասել, թէ «Զորդի Հասան փաշային, որ էր Ահմէտ փաշայ, կացուցի ի տեղի հօր նորա՝ երթալ ի վերայ Համատանայ»: Եւ էլ ի Քրմաշայէ Ահմէտ փաշայն, որդի Հասանին, ամենայն զօրօքն երթալ ի Համատան: Որպաց, զնաց և եհաս, բանակեցաւ ի տեղի մի, ուր զոյ մեծ իջեվան մի Բէսթուն կոչեցեալ ի Շխալի¹⁾ իշխանէն շինեալ: Եւ անտի զնաց ի Սահանա, որ է աննման, գեղեցիկ քաղաք մի: Անտի զնաց ի Քանկավառ, որ է աշտարակաւոր զիւղաքաղաք մի և եզիտ զնա ամալի, զի բնակիչք նորա պարսիկքն

¹⁾ Ձեռագրում Եփսալի:

ամենեքեան փախուցեալք¹⁾ էին յերկիւղէ ասպատակչաց: Եւ անտի անցեալ գնաց ի Սալզավա, որ է քաղաք փոքրիկ: Յայսմ վայրի ընդդէմ ելին նմա պարսիկքն, թէպէտ և սակաւք էին. մարտ եղեալ պատերազմեցան ընդ նմա զԺա [11] օր և անկան սրով²⁾ սուսերի: Եւ օսմանցին էառ զքաղաքն և ասպատակեաց զնա: Եւ լետ նուաճելոյ զայն բերդն՝ ել ի ճանապարհ՝ հասանիլ ի Համատան:

§ 40 Եւ զի անտի ճանապարհն չո՛ժ սարելից էր և դժոխագնաց, ոչ կարէին զմեծամեծ թօփս ընդ այն ճանապարհն տանել: Զվաթսուն թօփ ունէին, և էր ի նոսա չո՛ժ մեծագոյն թօփ մի, զոր բարբառով իւրեանց Ասլան-թօփ կոչէին. զոս մանաւանդ ոչ կարէին տանել: Վասն այսորիկ ոչ գնացին ընդ այն ճանապարհ, այլ դարձան լետս և ընդ այլ ճանապարհ երթեալ՝ հասին ի գեօղ մի Լակրան անուանեալ, որոյ գիւղականքն չո՛ժ աղքատք էին: Մատեան սոքա առ փաշայն և ողբով մեծաւ ծանուցին նմա զտառապանս և զթշուառութիւնս իւրեանց: Գթացաւ ի նոսա փաշայն և ոչ թոյլ ետ ումեք խուել զոր ի նոցանէ և կոչեալ զմի ոմն ի լանուանի զինուորաց իւրոց, որ է սերաստացի, ի հալոց ազգէ, ուրացեալ, նմա ետ զամենայն գիւղօրէս գաւառին այնորիկ և պատուիրեաց նմա պահել զգուշութեամբ և խնամարկել: Ելին անտի || օսմանցիքն և գնացին, հասին ի գիւղաքաղաք մի Սալհալվա անուանեալ, և նորա բնակիչքն փախուցեալ յերկիւղէ ասպատակչաց ի Համատան ամրացեալք էին:

15.r

§ 41 Եւ լետ բանակելոյ իւրոյ ի տեղուոյն և կալոյ իննսուն օր՝ ետես փաշայն, զի պարսիկքն Համատանայ ոչ չարձակեցան ընդդէմ իւր: Եւ լետ վեց աւուրց չառաջ խաղաց օսմանցին և եհաս ի տեղի մի, որ չայլազգեաց բար-

1) Զեռագրում այս առի զիմաց ձախ լուսանցքում արված ե միատող հաւելում. [...] ապա:

2) Զեռագրում սուրով:

բառս Եէնկի-չայ անուանի, կէս ժամու ճանապարհաւ հեռի ի Համատանայ: Յայնժամ Թամազան իշխանն Համատանայ զզօրս իւր վառեալ և պատրաստեալ ի պատերազմ՝ ել նոքօք արտաքս ի քաղաքէ անտի և չարձակեցաւ ի կուիւ: Եւ պատերազմն եղև ի դաշտին Լալին անուանեալ: Եւ զօրքն պարսից, որք ի Համատան էին, ըստ պատմելոյ ոմանց՝ էին իրրև երեք հարիւր հազարք: Ի դիմի հարաւ օսմանցին պարսիցն, որք ի Համատանայ չարձակեցան ի վերայ իւր, և եհար զնոսա սրով սուսերի և հրազինաւ: Երիցս անգամ զօրն պարսից չարձակեցաւ ի քաղաքէ անտի ի վերայ օսմանցւոց և ոչ կարաց լաղթել նոցա և փախուցեալ լետս՝ եմուտ, ամրացաւ ի քաղաք անդ:

§ 42 Եւ օսմանցին չառաջ մատուցեալ զզօրսն՝ պաշարեաց զքաղաքն ի չորից կողմանց: Եւ կառուց զամենայն դօրսն ընդդէմ քաղաքին և սկսաւ հրդեհել և քակտել զամենայն փայտակերտ¹⁾ շինուած քաղաքին և զլիսուն և չորս աւուրս պատերազմեալ՝ ոչ կարաց առնուլ զքաղաքն: Եւ եղև ի լիսուն և հինգերորդում աւուր, որ օրն էր երկուշարթի, օսմանցին ի չորից կողմանց քաղաքին չառաջ մղեաց զզօրսն մխիլ ի քաղաք անդ և այլ ոչ մնալ արտաքս: Եւ ահա այն ամենայն բազմութիւն անթիւ զօրացն աղաղակաւ մեծաւ չառաջ մխեցեալ՝ զերկիր թնդացուցին և հասին ի տակ պարսպին, զի ի ներքս մխեսցին: Եւ խոնեցան առ չատակաւ պարսպին մարդ ի վերայ մարդոյ, և որք ի բերդին էին զօրք, զամենայն հրազէսս իւրեանց միանգամայն հեղեալ ի վերայ նոցա՝ տապաստ արկին զայնչափ բազմութիւն նոցա միանգամայն վաղվաղակի, որպէս զտերես ծառոց ի սաստիկ խիտ կարկտոց: Եւ սկաւրացան նոքա աղարտել զպարսպն և կամ ի վեր ելանել: Եւ զարձան լետս և հեռացան ի պարսպէ անտի և գնացին ի բանակս իւրեանց: Եւ հանդէս արար փաշայն զօրաց իւրոց և ետես, զի երկոտասան հազարք ի նոցանէ անկեալ

1) Զեռագրում փայտակերտ:

էին լալնմ արշաւանի: Հրաման ետ զգորսն անգաղար ար-
ձակել և գաւուրս ին [25] զկ [60] գորսն արձակէին և ալնու-
կա ոչ կարացին զքաղաքն առնուլ:

§ 43 Ապա խորհեցաւ փաշայն ական հատանել առ
պարսպին և զբարութ լցեալ անդ՝ զգետինն և զպարխպն
միանգամայն պատառել: Եւ էր ի զօրուն ի հալոց ազգէ
ոմն կարուակ Ղարա-Բիրար անուամբ կարնեցի, որ քան
զալլ ականահատս առաւել հմուտ էր գործոլն և ճարտար:
Մատեաւ սա առ փաշայն և խօսեցաւ ընդ նմա վասն իրիս
ալսորիկ: Եւ հրաման ետ նմա փաշայն՝ յառաջագէմ և զլուխ
լինել ականահատացն: Եւ ի ժա [11] առուրս արարին և վճա-
րեցին զականն. լցին ի ներքս զբարութ և պատրաստեցին,
որ ինչ պիտոյ էր ի նոյն: Եւ եղև լաւուրն չետ ամենայն
պատրաստութեանց սաստկացուցին զպատերազմ ուրբա-
թու և յանկարծակի հուր լուցեալ ի բարութն՝ հրդեհեցին:
Եւ պատառեցաւ ականն և միանգամայն պարխպն, և կէս
բերդին ել չերկինս: Եւ վազվազակի յառաջ փութացեալ
զօրացն օսմանցւոց՝ ի բերդն զեղան և զազանարար չար-
ձակեալք՝ կոտորեցին սրով սուսերի զամենայն ընդ առաջ
ելեալսն: Եւ փախեաւ իշխան քաղաքին յանձանօթս և զեր-
ծաւ: Իսկ գունդ զօրաց բերդին և մեծամեծք նոցա, որք
էին Շահբաս-Ալի, Ալի-քրրիդ, Ալի-Հասանբէկն, ի նախանձ
բարկութեան բրդեալք ի տեղիս տեղիս պնդեցան ի կռիւ,
մարտ եղին ընդգէմ զօրացն օսմանցւոց: Եւ իբրև անյոյս
ի կենաց՝ խստագոյնս պատերազմեցան զառուրս եօթն յետ
պատառելոյ պարսպին, այլ ոչ կարացին զբերդն և զանձինս
իւրեանց ապրեցուցանել:

16.v § 44 Կոտորեցին զնոսա օսմանցիքն և առին յա-
ւար զստացուածս քաղաքին, զոսկի և զարծաթ անհա-
մար բազում: Մանաւանդ զի ի քաղաքին յայնմիկ յա-
ճախութիւն վաճառականաց լինէր: Եւ զընչաւէտ վաճա-
ռականս, զկովապաշտ մլթանիս բազմաթիւս գտեալ ի
պանդոկս՝ կոտորեցին և զանհամար զբամս նոցա, զորս
ի յարկեղ, զորս ի պահանորդս և զորս ի ներքոյ սըփ-

ոոցաց գտեալ՝ առին և լցեալ եղին: Եւ այնչափ էր յաճա-
խութիւն զբամոց ի պանդոկս, մինչև աստ և անդ սփռեալ
կային և ժողովելով ոչ սպառէին: Եւ իբրև եղև կոտորեցին
զամենայն ընդգլիմամարտսն, բուռն հարին զանդէնսն գե-
րի վարել- և զերեցին զանհամար անձինս և զկանայս և
զերիտասարգս, զպատանիս և զօրիորդս. իսկ զծերս և զմա-
տաղ մանկունս, իբրև ծանրացուցիչս անձանց իւրեանց,
կոտորեցին: Հասին գերիչքն յեկեղեցին և գտեալ անդ զբա-
զումս ի հալոց ազգէ ապաստանեալս՝ գերի առին զնոսա,
ընդ որս հաճեցան, և կոտորեցին, յորս ոչ անխայեցին ապ-
րեցուցանել: Եւ լցաւ ամենայն բանակն նոցա աւարաւ և
գերեօք: Իբրև վախճան եղև այսչափ և այլ բազում չարեաց
նոցա, հրաման ետ փաշայն զգիտկունս կոտորելոցն ի քա-
ղաքէ անտի ի բաց հանել, զի քաղաքն մի նեխեսցի: Եւ
հանին զնոսա ի քաղաքէն և լցին ի բացի:

§ 45 Եւ էին ի զօրուն օսմանցւոց համատանցի
վեց մեծամեծք վաճառականք, որք ընդ փաշային չերկրէն
օսմանցւոց եկեալ էին և էին արք անուանիք. անուն միոյն
մահտեսի Յարութիւն, երկրորդին՝¹⁾ Մատթէոս, երրորդին՝²⁾
Մանասէ, չորրորդին՝³⁾ Մասեհ, հինգերորդին՝⁴⁾ Վարդան,
վեցերորդին՝⁵⁾ Պետրոս: Սոքա մտին առ փաշայն և աղերս
արկեալ առաջի նորս՝ խնդրեցին զգերիսն զայնոսիկ, որք
ի հալոց ազգէ են, ազատ արձակել, ասելով, թէ «Մեք ի
վաղ ժամանակաց հետէ բովանդակ ազգաւ մերով ծառայք
եմք հարկատու, ուր և իցեմք յիշխանութեան ձերում:
Եւ դուք էք տիրողք և խնամարկուք ազգին մերոյ. և արդ
ձեր եմք մեք և ընդ տէրութեամբ և խնամօք ձերովք կեցեալ
ծառայք եմք և պարծիմք ի տէրութիւն ձեր: Եւ արդ այս-

1) Չեռագրում է:
2) » » գ:
3) » » դ:
4) » » ե:
5) » » զ:

պիսի աւուրս մեծի յազթութեան քոյ, ընդ որ յոյժ ուրախանամք, շնորհեցես մեզ գնոսա, որք յազգէն մերմէ են, վասն կենաց քոց, զի ամենայնիւ ուրախ լիցուք ի մեծի ցնծութեան աւուրս այսորիկ»: Ընկալաւ զաղաչանս նոցա փաշայն և հրամայեաց ի բաց արձակել զամենայն հայ գերիսն. և եղև նոցա ուրախութիւն մեծ: Բայց ոչ ամենեցուն եղև ազատիլ, զի ոմանք թողին ազատ, և ոմանք՝ ոչ: Արդ, Ահմէտ փաշայն ամ մի նստաւ ի Համատան և յետ այնորիկ առաքեցաւ ի Բաղդատ:

§ 46 Յամին ռենգ հայկազեանս թուականի [1727 ր.] Ահմէտ սուլտանն օսմանցւոց զԼարա Մուսթաֆայ փաշայն առաքեաց նստիլ ի Համատան և Ահմէտ փաշային հրամայեաց ելանել ի Համատանայ և երթալ ի Բաղդատ, այն ինքն է՝ Բարեղոն: Յայնմ ամի հրեշտակս առաքեաց աղուանն առ Մուստաֆայն ասել, թէ «Համատան մեզ անկ է առնուլ, և ընդէ՛ր դուք բռնացեալ ի վերայ երկրիս պարսից՝ առէք զայն: Եւ արդ զարձուցէք մեզ զայն իրաւամբ, ապա թէ՛ ոչ, մեք ելանեմք ի վերայ ձեր և առնումք զայն սրով մարտի»: Յայնժամ փաշայն հրովարտակս առաքեալ առ սուլտանն իւր՝ զեկոյց նմա զբանս զայս, և նա պատասխանի արար նմա, թէ «ՉԱհմէտ փաշայն փութանակի բազում զօրօք առաքեցից ի վերայ աղուանին»: Եւ վաղվազակի առաքեաց հրովարտակս առ Ահմէտ փաշայն, թէ «Կացուցի զքեզ ընդհանրական զօրագլուխ՝ երթալ ի վերայ աղուանից և ահա առաքեմ առ քեզ զերեսուն փաշայ:» Յայնժամ ձեռն էարկ Ահմէտ փաշայն զզօրս կուտել և մինչ չև հասեալ էր [30] փաշայիցն առ նա, զբազում զօրս հաւաքեաց ի բարելացւոց: Իշխան ոմն էր յայնմ տէրութեան Շէլխ Նապըր անուանեալ. սա զիղո [24,000] վառեալ սպառազէն եհան յիւրմէ ամենեքեան արամբք: Եւ յետ չորից ամսոց հասին առ նա [30] փաշայքն զօրօք իւրեանց, և թիւ զօրաց նորա եղևն երեք հարիւր հազար յամենայն տեսակաց զինուորաց ի զանազան ազգաց — յօսմանցւոց,

ի մարաց, || յատրեստանեայց, ի բարելացւոցն, յարարացւոց և ի յայլ խառնազանջից մեծաւ բազմութեամբ: 17.r

§ 47 Եւ յետ կատարելոյ ամենայն պատրաստութիւն մարտի՝ ել Ահմէտ փաշայն ի Բարեղոնէ ամենայն զօրօքն, չուեաց, խաղաց, գնաց տալ պատերազմն ընդ աղուանից և եհաս բանակեցաւ ի տեղի մի, ուր էր գեօղ մի Ղզրարաթ անուանեալ: Եւ անդ բաժանեաց զզօրսն յերկուս յառաջս, զի յոյժ բազում էր, և կարգեաց զանազան ճանապարհաւ գնալ, և ինքն՝ ընդ միում ի նոցանէ: Չորս ոչ էառ ընդ իւր, զի զզօրս, զօրս զառաջինն ունէր, ի Համատան թողեալ էր, յորժամ էառ զնա և ամրացոյց. նա զի հարկ եղև փութանակի տագնապաւ ելանել, հասանել ի վերայ աղուանիցն: Եւ ի ճանապարհ առնելն նորա եհաս առ նա հրովարտակ ի Մուսթաֆա փաշայէն՝ աճապարել, հասանել յօգնութիւն ի Համատան և ասէր, թէ «Աղուանն մերձ է հասանել, պաշարել զմեզ»: Եւ չալնմ բանէ ստիպեալ փութացոյց զընթացսն և անցեալ ընդ բազում գաւառոս՝ եկն, եհաս, եմուտ ի գաւառն Համատանայ և բանակեցաւ ի տեղի մի Չաֆրան անուանեալ: Լուաւ Մուսթաֆա փաշայն զհասանելն նորա և ել ընդ առաջ նորա բազում խմբից զարդարելոց պատրաստութեամբ և անպէս մեծաւ շքով ընկալաւ զնա: Բայց նա ի Համատան ոչ կամեցաւ մտանել, ալլ արտաքոյ ի տեղի մի, ուր մերձ է, գեօղ մի Լալին անուանեալ, անդ բանակեցաւ: Հրեշտակս առաքեաց առ աղուանն՝ ազդ առնել նմա վասն պատերազմին: Եւ նորա կալեալ զհրեշտակս՝ եղ ի զիպանոջ երկաթի կապանօք: Չալն լուեալ փաշային՝ ել փութանակի գնալ ի վերայ աղուանիցն: Եւ եկն, եհաս ի Մարանդ, և տակաւին աղուանն ոչ ել ի պատերազմ: Եւ ևս գնաց չառաջ և եհաս ի տեղի մի ի մէջ Փալանայ և Չանկվանայ և մնայր աղուանացն գալ: Եւ անշափ բազում էր զօրն օսմանցւոց՝ մինչև զմիմեանս չճանաչել:

§ 48 Եւ յետ վեց աւուրց անդէն մնալոյ նոցա՝ եկն աղուանն բազում զօրօք և ճակատեցաւ ընդդէմ նոցա: Եւ ի պատահին միմեանց երկոցունց կողմանց՝ լառաջնում նուազի լաղթեցաւ աղուանն և ի փախուստ դարձաւ: Բայց լեբկորդում նուազի լարձակելոյ նորա ի վերայ օսմանցւոց ճակատուն՝ եհար զնա և փախստական արար մինչև ի Համատան: Եւ քրթմնջիւն էր ի զօրուն: Ոմանք ասէին, թէ «Տեսանէաք, զի հուր երկնից տեղայր ի վերայ մեր» Այլքն ասէին, թէ «Թեաւոր օձք բազումք լարձակէին ի վերայ մեր» Կէսքն ասէին, թէ «Երկիրն ծովացեալ երևէր առաջի մեր ի պատերազմին»: Եւ այսպիսի ցնորիւք խոովեալ էր բանակն օսմանցւոց: Իսկ զպատճառն խոովութեանս այսորիկ ոմանք ի պատերազմողաց զայս ասեն լեալ, զի սուլտանն աղուանից հմուտ էր յոյժ արհեստին մոզութեան և սովաւ հարեալ զզօրն օսմանցւոց՝ ապշեցոյց զնոսա ցնորիւք: Բայց արդ, թէ ճշմարտիւ արար աղուանն զգիւթութիւն ինչ, թէ ոչ, անստոյգ է: Այլ մեք զայլ, հաւանական պատճառս ունիմք, և է այս ինչ, զի աղուանքն ոչ են իբրև զպարսիկս, այլ մի են ազանդով ընդ օսմանցւոց: Եւ վասն այսորիկ լորժամ պատերազմ լինի ի մէջ սոցա, և զօրն¹⁾ օսմանցւոց տեսանէ, թէ պատերազմն այն ոչ է ի վերայ քաղաքի, լորմէ լաղթութեամբ իւրեանց լուսացեն աւար առնուլ զստացուածս և գերել զկանայս և զմանկունս, խղճեն սուր արձակել ի վերայ նոցա և ի փախուստ աճապարեն: Եւ կամ թէ կեղծաւորին խղճել՝ ասելով ընդ միմեանս, թէ «Սոքա ազանդակից եղբարք մեր են, և զիարդ ոչ խղճեսցուք հարկանել զնոսա»: Ի վերայ այսորիկ էր և այս, զի աղուանից սուլտանի հայրն էմիր անուանեցեալ էր և ինքն անախ հայրանուանական անուամբ էմիր-վէրդ մականուանեալ էր: Զոր լուեալ ամբոխին՝ համարէին, թէ իսկապէս էմիր է, այսինքն ի զարմէ կնտոյն իւրեանց սերեալ, զոր մեծապէս պատուեն և ոչ ամբառնան զձեռս

1) Ձեռագրում հօրև:

ի վերայ այնպիսւոյն առանց արհամարհանաց կնտոյն: Ուստի զօրքն, որք զնախասացեալ ցնորսն պատմէին միմեանց, ասէին, թէ «Վասն այսորիկ այսպիսի զարհուրելի տեսիլք եղեն, զի էմիր է նա, և մեք հակառակ նմա եղեալ մեղաք, և ոչ յաջողի ի մեզ լաղթութիւն»: Եւ արդ որպէս մեզ թուի, ստուգազոյն պատճառն այս եղև ի փախուստ դառնալոյ նոցա:

§ 49 Իբրև ետես Ահմէտ փաշայն այսու օրինակաւ ամենայն բանակն իւր խոովեալ և սրտաբեկ, լքաւ, լուծաւ զօրութիւն սրտի նորա և հատաւ ի յուսոց յաղթութեան գործոյ: || Եւ խորհուրդ արարեալ ընդ մեծամեծս իւր՝ հրովարտակս զրեաց նոքօք հանդերձ՝ առաքել ի Կոստանդնուպօլիս առ սուլտանն, ծանուցանել նմա զանցս պատերազմին իւրոյ, միանգամայն և զխոովութիւն և զքրթմնջիւն զօրացն և ցուցանել նմա զվտանգն կոտորման զօրացն և խնդրել զհրաման հաշտութիւն առնելոյ ընդ աղուանից: Անսաց սուլտանն և հրաման ետ առնել զհաշտութիւն: Ապա Ահմէտ փաշայն առաքեաց առ սուլտանն աղուանից զդեսպան՝ ասել նմա, թէ «Սուլտան մեր հաճեալ է առնել ընդ քեզ զհաշտութիւն»: Ընկալաւ սուլտանն զդեսպանն օսմանցւոց բազում պատուասիրութեամբ և յետ հաստատելոյ զզաշն խաղաղութեան առաքեաց և ինքն զդեսպան գոմն ի մեծամեծաց իւրոց, որում անունն է Բլուջ Մահմէտ, և հանդերձեաց զնա մեծագին ընծայիւք, պատուական ակամբք և մեծ փողով միով՝ երթալ ի Կոստանդնուպօլիս առ մեծ սուլտան օսմանցւոց: Եկն, եհաս ի Կ. Պօլիս և ընկալեալ եղև մեծաւ պատուով և բազում երևելի սպասուք ընդ առաջ իլանելով նմա: Եւ մտեալ դեսպանն առ սուլտանն՝ մատուց զընծայսն իւր, և լոյժ հաճոյ եղեն նմա ընծայքն: Եւ պարգևս ետ նմա մեծամեծս և պատուեաց զնա խիլալիւք: Եւ ամենեցուն, որք նորայքն էին, պարգևս և ռոճիկս ետ իւրաքանչիւր ըստ արժանեաց: Ունէր ընդ իւր զհարիւր ձիաւորեալ աղուանս և զհնգետասան ճախրագործ ճարտարս ի հալոց ազգէ: Քանզի, ըստ որում

18.v

պատմեցին մեզ, ի վերայ ուղտուց կազմեալ, կառուցեալ ունէին զմանր զորս, որոց իւրաքանչիւրն տանէր զարճիճս միակէս լտերս: Եկաց դեսպանն ի Կոստանդնուպօլիս զաւուրս վաթսուն և ապա զարճ արար գնալ ի Շօշ առ տէրն իւր:

§ 50 Ընդ այն բազում ժամանակս, լորս ինչր զընթացս դեսպանութեան իւրոյ, բազում անցք անցին ընդ աղուանսն, որք ի Շօշ կային: Քանզի էմիր-վէիզ¹⁾ սուլտանն նոցա, որ զժնդակ կախարդ էր, ըստ որում համբաւիւր, հարեալ ի դիւաց այսանարեցաւ և ինքնին զմիսն ատամամբ²⁾ ծուռտելով սատակեցաւ: Եւ ի տեղի նստաւ շահ Աշրաֆն³⁾: Յետ այսորիկ շահ Թամազն ի ձեռն Ղուլի խանին հօրացեալ ի վերայ աղուանից՝ էառ ի նոցանէ զՇօշ: Վասն այսորիկ դեսպանն իբրև եկն, եհաս ի Համատան, գիր եհաս առ նա ի Շօշայ, թէ շահ Թամազ որդի շահ Հուսէինին եկն, էառ զՇօշ և կոտորեաց զաղուանից զզօրսն: Եւ վասն գուժիս այսորիկ այլ ոչ կամեցաւ ի Շօշ գնալ, այլ անդէն եկաց աւուրս բազումս: Եւ զի ինքն էր իշխան մեծ, որպէս ի վերագոյնդ պատմեցաք, ընտրեաց խորհրդով ընծայել զանձն ի հպատակութիւն շահ Թամազին և ոչ երթալ առ սուլտանն աղուանից: Եւ գնացեալ առ շահն՝ շնորհս եգիտ ի նմանէ և առ նա մնաց, և ետ նմա շահն զառաջին իշխանութիւնն իւր:

Այլ թէ շահ Թամազն որպէս էառ զՇօշ, պատմեմք յառաջիկայ գլուխդ:

1) Ձեռագրոմ էմիր-վէիզ:
2) " " ատամբ:
3) " " Գաւրամն:

[Գ Լ Ո Ւ Ն Չ Ո Ր Ր Ո Ր Գ]

Զիարդ ի ձեռն Ղուլի խանին շահ Թամազն մարտիւ պատերազմի էառ զմեծ քաղաքն Շօշ ի ձեռաց աղուանից և ցուաւ յարոս քաղաւորութեան իւրոյ:

51 Որպէս ի վեր անդր ի սկզբան վիպասանութեան այսորիկ պատմեցաք, շահ Թամազն որդի Հուսէին շահին ձեռն էարկ զաթոռ թագաւորութեան հօր իւրոյ, որ լաղուանից յափշտակեալ էր, չեստ դարձուցանել: Այլ ի պատճառս երկպառակութեանն, զոր աղուանն էած ի վերայ, իշխանք թագաւորութեանն այնորիկ լուծեալք ի կապից միութեան զլիտօն՝ յանձինս իւրեանց բաժանեցան, և ոմանք նուաճեցան ընդ տէրութեամբն աղուանից: Եւ այնուհետև շահ Թամազն, որ գլուխ լինելով նոցա իրաւամբք ժառանգութեան՝ կոչէր զնոսա իբրև զանդամս ի միութիւն և ի ձեռնատուութիւն, ոչ հնազանդէին, և վասն այսորիկ նա իբրև գլուխ մի լուծեալ յանդամոց՝ ոչինչ զօրէր առնել: Սակայն չեստ ամաց ինչ աշխատ լինելոյ նորա ի սոյն ինամօք տեառն ամենայնի, որ զամենայն պետութիւնս թէ հաւատացելոց¹⁾ իւրոց և թէ անհաւատից ըստ հաճուից կամաց իւրոց տնտեսէ, յաջողեցաւ նմա ի ձեռն միոյ իշխանաց նորա, որոյ անունն էր Թամազղուլի, այլ բարեբաղդ բատ անցաւոր կենցաղոյս և այլ խոհական ըստ աշխարհիս և քաջ պատերազմող ի մանկութենէ:

§ 52 Եւ եղև լամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի և եօթներորդի հալիպղեանս թուականի [1728 թ.] || լուաւ շահ Թամազն զԹամազղուլի խանին քաջամարտիկ լինելոյն, առաքեաց, կոչեաց զնա առ իւր և կացոյց զնա զօրավար ամենայն զօրաց իւրոց՝ երթալ ի

1) Ձեռագրոմ հաւատաց:

վերայ Շօշայ ի մտրտ: Պատասխանի ետ նմա Ղուլի խանն
 և ասէ. «Յանձն առնում ես զայս հրաման քո չօթարու-
 թեամբ. բայց զխնդիր մի ունիմ ի քէն, զոր թէ առնիցես,
 ապա և ես չօթարութեամբ կարեմ ձեռն արկանել ի զործդ
 այդ. իսկ եթէ ոչ, ոչ կարեմ: Եւ այս ինչ է խնդիրն, զի
 տացես ինձ զբացարձակ իշխանութիւն ի վերայ ամենայն
 իրաց թագաւորութեանդ, և դու միայն աթոռով պատուոյ
 ի վերոյ եղեալ՝ ի զործ ինչ մարտի ինքնին մի ձեռն արկ-
 ցես, այլ զամենայն ինձ¹⁾ լանձնեալ թողցես»: Յօթարեցաւ
 Թամազն ընդ այս, վստահացաւ ի հաւատարմութիւն նորա
 և շնորհեաց նմա, զոր խնդրեաց: Ապա Թամազդուլին հան-
 դէս արար զօրացն, հազարաւոր սպառազինացն իւրոց,
 կարգեցաւ, պատրաստեցաւ ելանել ի պատերազմ ընդդէմ
 աղվանից և ամենայն որ միանգամ ապստամբեալ իցէ
 իշխանութենէ թագաւորութեան պարսից, նուաճել ի հնա-
 զանդութիւն, և որք ոչ հնազանդեսցին, կորուսանել:

§ 53 Հասանէր ի վերայ իւրաքանչիւր քաղաքաց
 և գաւառաց, նուաճէր զնոսա և զապստամբսն կոտորէր: Եւ
 եկն նա մինչև ի Շօշ քաղաք և բանակեցաւ ի դաշտին, որ
 մերձ է քաղաքին աւուր²⁾ միոյ ճանապարհաւ: Լուաւ վասն
 նորա Աշրաֆ սուլտանն աղուանից և ել ընդդէմ նորա բա-
 զում զօրօք: Ի դեմի հարան միմեանց զաւուրս բազումս և
 զգաշտն ծածկեցին դիակամբք: Յաղթահարեցաւ աղուանն
 և ի փախուստ դարձեալ՝ ի քաղաք անդ ամբացաւ: Եւ
 Ղուլիխանն լառաջ խաղացեալ եկն առաջի քաղաքին և պա-
 հէր զնա յաւուրս ինչ: Ապա ի գիշերի միում, մինչդեռ
 սպասէր Ղուլի խանն յարձակելոյ նորա միւս անգամ, ելին
 նոքա զանխլարար ի քաղաքէ անտի ընդ դուռն, որ չալլ
 կողմն քաղաքին էր, և փախեան բազում աւարաւ գանձուց
 քաղաքին յաշխարհ իւրեանց: Իսկ Ղուլի խանն ձեռն էարկ
 մարտնչիլ ընդ քաղաքին և տեսանէր, զի հակամարտու-
 թիւն ինչ ի քաղաքէ անտի ոչ լինէր: Ապա հրաման ետ

1) Չեռագրում ինչ:
 2) պակասում եւ աւուր բար:

զօրացն՝ մերձենալ ի պարիսպն և ի դրուսն քաղաքին և
 դարձեալ տեսանէր, զի ի ներքուստ ոչ ոք երևէր: Խորտա-
 կեցին զդրուսն և ի ներքս զեղեալ՝ տեսին, զի ոչ ոք էր,
 և ծանեան, զինչ զործեալ էր աղուանն: Ահա այսու օրի-
 նակաւ առեալ եղև քաղաքն Շօշ: Եւ շահ Թամազն նստաւ
 չաթոռ թագաւորութեան հօր իւրոյ:

§ 54 Իսկ աղուանից սուլտանն, որ փախուցեալ
 էր, հասեալ էր ի Շիրազ քաղաք, ուր էին երկու ոմանք
 իշխանաց իւրոց, որոյ միոյն անունն էր Ղըլալ, և երկ-
 րորդին՝ Չաֆրան: Մոքա ունէին զզօրս իրրև զվեց հազար:
 Չաֆրանն երեք աւուր ճանապարհաւ այսր քան զՇիրազ
 էր և ի վերայ Աբուզուրան անուանեալ գետոյն բանակեալ,
 որ ի Բաղդիսարու առ Շիրազով անցեալ գայ: Եհաս, չար-
 ձակեցաւ ի վերայ նորա Ղուլի խանն և կոտորեաց զզօրս
 նորա սրով սուսերի: Եւ ինքն մագապուրծ գերծեալ փա-
 խեաւ և մինչդեռ անցանէր ընդ կամուրջ մի, հասին նմա
 զօրքն Ղուլի խանին, և նա ընկէց զինքն ի գետ անդ և
 էանց ջուրն և գերծաւ: Իսկ Ղուլի խանն չառաջ խաղացեալ
 զօրօքն հանդերձ՝ եկն, եհաս ի Շիրազ քաղաք, բայց ոչ
 մխեցաւ ի ներքս մտանել, այլ փոքր մի ի բացեայ բանա-
 կեցաւ: Ազդ եղև աղուանին գալուստ Ղուլի խանին, ել ար-
 տաքս զօրօքն և դիմի հարաւ նմա: Եւ եղև անդ պատե-
 րազմ սաստիկ, ի պարտութիւն մատնեցաւ աղուանն և
 փախեաւ յերեսաց Ղուլի խանին:

§ 55 Այլ շահ Թամազն իրրև նստաւ չաթոռ թա-
 գաւորութեան հօր իւրոյ, հրեշտակս առաքեաց առ սուլ-
 տանն օսմանցուց հրովարտակօք՝ ասել նմա, թէ «Տուր ինձ
 զքաղաքս իմ, զորս առեր ի ժամանակս բռնաւորութեան
 աղուանին. զի այժմ ես աջողութեամբ տեսան հարի, վա-
 նեցի զաղուանն չերկրէս, առի զՇօշ, և դարձաւ յիս իշխա-
 նութիւն հօր իմոյ»: Նովին օրինակաւ հրովարտակս առա-
 քեաց ի ձեռս հրեշտակաց իւրոց առ արքայն մօսկովաց՝
 խնդրել ի նմանէ զկիլան: Անփոյթ արար սուլտանն օս-

20.v

մանցւոց փութով պատասխանի առնել շահ թամազին, զի ոչ կամէր յայնժամ զքաղաքսն, զորս մարտիւ էառ, անդէն ձրի դարձուցանել: Իսկ մօսկոֆն պատասխանի արար շահ թամազին այսպէս. «Ես վասն յասպատակչաց պահպանելոյ զքաղաքսն քո բազում ծախս արարեալ առի զԿիլան և մինչև ցայժմ պահեցի և ալժմ պատրաստ եմ տալ զնա ցքեզ, յորժամ զայն ամենայն ծախս, վասն նորա առ ի մէնջ արարեալ, հատուցանիցես և վասն իւրաքանչիւր ամի || զուժսուն հազար թուման, ի վերայ այնորիկ չաւելեալ զտոկոսին, վճարիցես»: Յանձն էառ շահ թամազն զասացեալ պարտան վճարել: Եթող մօսկոֆն զԿիլան և զնաց յերկիր իւր և հաստատեաց զզաշն խաղաղութեան ընդ պարսից, զի շահ թամազն վասն իւրաքանչիւր ամի յապաղելոյ վճարման պարտուցն զուժսուն հազար թուման վճարիցէ:

§ 56

Իսկ Ղուլի խանն լետ վճարելոյ գործոցն, որ առ Շիրազով, ել անտի և զնաց ի վերայ Եզդու, զի և անդ բազում աղուանք էին: Եւ թամուր անուամբ ոսն փաշայ օսմանցւոց էր ի մէջ նոցա: Սա իրրև լուաւ, թէ Ղուլի խանն դայ ի վերայ աղուանիցն, խոյս ետ, ել ի միջոյ աղուանից հարիւր հեծելովքն իւրովք, որք էին հարիւր սպառազէնք, և փախուցեալ զնաց մինչև ի Համատան, ուր գեռ ևս կային օսմանցիքն: Բայց ոչ եմուտ ի Համատան, այլ աւերեալ բերդ մի մերձ քաղաքին գոյ Զահտարան¹⁾ անուանեալ, զնա ամրացուցեալ անդ նստաւ և-ոֆն [100-ովն] հանդերձ: Այլ Ղուլի Սանն ելեալ ի Շիրազու գօրօքն հանդերձ՝ զնաց ի վերայ Եզդու և մարտեաւ ընդ աղուանից և եհար սրով սուսերի, և որք կարացին փախչիլ, նոքա միայն ապրեցան: Եւ նստաւ Ղուլի խանն լեզդ զաւուրս իր [28]: Յետ այնորիկ դարձ արար, զնաց ի Շօշ: Իրրև լուաւ թամազ շահն զգալուստ նորա, առաքեաց սուրհանգակս ընդ առաջ նորա՝ ասել ցնա, թէ «Լօռն, այսինքն գօրն Բաղդիարայ հզօրացեալ՝ զգիւղօրէս մեր ասպատակէ և գերի վարէ:

2) Ձեռագրում Զահտարանն:

երթ ի վերայ նորա»: Լուաւ Ղուլի խանն և ճանապարհ արարեալ զչորեքտասան աւուրս՝ եհաս անդ և մարտեաւ ընդ¹⁾ բաղդիարացիսն և եհար զգօրս նոցա սրով սուսերի: Զայս իրրև լուաւ շահ թամազն, յոյժ ուրախ եղև և խլալայս փառաց առաքեաց Ղուլի խանին:

§ 57

Յետ այնորիկ Ղուլի խանն առաքեաց առ շահ թամազն ասել, թէ «Դէմ եղեալ եմ զնալ ի վերայ Դէսվէլ²⁾)-Շուշտարաց»: Զի Դէսվիլայ³⁾ և Շուշտարաց ազգն ասպտամբեալ լիշխանութենէ պարսից՝ հակառակ կային և զիր [26] գիւղօրէս ասպատակեալ և գերեալ էին: Յայնժամ զրեաց առ նա թամազ շահն, թէ «Ընդ ամենայն տեղիս, որք միանգամ հակառակք և փնասակարք են տէրութեան մերում, ջնջեցես»: Գնաց, եհաս Ղուլի խանն ի Դասվէլ, Շուշտար և մարտեաւ ընդ ազգին այնմիկ զաւուրս չորեքտասան և յաղթահարեաց զնա և զբազումս կոտորեաց սրով սուսերի և խաղացոյց զգետս արեան և զմեռ [15,000] տուն գերի վարեաց և առաքեաց ի Սորասան, որ ի լեզուս այլոց ազգաց Մաշառ կոչի: Իրրև գիտակ եղև⁴⁾ գործոյս այնմիկ շահ թամազն, ուրախութիւն մեծ եղև նմա և հրամայեաց զքաղաքն ամենայն կերպասիւք և բենեզօք զարդարել և զաւուրս բազումս զհանդէս ուրախութեան առնել: Մանաւանդ աստի եղև պատճառն մեծի կոտորուածոց երկուց ազգացս այսոցիկ, այսինքն է՝ բաղդիարացւոց և Դասվիլ-Շուշտարացւոց, զի լառաջ սոքա միաբան լեալ՝ օգնականք էին միմեանց և յետոյ ի պատճառս նենդութեան իրիք եղելոյ առ միմեանս՝ խոռովեցան: Եւ չորժամ Ղուլի խանն ել ի պատերազմ ի վերայ նոցա, նոքա անմիաբան լեալ՝ ոչ եղեն միմեանց օգնականք: Եւ Ղուլի խանն եռ [7,000] գօրօք միայն զամենայն մի առ մի, սակաւ առ սակաւ կոտորեաց:

1) Ձեռագրում պակասում երկու բառը:
 2) » Դէսվէլ:
 3) » Դէսվիլայ:
 4) » պակասում և եղև բառը:

§ 58 Եւ յետ յաղթութեանցս այսոցիկ Ղուլի խանն առաքեաց առ շահ Թամազն՝ զիտակ առնել զնա զործոց լուրոց և ասել նմա, թէ «Կամիմ երթալ ի վերայ օսմանց-ւոց»: Թամազ շահն ոչ կամեցաւ զայս, այլ պատասխանի արար նմա շահ Թամազն, թէ «Ես հրեշտակս առաքեալ եմ առ նոսա՝ ասել, թէ զքաղաքս մեր, զորս ի ժամանակս ձախորդութեանց մերոց չափշտակեցիք ի մէնջ, դարձուցէք յետս, ապա թէ ոչ, պատասխանի ինչ արարէք մեզ: Եւ արդ բազում աւուրք են, յորմէ հետէ սպասեմ լրոյ յայնմ կողմանէ և չև ևս ընկալալ: Ակն կացուք փոքր մի ևս և պատրաստեսցուք զօրս երթալ ի վերայ նոցա»:

[Գ Լ Ո Ւ Ե Է Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ]

Զիարդ էառ Ղուլի խանն զՀամասանն ի ձեռաց օսմանցւոց բազում պատերազմաւ:

§ 59 Զկնի իսպառ վանելոյ Ղուլի խանին զաղ-ուանսն յաշխարհէն պարսից՝ հրեշտակս առաքեաց շահ Թամազն ի Կ. Պօլիս առ օսմանցին հրովարտակօք հանդերձ 21x
 || ի բաց պահանջել զքաղաքսն, զորս չափշտակեցին նոքա յիշխանութենէ լիւրմէ: Արդ ի ժամանակին յայնմիկ փաշայ էր Համատանայ Արտըրանման¹⁾ անուամբ ոմն: Այդ եղև նմա, թէ Ղուլի խանն զզօրս ժողովէ գալ ի վերայ Համատանայ, և առաքեաց փութանակի ի Կ. Պօլիս հրովարտակս առ սուլտան Ահմէտն՝ ասել նմա, թէ «Պարսիկն պատրաստեալ է գալ ի վերայ մեր ի մարտ»: Պատասխանի արար նմա սուլտանն, թէ «Պատրաստ լեր ընդդէմ կալ նմա, և ահա ես առաքեցիք քեզ զօրս ի թիկունս»: Ապա առաքեաց հրովարտակս առ փաշայն Յամթայ²⁾ ժողովել զօրս և գալ ի Համատան: Եւ նորա ժողովեալ զզօրս ի Մուշ գաւառէ ի մարաց ազգէ վարժս սրոյ երեսուն և երիս հազարս՝ չու արար խաղաց, զնաց ի Համատան և յաւելեալ ի զօրսն, որք անդ էին, եղեն քառասուն և հինգ հազար: Իսկ սուլտանն օսմանցւոց ընկալեալ զղեսպանն պարսից՝ պահէր ի զիպահոջ և ոչ փութանակի առնէր բանից հրովարտակին պատասխանի, մինչև, որ ինչ պիտոյ իցէ մարտի, պատրաստեսցի: Այլ Արտըրանման փաշայն Համատանայ դարձեալ զրեաց առ սուլտանն, թէ «Սակաւ է զօրն մեր և ոչ բաւէ ընդդէմ զօրացն պարսից»: Եւ զրեաց առ փաշայն Նդեսիոյ, որ է

1) Չեռագրում Աբրահիման:
 2) » » յԱմրայ:

Ուռնա¹⁾), առաքել զգօրս ի Համատան: Եւ նորա ժողովեալ զեօթն հազար զինուորս ի մարաց սիկարեանս և կացուցեալ նոցա զօրագլուխ զոմն, զոր Թօխմախ անուանէին, առաքեաց ի Համատան: Իբրև հասին անդ, հրաման ետ Արտըրահման փաշայն նոցա երթալ ի տեղի մի, զոր նահավանդ ասեն, երեք աւուր ճանապարհաւ հեռի ի յուլուկերատոյ պարսից քաղաքի:

§ 60 Իբրև ազդեղև Դուլի խանին, թէ օսմանցին զզեռպանն իւրեանց ի դեպահոջ կալեալ պահէ, ստուգեաց ի միտս իւր, թէ օսմանցին խաղաղութեամբ ոչ տալ ի բաց զքաղաքսն, զորս էառ, այլ պատրաստի ի պատերազմ, յաւել և ինքն ժողովել զգօրս բազումս: Եւ ել, գնաց ի յուլուկերատ, որ մերձ է նահավանդու երկց աւուրց ճանապարհաւ, և անդ էր բանակն օսմանցւոց: Զաւուրս 29 եկաց անդ, և ոչ եղև նոցա ազդեղև առնել միմեանց վասն պատերազմի: Ապա Դուլի խանն առաքեաց առ Արտըրահման փաշայն Համատանալ՝ ասել նմա, թէ «Ոնաղաղութեամբ տուք մեզ ի բաց զՀամատան, զոր առիք ի մէնջ ի ժամանակ վերգովման թագաւորութեանս մերոյ, ապա թէ ոչ, մեք մեզէն եկեալ առնումք պատերազմաւ»: Եւ առաքեաց Արտըրահմանն ասել նմա, թէ «Ժուժեա ինձ զաւուրս ժ [10], և ես ալդմ բանի պատասխանի արարից»: Զայս յայն սակս ասաց, զի Ալի փաշայն, որ ժամանակին յայնմիկ երկրորդ էր սուլտանին օսմանցւոց, զիրս ի ծածուկ առաքեալ էր առ սա և առ Իբրահիմ փաշայն Թարեղու և առ Հիւսէյն փաշան Սիւնի կամ Սինու, թէ «Յորժամ Դուլի խանն գայ պաշարէ զքաղաքն, տուք նմա զքաղաքն խաղաղութեամբ և մի մարտնչիք»: Եւ այսմ սուլտանն չէր գիտակ: Եւ վասն այսորիկ այսպիսի բանիւք ժամանակ պայմանէր, որպէս զի նա ի յանցանել ժամանակին վառեալ ի պատերազմ եկեացէ զօրօք, յանդիման լիցի քաղաքին և ապա ըստ բանի գրելոյ վէզիրին՝ տացէ զՀամատան: Իսկ պատճառն այս-

1) Ձեռագրում որ է Ուռնա բառերը գրված են փակագծերի մեջ՝

պիսի ծածուկ տալոյն զհրաման՝ այս էր, զի եթէ յայտնապէս գայս հրաման տայցէր վէզիրն¹⁾, ընդվզեալ յառնէին ընդդէմ նմա և հարկադրէին²⁾ զսուլտանն դատապարտել գնա, և եթէ ոչ, գնա ևս յաթոռոյ իջուցանէին: Վասն այն ի ծածուկ արար նա զհրաման գայս:

§ 61 Իսկ³⁾ Հասան փաշայն Քրմանշալու և Թամուր փաշայն, յորմէ յառաջ քան զայս կարգեալ զուլիզ պատմեցաք, թէ զԶահաարանայ բերդն ամբացուցեալ նստաւ, ոչ գիտէին, թէ յայսպիսի ծածուկ հրաման եղեալ է ի վէզիրէն, զի սոքա ոչ էին հնազանդք և մտերիմք վէզիրին: Վասն այսորիկ առ սոսա ոչ գրեաց զայնպիսի գիր: Ապա Ապտըրահման փաշայն առաքեաց, կոչեաց զԹամուր փաշայն գալ ի Համատան: Եւ նա, որ յայնժամ ունէր զօրս իբրև վեց հազար, եկն ի Համատան զօրօքն հանդերձ: Եւ եղև յաւուր միտում, չորժամ խորհուրդ առնէին փաշայքն, ասէ Թամուրն ցԱրտըրահմանն, թէ «Հանցուք զամենայն զօրսն բերդիս այսորիկ և մեր զօրօք ելեալ արտաքս՝ յառաջ խաղասցուք ի վերայ բանակին պարսից, չանկարծակի յարձակիցուք ի վերայ նոցա, և կարճեսցին նոքա այնուհետև գալ, պաշարել զբերդս մեր»: Պատասխանի ետ Արտըրահման || փաշայն, թէ «Ոչ կարեմք զայդ առնել, զի ոչ զոյ մեզ հրաման ի սուլտանէն և կամ յերկրորդէն՝ զզօրս ի բերդէս հանել և կամ ինձ ընդ առաջ գնալ Դուլի խանին և մարտնչիլ: Ինձ գրեալ է երկրորդն սուլտանին, թէ կաց, մնա դու ի բերդիդ, և եթէ եկեսցէ Դուլի խանն, յայնժամ յղեա ընդդէմ նմա զԹամուր փաշայն վեց հազար զօրօք ի մարտ, իսկ դու մնայ ի ներքս և զբերդն պահա»: Եւ յետ վճարելոյ խորհրդոցն՝ առաքեաց զԹամուր փաշայն

22.v

1) Ձեռագրում վէզիրին:
 2) , հաւակնէին:
 3) , իսկ բառից հետո գրված է յեղել մի բառ, վոր հետագայում գարձյալ սև թանաքով տառերը հաստացնելով դարձրել են գին: Սրա դիմաց ալ յուսանցքում մատիտով գրված է հարցականով գին?:

վեց հազար զօրօք ընդդէմ Ղուլի խանին, որ մերձ էր ի Համատան հասանիլ:

§ 62 Գնաց թամուր փաշայն¹⁾ և եհաս ի տեղի մի մերձ Ուլուկերտոյ և բանակեցաւ առ ջրովն, որ երկրին բարբառովք Արիմուշէ անուանեալ: Լուաւ Ղուլի խանն զգալուստ նորա և եկն, ճակատեցաւ ընդդէմ նորա երկոտասան, հազար զօրօք ընտիր պատուականօք: Եւ զերիս ժամս պատերազմեալ կոտորեցին զմիմեանս: Ի պարտութիւն մատնեցաւ զօրն թամուրայ և ի գիշերացն փախուցեալ եկն ի Համատան: Իսկ ինքն թամուրն աճապարեալ գնաց ի բերդն իւր, զոր Զահտարան ասեն, որպէս ի վերագոյնդ պատմեցաք: Իբրև ետես Արտըրահման փաշայն զայսպիսի ելս պատերազմին և զփախուստ թամուրին, ի նմին գիշերի առեալ զկանայս իւր և զուստերս և զգոտերս իւր՝ ել ի Համատանայ և փախեաւ խն [45] հազար զօրօքն: Իբրև առաւօտ եղև, և ոչ մի ոք յօմանցւոց մնաց ի քաղաքի անդ, այլ ամենեքեան ցրուեցան: Ղուլի խանն դառաջինն երկնչէր ի թամուրէն, թէ մի գուցէ դարձյալ զօրաժողով լինիցի և աշխատեցուցէ զինքն, պնդեցաւ զհետ նորա մինչև ի բերդն Զահտարան՝ ձերբակալ առնել զնա: Այլ նորա փախստական ետեալ անտի՛ գնաց ի թամուրէդ, որ յայնժամ դեռ ևս ի ձեռս օմանցւոց էր: Եւ ոչ կարաց Ղուլի խանն զնա ըմբռնել: Գիր ինչ անկեալ էր ի ձեռս թամուրին, յորում գրեալ էր ի վէզերէն առ Արտըրահման փաշայն և առ այլ երկու փաշայն Համատանայ, թէ «Ի գալ Ղուլի խանիդ ի վերայ քաղաքիդ, թողէք զդա նմա և զուք խոյս տուեալ ի նմանէ՛ մի մարտնչիցիք»: Զայս գերս թամուրն ի ծածուկ առ ինքն պահեալ՝ ոչ ինչ ասաց և ոչ եցոյց փաշայնի թամուրիդոյ մինչև յերկու ամիս: Իսկ Ղուլի խանն եկեալ, հասեալ ի Համատան՝ եզիտ զնա այնպէս լքեալ, եմուտ ի ներքս: Եւ այսու օրինակաւ էառ զքաղաքն զայն: Եւ յաւուրս բազումս, զորս և գտանէին յօս-

1) Ձեռագրում թամուր խանն:

մանցւոց ազգէ, կալեալ բերէին առ նա, և նա հրաման տալը սպանանել, և կոտորէին:

§ 63 Ապա գտին պարսիկքն զհինգ քրիստոնեայս, որոց չորքն էին յազգէ հայոց, և մինն յասորւոց: որք յօմանցւոց երկրէ եկեալ էին, ոմն ի Բաբելոնէ, որ կոչիւր Սարուխան, ոմն ի Կարնոյ, որ կոչիւր Ղարա-Բիբար, որ և աղանահատ լեալ էր, ոմն մուշեցի՝ Թոռուն անուանեալ, ոմն ԿՊօլսեցի՝ Հանսա կոչեցեալ, և այլ ոմն նինուէացի՝ Արդի անուանեալ: և սա էր ասորի: Սոքա էին վաճառականք և մնացեալք էին ի քաղաքի անդ, և գտին զնոսա պարսիկքն՝ թագուցեալ ի տան կարգաւորացն Ֆուանդաց և ածին առաջի Ղուլի խանին: Հարց-փորձ արար զնոսա Ղուլի խանն, թէ ուստի՞ և ձրպիսիք ոչք իցեն և զի՞նչ ունիցին: Նոքա վկայութեամբ և ձրպիսիք ոչք իցեն և զի՞նչ ունիցին: «Վաճառականք եմք», և ցուցին ոմանց հաստատեցին, թէ «Վաճառականք եմք», և ցուցին նմա, թէ զինչ ապրանս բերեալ էին: Ապա հարց-փորձ արար, թէ որքան դրամով էին ինչք իւրաքանչիւր իւրեանց: Պատասխանի ետ Սարուխանն, որ բարեկացի էր, և ասէ. «Ես զմետաքս և զայլ բազում ինչ բերեալ էի առ ի վաճառել ի զօրս քո, և ոմն ի զօրուէդ¹⁾ էառ լինէն զվեց քսակ փողոյ զմետաքսն իմ և զքսան և չորս քսակի²⁾ զպանդար եաշմաղ և զվեշտասան քսակի սամուր, զախում, սագ-բաջ, ճլղաւաչ, ռեվանդ: Եւ այժմ ոչ տալ ինձ ոչ զապրանս իմ և ոչ զգինս նոցա»: Ասէ Ղուլի խանն. «Ճանաչե՞ս զնա արդեօք»: Պատասխանի ետ այրն, թէ «Այո, ճանաչեմ»: Յայնժամ հրաման ևս Ղուլի խանն, հրամայեաց գտանել զնա և բերել առաջի իւր: Եւ գտեալ ածին առաջի նորա: Եւ իբրև ստուգեաց, թէ այնպէս է, որպէս ասաց վաճառականն, էառ ի ձեռաց նորա զայն ամենայն և ետ տանել ի տուն իւր: Իսկ զհալ վաճառականն մխիթարեալ՝ ասաց. «Ես զքեզ ոչ սպանանեմ, այլ ազատ արձակեմ, զնա, ուր և կամիս. բայց զինչս քո ոչ տամ քեզ, զի զայն Աստուած ինձ ետ: Գնա խաղաղութեամբ, և Աստուած տացէ քեզ դարձեալ»: Սոյնպէս և զինչս այլոցն ամենեցուն քրիստոնէիցն էառ և յանձն արար

1) Ձեռագրում ի զօրուիդ: 2) սակի:

գնոսա առն միում քրիստոնէի համասանցուլ ի հայոց ազգէ Մանասէ անուամբ և հրամայեաց նմա զպիտոյս դարմանոյ նոցա տալ, ցորքան կայցեն ի քաղաքի անդ, և երբ խնդրեսցին գնալ, արձակեսցէ գնոսա երթար Եւ նա արար այնպէս, և չեա՛ աւուրց ինչ ելեալ գնացին իւրաքանչիւր լերկիր իւրեանց:

§ 64 Արդ, Ղուլի խանն նստաւ ի քաղաքի անդ գաւուրս ամսոյ միոյ: Եւ չեա այնորիկ առեալ ընդ իւր զօրս իբրև հնգեասան հազար՝ չողաւ առնուլ զՍիւն քաղաք և էառ գնա: Եւ էին անդ բազում հրէայք ընչաւէտք. կալաւ գնոսա և խոշտանդեալ զանիւք՝ էառ ի նոցանէ երկու հարիւր լիտուն և վեց թումէն փող: Այլ և ի թուրքաց պարսից, որք յոյժ ընչաւէտք էին, կեղեքեաց գնոսա. յոմանց էառ զ20 թումէն, յոմանց զ30 թումէն, յոմանց զ50 թումէն, զ60 և յայլոց զ100, ըստ լաւտ և ըստ նուազ ընչաւէտութեան նոցա: Յետ այսորիկ գիշխանն Սիւնայ¹⁾, որոյ անուան էր Սըփանվերդի, չոյժ կշտամբեաց և կամէր սպանանել գնա դասաստանաւ: Քանզի ասաց, թէ «Յորժամ յարձակեցաւ օսմանցին ի վերայ գաւառաց մերոց, դու իշխան էիր և ընդէ՞ր ոչ ելիր ընդդէմ նմա ի պատերազմ առ ի պաշտպանութիւն գաւառաց, այլ ետուր նմա զքաղաքսն, և լաւեր էամ գաշխարհն մեր»: Բայց յաղագս աղաչանաց ոմանց մտերիմ իշխանաց իւրոց շնորհեաց նմա զկեանսն և էառ ի նմանէ զերիս հազար թումէն փողս:

§ 65 Յետ այսորիկ Ղուլի խանն եթող ի Սիւն քաղաքի զօրս իբրև երկու հազար ի պահպանութիւն և ինքն²⁾ ժը [18] հազար զօրօք ել, գնաց ի վերայ Թաւրէզոյ: Եւ եհաս ի տեղի մի, որ երկրին բարբառով Սախրզ անուանի, և անտի մինչև ի Թաւրէզ վեց աւուր ճանապարհ է ի միջի: Եւ բանակեցաւ անդ գաւուրս երիս: Ազդ եղև օսմանցուց, թէ Ղուլի խանն մերձեալ է հասանիլ ի վերայ քաղաքիս: Յայնժամ Թամուր փաշայն եմուտ առ փաշայն Թաւրիզոյ և ասէ. «Ահա Ղուլի խանն գալ ի վերայ մեր և,

1) Զեռագրում Սիւնեաց:
2) ինքն:

որպէս լսեմք, մերձ է հասանիլ ի տեղիս այս. աոցուք ի զօրաց քաղաքիս, կլցուք արտաքս և, մինչ չև եկեալ, պաշարեալ է նա զքաղաքս, ի դիմի հարցուք նմա և վանեալ գնա՝ ի բաց հալածեսցուք»: Հաճոյ թուեցաւ փաշային Թաւրիզոյ բանս այս, և սկսաւ կարգել, կազմել, վառել և պատրաստել զզօրսն:

§ 66 Եւ մինչդեռ սոքա լայս պատաղեալ էին, Ղուլի խանն լաւուրն երրորդի ի մտանել արևուն վառեցաւ, կազմեցաւ, պատրաստեցաւ՝ ամենայն զօրօքն և ել ի ձի և զվեց աւուր ճանապարհն գալն գիշեր և զվաղորդայն մինչև յօր հասարակ վճարեաց: Եւ այնպէս տազնապաւ ընթացաւ զճանապարհն՝ մինչև զարձանալ ամենեցուն. քանզի լանկարծակի տեսին զինքեանս ի սահմանս Թաւրիզոյ հասեալ: Եւ օսմանցիք ոչ կարծէին գնմանէ այսպիսի ինչ լինել և յանկարծակի տեսին գնա արդէն հասեալ առաջի քաղաքին, զոր համարէին, թէ չեա վեց աւուր զալոց է ի քաղաքէ անտի: Ել ճակատն օսմանցուց պատերազմիլ ընդդէմ նմա, և ուղղեցան ի կողմն Մարանդու և բաղխեցան ընդ միմեանս երկուքին ճակատքն: Բայց փաշայն Թաւրիզոյ զանխլարար խոյս տուեալ փախեաւ, և մնաց միայն Թամուրն վեց ու [6,000] զօրօք ի բերդին պատերազմիլ ընդդէմ Ղուլի խանին: Եւ գաւուրս եօթն խիստ պատերազմեցաւ ընդ Ղուլի խանին, զի էին ի զօրս նորա բազում գազանասիրտք և զօրաւորք ուժով, վարժ մարտի պատերազմի ի լուրիկեցուց և յառփնիդացուց և յայլ խուժաղուժ ազգաց: Եւ զարմանալի էր այնչափ զդէմ ունիլն սոցա զայսչափ աւուրս, զի վեց հազարք ընդդէմ ժը [18] հազարաց կուռէին: Եւ եղև անկանիլ բազում զօրաց լերկոցունց կողմանէ:

§ 67 Իբրև ետես Թամուրն, զի երեք հազարք ի վեց հազար զօրացն իւրոց կորեան, հատաւ նա ի լուսոյ լաղթութեան և խորհէր, թէ ի՞նչ իւրիք զանձն ապրեցուցանել մարթասցի: Ապա հանդէս արար զօրաց իւրոց, խօսիլ սկսաւ ընդ հազարապետս իւր և ասէ. «Դուք ինքնին տեսանէք, զի զօրն պարսից յոյժ բազմապատիկ առաւել քան

զմերս է, և ոչ գոյ յոյս մեզ, թէ մեք այնչափ սակաւ զօրօք զքաղաքս զայս յերեսաց այնչափ պարսկական զօրացն ապրեցուցուք: Եւ արդ լայմհետէ ոչ ինչ օգուս լինի, թէ մեք ի բերդի աստ փակեալ մնասցուք, քանզի որչափ և ընդդիմամարտիցուք¹⁾, քաղաքս այս ելանէ ի ձեռաց մերոց: Եւ ընդէ՞ր զուր տարապարտուց || զանձինս մեր կամակար մտօք կորուսանեմք. ելցուք ի բերդէս և լընդարձակ զաշտի մարտիցուք: Եւ եթէ մեք նոցա յաղթեսցուք, կալցուք մեք զսա, իսկ եթէ նոքա զմեզ յաղթեսցեն, փախիցուք լերեվան և զանձինս մեր ապրեցուցուք»: Հաճոյ թուեցաւ րանս այս հազարապետացն: Ապա թամուրն զերիս հարիւրս եթող ի բերդի անդ պահապանս և ինքն այլ ամենայն զօրօքն ել արտաքս մարտնչիլ ընդդէմ Ղուլի խանին: Եւ էր ինքն արկեալ զիւրե զրահս երկաթիս, նոյնպէս և երիվար նորա զրահիւք պատեալ: Ի դիմի հարաւ Ղուլի խանին երկու հազար ութ հարիւրով ընդ ժր [18] հազարին: Եւ անկան ի զօրաց նորա բազումք, և ինքն երեք հարիւրով միայն փախեաւ դէպ լերեվան, եզիտ զփաշալն թաւրիղու և կամէր ձեռս ամբառնալ ի վերայ նորա լողագս միայն թողոյ զինքն ի մարտի ընդդէմ Ղուլի խանին և փախչելոյն. այլ ոչ կարաց, քանզի փախեաւ:

§ 68 Եւ էսու Ղուլի խանն զթաւրէզ և զորս եզիտ ի զօրացն օսմանցուց, զամենեսեան կտորեաց: Զամբոց մի արարեալ էր ի մէջ քաղաքին օսմանցին, զայն բոլորովին աղարտեալ հիմնայտաղ արար: Եւ նստաւ ի քաղաքի անդ երկու ամիս, մինչև կուտեաց զօրս բազումս իբրև իլ [24] հազար՝ ելանել, գնալ ի վերայ Երեվանայ: Այսչափ անցք անցին ընդ զօրս օսմանցուց, և քաղաքք ելին ի ձեռաց: Եւ թագաւորն օսմանցուց ոչ իմանալք, այլ միայն երկրորդն նորա. քանզի որպէս ի վերագոյնդ պատմեցաք, զայն հրովարտակն թոյլ տալոյ պարսկին առնուլ զքաղաքսն՝ ինքնին միայն առանց հրամանի սուլտանին առաքեալ էր առ երիս փաշայսն, և սուլտանն ոչ զիտէր:

1) Ձեռագրում րնդդիմարտիցում:

[Գ Լ Ո Ւ Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Գ]

[Պարսուքիւն Եսի Թամազի յօսմանցուց եւ գահընկեցութիւն: Թագազրուքիւն Եսի Սբբաս մանկան: Միսիեծա-նուքիւն Ղուլի խանի եւ յաղթութիւնք նորին.]

§ 69 Յորժամ զօրս ժողովէր Ղուլի խանն ի թաւրէզ և խորհէր գնալ ի վերայ Երեվանայ, որ ժբ [12] աւուրց ճանապարհաւ հեռի է ի թաւրէզոյ, լուր եհաս նմա ի Սորասանայ, թէ աղուանն զօրս ժողովեալ է գալ ի Հարաթու ի վերայ Մաշատու և ունի զքառասուն հազար մարտիկս: Իբրև ստուգեաց զրանս զայս, եթող զգնալն լերեվան և չու արար, խղաց, գնաց ի Մաշատ, որ է այն ինքն Սորասան պարսից: Եւ կացեալ անդ աւուրս ինչ՝ հանդէս արար զօրաց իւրոց և ել, գնաց ի վերայ Հարաթու, որ է քաղաք աղուանից, որք անուանեալ կոչին սրաւոր աղուանք¹⁾ զոռ պատերազմողք: Եւ եհաս մերձ Հարաթու Ղուլի խանն և բանակեցաւ: Ել ի Հարաթոյ աղուանն ընդդէմ Ղուլի խանին, և զժբ [12] աւուրս զցայդ և զցերեկ պատերազմեցան: Ապա աղուանն դարձեալ եմուտ ի քաղաք անդ և ոչ ել արտաքս յաւուրս ինչ: Եւ Հարաթն է յոժ մամրագոյն քաղաք դժուարայաղթ: Եւ եղև նոցա բազում անգամ ի բերդէ անտի ելանել, յարձակիլ ի վերայ զօրացն պարսից, և ոչ կարացին յաղթել նոցա, այլ անկան սրով սուսերի:

§ 70 Իբրև իննսուն և մի օր եղև պաշարման քաղաքին, նուազեցաւ կերակուր նոցա, և սով սաստիկ եղև՝ մինչև զմիմեանց միսն ուտել: Ազդ եղև Ղուլի խանին վասն այսպիսի անցիցն նոցա, և հրաման ետ զօրուն՝ մի հար-

1) Ձեռագրում աղուանի:

կանել զոք յաղուանից, յորժամ ելանեն արտաքս ի բերդէն և մտանեն ի բանակս առնուլ զկերակուր: Եւ ապա նեղեալ նոցա ի սովու՝ սկսան սակաւ առ սակաւ գալ, շըրջիլ ի բանակն և զանձինս իւրեանց յազեցուցանել: Եւ ոչ զոք խուէին զինուորք Աուլի խանին, այլ խաղաղութեամբ ընդունէին զնոսա, և նոքա գային ի բանակն և երթային, մինչև զօրագլուխն նոցա ևս եկն արտաքս, և կալան զնա եւ ածին առաջի Աուլի խանին: Եւ նա ընկալաւ զնա և ետ զզեցուցանել նմա ծիրանիս ի պատիւ և բազում շքով ունէր զնա առ իւր: Եւ այսպիսի խորագիտութեամբ և պատրանօք էառ զՀարաթ քաղաքն: Եւ կալեալ զմեծամեծ իշխանսն՝ բանիւք խաղաղութեան և քաղցրութեան յինքն անկոյց զնոսա և մեծացոյց և արար իւր զօրապետս: Իսկ զգերդաստանս քաղաքին ոչ գերեաց և ոչ ասպատակեաց, այլ զնոսա տունս տունս առաքեաց, սփռեաց զնոսա ի գանազան քաղաքս պարսից: || Եւ զզօրս աղուանիցս այսոցիկ հնազանդեցոյց իւր զօրս լինել: Յետ այսորիկ կացոյց իշխան ի վերայ Հարաթու զոմն յիւրեանց անախ և ինքն եթող, զնաց ի Մաշատ, որ է այն ինքն Սորասան, և անդ եկաց:

25. r

§ 71 Ընդ այն ժամանակս յաշխարհէ Օղբէկաց յարուցեալ էր այր մի, որ իբրև զելուգակ¹⁾ շըջեալ ասպատակէր զբազում գաւառս և կոտորէր սրով, և օգրէկաց թագաւորն զնա ոչ կարացեալ էր ըմբռնել: Եւ եղև նմա գալ, մտանել ի սահմանս Սորասանայ պարսից: Վասն սորա լուեալ էր Աուլի խանն, թէ է այր զօրաւոր, պատերազմող, և զոր ինչ մի անգամ առնէր ի տեղիս տեղիս, կամէր զնա ի ձեռն արկանել: Իբրև լուաւ, թէ ահաւասիկ նա շըջի ի սահմանս Սորասանու, հանդերձեցաւ, պատրաստեցաւ երեք հազար քաջ սպառազինօք և հասեալ ի վերայ նորա՝ կոտորեաց զզօրս նորա և զինքն ձերբակալ

1) Ձեռագրում գրված է գաւազակ ու սրա գլխին մինչույն ձեռացազրով կելուգակ:

արար և երկր ի Մաշատ, և էր ի կալանս գաւառս լիսունս և ապա սպան զնա: Իբրև լուաւ զայս օգրէկի թագաւորն, ուրախ եղև: Յետ այսորիկ Աուլի խանն առաքեաց զգեսպան առ թագաւորն օգրէկի հրովարտակօք հանդերձ՝ ասել նմա, թէ «Առաքեսցես մեզ զհազար թումէն փող, ապա թէ ոչ, պատրաստ լեր, զի գալոց եմ ի վերայ քոյ ի մարտ պատերազմի»: Իբրև էառ թագաւորն զհրովարտակն այնպիսի բանից, կալալ վաղվաղակի գայրն, որ զեսպան էր, և եղ յերկաթս ի դիպահոջ: Լու եղև Աուլի խանին, զոր ինչ արար թագաւորն օգրէկի, և զօրս պատրաստեաց երթալ ի պատերազմ ի վերայ նորա:

§ 72 Բայց աստանօր պատշաճ է մեզ յառաջագոյն գրել փոքր մի զեղելոց առ ի յօսմանցւոց և ապա ըստ կարգի զայս սկեսալս պատմել: Թամուրն, որ առ Թաւրէզ քաղաքաւ պատերազմէր և փախեաւ, գտեալ էր զիպուածով իւրք զայն թուղթն, զոր գրեալ էր Ալի փաշայ վէլիրն օսմանցւոց սուլտանին առ փաշայն Թաւրիզու և առ այլ նմանս, թէ «Յորժամ գայ Աուլի խանն, տուր զքաղաքն և մի պատերազմիք ընդ նմա»: Զայս զիրս նորա առեալ զնաց ի Կ. Պօլիս և մտեալ առ սուլտանն՝ եցոյց նմա, և թէ զքանի քաղաքս վասն հրովարտակիս այսորիկ ետուն պարսից՝ փաշայք քաղաքացն, զեկոյց նմա և զբազում ամբաստանութիւնս զփաշայիցն արար առաջի նորա: Իսկ սուլտանն, որ այսոցիկ ամենեցուն ոչինչ տեղեկութիւն ունէր, տիր զայրացաւ և հրաման ետ սպանանել զնա և զայլ ոմն կացոյց ի տեղի նորա: Զսոյն գործս վէլիրին իբրև իմացան ծառայք սուլտանին, ալսինքն է՝ զօրքն ամենալն, բողոք բարձին առ սուլտանն, թէ «Մեք ոչ կամիմք զհաշտութիւն առնել ընդ պարսից, զի զհասարակաց սանս զինուորական դասուն մերոյ աւար առեալ նոցա՝ ի ձեռս նոցա կայ, և այս մեզ վատահամբաւութիւն և նախատինք մեծ է, զոր ոչ կարեմք տանել: Կամիմք զխազմ առնել ընդ

նոսա և հանել զայն սանն ի ձեռաց նոցա»: Փոխեցին զայն սուլտանն և զեղբայրն նորա զՄահմուտն նստուցին ի տեղի նորա:

§ 73 Յայնժամ սուլտանն վաղվաղակի առաքեաց զսուրհանդակս հրովարտակօք հանդերձ առ Ահմէտ փաշայն Բարեղոնի՝ ասել նմա, թէ «Կացուցի զքեզ ընդհանրական զօրագլուխ՝ երթալ ի պատերազմ ի վերայ Համատանու»: Իբրև ընթերցաւ նա զհրովարտակն, ձեռն էարկ փութանակի զզօրս ի մի վայր խմբել—զվեց հազար մարտիկ սպանագէն, զերիս հազար սպահիս, զհինգ հազար արարացիս, զվեց հազար մարս և զվեց հազար բաշխլանս և զայլ բազում խուժանս: Եւ եղեն ամենայն ընտրեալ սպանագէնքն իբրև իզ[26] հազար վառեալք ի պատերազմ: Հանդերձեցաւ, պատրաստեցաւ ամենայն պիտուիւք մարտի և ել, գնաց ի վերայ Համատանու. իբրև եհաս մերձ քաղաքին ի տեղի մի Լաքլար անուանեալ, անդ բանակեցաւ: Եւ սկսաւ զզօրսն կարգել, զախոյանս կառուցանել և զզօրսն ուղղել ընդդէմ քաղաքին և ամենայն պատերազմական զօրօքն գնա պաշարել:

26.v § 74 Ազդ եղև թամագ շահին պարսից, որ ի Շօշ նստէր, և ել նա հարիւր հազար զօրօք հասանիլ ի պաշտպանութիւն քաղաքին, մինչ չև ժամանեալ էր || Ահմէտ փաշայն անդ՝ զպաշարումն քաղաքին մատուցանել: Ընդ այն ժամանակս Ղուլի խանն էր¹⁾ ի կողմանս Խորասանայլուր եհաս նմա յաղագս գալստեան օսմանցւոցն: Եւ յառաջագոյն գրեաց նա առ թամագ շահն՝ ոչ լինել ձեռնամուխ պատերազմելոյ ընդդէմ օսմանցւոցն, այլ մնալ գալստեան իւրոյ, քանզի գիտակ էր նորին վատասրտութեան: Եւ էր նա բանակեալ ի տեղի մի, որ Կարմիր սար կոչի: Իբրև ետես, զի օսմանցին եկեալ, հասեալ ի տեղի մարտին՝ ոչ տայ դուր զօրուն, այլ յառաջ մղէ պատերազմիլ, ոչ անսաց բանից Ղուլի խանին, այլ վաղվաղակի յառաջ մատուց զճա-

1) Ձեռագրում է:

կատն իւր ընդդէմ օսմանցւոց: Ի դիմի հարան միմեանց երկոքին ճակատքն և թացին զդաշտն արեամբ կոտորելոցն: Ի փախուստ դարձաւ զօրն շահ թամագին, և անկան ի նմանէ լը[38] հազար սպանագէնք, և օսմանցին զօրացեալ յաղթեաց պարսիցն: Իբրև ետես շահն, զի այնչափ զօրօք ոչ կարաց զդէմ ունիլ օսմանցւոց, լեաս դարձաւ գնալ ի Շօշ: Եւ հասեալ անդ՝ զՄայնար անուամբ խանն առաքեաց ի դեսպանութիւն առ Ահմէտ փաշայն, որ ընդհանրական զօրագլուխ էր օսմանցւոց զօրուն, խօսիլ ընդ նմա ի խաղաղութիւն և տալ նմա զՀամատան և առնել զհաշտութիւն: Յանձն էառ Ահմէտ փաշայն առնել զհաշտութիւն և առեալ զՀամատան՝ հաստատեաց զգաշն խաղաղութեան: Եւ զոմն ի մեծամեծաց իւրոց Իբրահիմ անուանեալ, որ էր զօրագլուխ աջակողմն թեին, իշխան կացոյց քաղաքին և ինքն դարձ արար, գնաց ի Բաբելոն:

§ 75 Ընդ այն ժամանակս Ղուլի խանն, որ ի Խորասան էր, ընդ աղուանան կուէր. քանզի արդալի աղուանն բռնացեալ, դիմեալ էր գալ ի պատերազմ ի վերայ Շօշայ: Եւ Ղուլի խանն ընդդէմ ելեալ նմա ի ճանապարհին՝ ոչ թոյլ տայր գնալ, հասանիլ ի Շօշ և գաւուրս երեսուն և երկուս մարտեաւ ընդ աղուանից և կոտորեաց զնոսա սրով սուսերի մինչև ի սպանել զօրաց նոցա, և դարձաւ ի Խորասան: Իբրև լուաւ, զոր ինչ մի անգամ արար շահն ընդ օսմանցիս, զիարդ վատութեամբ կորոյս զզօրս իւր և ետ զՀամատան ի ձեռս օսմանցւոցն և դաշինս խաղաղութեան կռեաց ընդ նմա, յոյժ գայրացաւ և զհնարս խորհէր ըմբռնել գնա և յարգելս դնել, որպէսզի յիւր ձեռս մնասցէ կառավարութիւն բովանդակ թագաւորութեանն: Քանզի տեսանէր, զի նա էր այր վատախորհուրդ և անարի կնատ ոմն, և ամենայն խորհուրդք և գործք նորա ոչ էին իշխանութիւն թագաւորութեան, այլ ի յաւեր և ի կործանումն: Ապա Ղուլի խանն հանդերձեցաւ, պատրաստեցաւ բազում զօրօք երթալ ի Շօշ: Եւ էր թիւ զօրաց նորա իը-

[28] հազար հեծելոց և վեց հազար հետևակաց: Եւ արար ամենեցուն զբանս երկաթիս և յօրինեաց զամենեսան զինուզարդու և ելեալ ի Սորասանայ՝ չու արար, խաղաց և եկն, եհաս ամենայն զօրօքն ի Շօշ: Բայց ոչ ի քաղաք անդ եմուտ, այլ ի բացեայ ի տեղի մի Աշրաւապատ՝) անուանեալ բանակեցաւ:

§ 76 Մինչ չև եկեալ, հասեալ էր Ղուլի խանն ի Շօշ, ոմանք ի մեծամեծաց շահին ասէին ցնա. «Տէ՛ր մեր արքայ, Թամազ խանն, որ զիմեալ է գալ առ քեզ, ոչ ուղիղ սրտիւ գայ. զի որպէս մեք լսեմք զնձանէ, և նորա գործքն և շարժումն յայտ առնեն, զիմեալ է նա գալ առ քեզ նենդութեամբ, արկանել զքեզ ընդ ձեռամբ և զթագաւորութիւն քո յափշտակել: Ո՞չ իմանաս, թէ որքան զօրօք գայ նա և ընդէ՞ր այսքան բազմութեամբ զօրաց գայ, եթէ ուղիղ մտօք առ քեզ գայ»: Այսպիսի բանիւք բազում անգամ նախագուշակք եղեն նմա խորհրդակահար նորա, այլ նա ոչ հաւատաց: Եւ բաց ի նոցանէ էր և այլ ոմն քրիստոնեայ իշխան ի հայոց ազգէ Գաւիթ բէկ անուանեալ, քաջ խորհրդակահար: Եւ սորա իմացեալ և իրազեկ եղեալ զաւուր Ղուլի խանին և երկուցեալ ի մեծամեծ շարեաց, զորոց կասկածէր, թէ հասանելոց են ի վերայ շահին և թագաւորութեան նորա, չեա անցանելոյ երկոց աւուրց ի վերայ այնց բանից, ի զիշերի միում եմուտ առ շահն և սրտացաւութեամբ բարեկամութեան խօսեցաւ նմա ի ծածուկ առանձին և ասաց, թէ «Գիտաս՞ջիր, տէ՛ր մեր արքայ, զի Ղուլի խանն ոչ ուղիղ մտօք գայ, այլ թշնամութեամբ, և մեք ստուգիւ տեղեկացեալ եմք, զի նա գայ ըմբռնել զքեզ և գնել յերկաթի կապանս և զթագաւորութիւն քո ինքն գրաւել. և ահա նա մերձ է վաղիւ ի միւսում աւուր հասանել. || և արդ, տես, թէ որպէս զգուշացիս ի նմանէ»: Յայսմ վայրի ապա միտք շահին զարթեալ և սկսաւ մտախոհ լինել և ի յուզելոց խորհրդոցն իւրոց և ի տազնապելոյ սրտի նորա քունն հատաւ յաչաց նորա և ոչ կարաց ի քուն լինել զայն զիշերն ամենայն: Եւ իբրև առաւօտ եղև, հրամայեաց զամենայն իշխանս իւր

27. r

1) Ձեռագրում Արուսապոս:

ի զարպաս իւր կոչել և խորհեալ ընդ նոսա՝ հաստատեաց զմիտսն իւր ամենայն զօրօքն իւրովք, զորս վասն մարտի ի պատրաստի ունէր, և լսանել արտաքս ի քաղաքէն և ի զգուշութեան կալ՝) յերեսաց Ղուլի խանին, որ գայր ի Շօշ չիսուն և չորս հազար սպառազինօք: Եւ այնպէս արար և այսու օրինակաւ շահ Թամազն զառաջինն ի զգուշութեան եկաց, բայց յետոյ ի մարդելոյ շողոքորդութեանց նորա պատրեցեալ ըմբռնեցաւ ի նմանէ, որպէս կարգաւ ունիմք պատմել:

§ 77 Արդ, իբրև եհաս Ղուլի խանն ի Շօշ և բանակեցաւ փոքր ինչ հեռի ի քաղաքէն, ազդ եղև նմա, զոր ինչ արար շահն, և ի կասկածանս անկաւ, թէ չայտնեցեալ է նմա խորհուրդն իւր: Ապա իջեալ չերիվարէ իւրմէ՝ հեաի ընդ ոմանց իշխանաց իւրոց եկն չողջոյն շահին և անկեա առ ոտս նորա՝ վերերևոյթ խոնարհութեամբ և սիրով երկիր եպագ նմա և ասէ. «Ձի՛ է, տէ՛ր իմ արքայ, զի այսպէս բացօթեալ եղեալ ես. մի՞ գուցե վասն իմ գրան ինչ չարութեան սուտ լուեալ՝ երկուանաս զհաւատարմութենէ իմմէ. որ թէ այսպէս է, գիտաս՞ջիր, տէ՛ր իմ, զի թշնամույ է բանդ այդ: Ձի ես որպէս ի սկզբանէ միամտութեամբ սրտի ծառայէի տեառն իմում և զամենայն հրամանս քո կատարէի և, ուր զինչ առնել առաքէիր զիս, երթեալ առնէի նոյնպէս և այժմ առ ոտս քո եկի, զի զոր ինչ և հրամայիցես ինձ, զնոյն արարից: Քանզի ես ինձէն առանց հրամանի տեառն իմոյ ոչ ձեռնամուխ լինիմ յինչ, այլ չամենայնի բոս հրամանաց քոց գնամ: Եթէ հրամայես ինձ ի Սորասան գնալ, ի Սորասան երթամ, և եթէ ի Ղազուին, ի Ղազուին. իսկ եթէ ի վերայ օսմանցւոյն, ի վերայ օսմանցւոյն գնամ. զոր ինչ և հրամայիցես, ծառայ պատրաստական եմ ես զնոյն առնել»: Արդ, սոյնպիսի կեղծաւոր բանիւք և այլ բազում մարդելոյ շողոքորդութեամբ

1) Ձեռագրում գալ:

զողացաւ զմիտս նորա և հաւատացոյց զնա և դարձոյց զնա ի քաղաքն:

§ 78 Իբրև եմուտ շահն ի քաղաքն, կոչեաց զՂուլի խանն առ ինքն և զմեծարանս արարեալ նմա՝ նստոյց զնա ի վերոյ քան զբաղում մեծամեծս իւր: Ապա ասաց շահն ցՂուլի խանն, թէ «Չամենայն զօրս քո բերցես ի քաղաքս, և դու ևս ի քաղաքի աստ նստցիս և մի արտաքոյ»: Պատասխանի ետ Ղուլի խանն. «Պատրաստ եմ կատարել զհրաման տեառն իմոյ. բայց եթէ զամենայն զօրս իմ մուծից ի քաղաքս, զբաղում նեղութիւնս հասուցանեն քաղաքացւոց»: Չսոյն և զալլ պատճառս շաղաւաչուրթն բանիւք յօղեալ՝ հաճեաց զնա: Եւ նա ասաց. «Բարւոք է, մի բերցես ի քաղաքս, այլ կացցեն առ դրան քաղաքիս»: Եւ այնպէս զօրք նորա կային արտաքոյ քաղաքին բանակեալ: Եւ յայնմհետէ կեղծաւորեալ խոնարհութեամբ և մարդերոյ շողոքորդութեամբ վարելով ընդ նմա՝ լինքն անկոյց զսիրտ նորա, մինչև ամենայնիւ հաւատաց, թէ նա ամենակն անխարդախ, մտերիմ բարեկամ իւր է: Եւ զամենայն իշխանութիւն իւր և զկառավարութիւն և զհրամանատարութիւն բացարձակ ետ ի ձեռս նորա և ասէր ցմեծամեծս իւր, թէ «Զինչ և առնիցէ Ղուլի խանն, իմ հրաման տուեալ է նմա, հաճոյ է ինձ և ընդունելի»: Եւ ասաց ցՂուլի խանն, թէ «Չամենայն, զօր և կամիցիս, արասցես. բայց զայս մի բան մի արասցես, այսինքն է՝ զդաշն, զոր ես ընդ օսմանցւոյն կոեցի, մի ջրեսցես և մի կուրիցես ընդ նմա, զի ոչ է բարի զբան թագաւորի շրջիլ»: Պատասխանի ետ Ղուլի խանն և ասաց, թէ «Չամենայն ինչ, զոր տէրն իմ արքայ հրամայէ, այնպէս արարից»:

§ 79 Ապա սկսաւ հանդէս առնել զօրաց իւրոց և զօրավարաց և տեսանել, թէ մի գուցէ փախուցեալ իցեն ոմանք ի զօրուէն, կամ ի զօրավարաց, և պակասիցի թիւն: Սոյնպէս արար և զզօրս շահին՝ տեսանել, թէ քանի են, և զթիւն երկաքանչիւրոց ի միտ էառ: Եւ զայս զօրծս ստէպ

առնէր և զթիւս իւրոցն և նորա զօրացն ի մտի պահէր և զնոսա ընդ միմեանս խորամանկութեամբ բաղդատէր: Եւ զայս գործս շահն ի նմանէ ոչ արգելոյր և շահն լռիկ կայր¹⁾ և ինչ ոչ ասէր. մանաւանդ ասէր, թէ «Նա, զոր ինչ առնէ, բարւոք առնէ»: Յետ այսորիկ խորամանկն այն ՚ սկսաւ զզօրս շահին աստ և անդ ցրուել. զվեց հաղաքն ի նոցանէ ի Թաւրէզ առաքեաց, զհինգ հազար՝ ի Ղազբին, զերկու հազար՝ ի Մազանդարան. ըստ այսմ և զայլ ամենայն ընտիր ընտիր գունդս ի զօրացն առաքեաց, սփռեաց աստ և անդ: Ապա սկսաւ յաճախել, զալ ի տուն շահին և հանապազ շողոքորդական բանիւք և կեղծաւորեալ սիրով իւրով զսէր նորա ի վերայ իւր առաւելու:

28. v

§ 80 Եւ եղև, զի շահն հրաւիրեաց զնա ի խրախութիւն իւր. և զնացեալ ուրախացոյց զնա: Եւ չեա վեց աւուրց և ինքն համարձակեցաւ հրաւիրել զնա յիւր խրախութիւն: Քանզի յառաջնմէ համբաւ սուտ հանեալ էր զիւրմէ, թէ գնալոց է²⁾ չերկիր իւր, ուստի աղաչեաց զշահն ասելով, թէ «Ես գնալոց եմ յերկիրն իմ. վասն այն, մինչ չև եմ գնացեալ, ինզրեմ ի տեսնել իմմէ արքայէ, զի զայս մեծ շնորհս առնիցես ծառայի քում. եկեսցես մի անգամ ի խրախութիւն, զոր ծառայ քո ըստ աղքատութեան իւրում առնելոց է, և մի արհամարհիցես: Եւ ոչինչ փառք և պատիւ ինձ լինիլ մարթ է առաւել գերագոյն, քան զայս, զոր ինձ առնիցես՝ գալով ի չաղքատայարկ խորան ծառայի քո: Եւ ուրախ լինելով ընդ նմա:» Լուաւ նմա շահն և գնաց ի խրախութիւն նորա: Եւ արար նմա զխրախութիւն մեծ, յոյժ շքեղ, արժանի արքայական մեծութեան, ի չարկի իւրում:

§ 81 Եւ եղև ի յերկարել խրախութեան, չորժամ ուրախութեամբ ուտէին, և շահն զուարճացեալ էր, ասէ

1) Ձեռագրում եւ Եանն լռիկ կայր բառերը զրված են փակագծերի մեջ.
2) » » գնացեալ է:
Արքաւամ Յերեանցի-3

րեցուց ի տեղի հօր նորա և առաքեաց ի Կապրին՝ անդ սնուցանել զնա: Եւ սովաւ շինեաց զմիտս զօրացն և քաղաքացւոցն և խաղաղեցուց զնոսա, և ոչ եղև վրդովուիմն ի նոսա և ոչ աղմուկ, այլ ժողովուրդն հաճեալ ընդ գործ նորա՝ սիրեցին զնա և գովէին զխոհեմութիւն նորա և զխնամարկութիւն:

§ 84 Յետ այսորիկ լուան արք Բաղդիարայ, զոր ինչ արար Ղուլի խանն ընդ շահ Թամազն, ի մի վայր ժողովեցան և գոմն ի միջոց իւրեանց շահ կացուցին և զօրաժողով եղեն գալ ի վերայ Շօշայ ի վրէժխնդրութիւն շահին: Եւ եկին, հասին մերձ Շօշայ և զգիւղօրէս գաւառին ասպատակեալ՝ զբազումս գերի վարեցին և զբազումս սրով կոտորեցին և այսպէս զիննսուն և եօթն գիւղս յաւերածին: Զայս լուեալ Ղուլի խանն՝ ել բազում զօրօք զնաէ ի վերայ Բաղդիարայ¹⁾: Եւ փախուցեալ զնացին, մտին, ամրացան ի բերդ մի Զմլան անուանեալ և ոչ ելին արտաքս: Եւ էր բերդն այն ամուր յոյժ, որոյ մի կողմն առ իւր ունի զԱրուգուրան անուանեալ գետն, և միւս կողմանէ բարձրաբերձ սալրասուր սար զժուարել: Նմին իրի Ղուլի խանն թողեալ զայն՝ եկն եմուտ ի Հաւուզա, որոյ կէսն է արաս, կէսն՝ լօռ, կէսն՝ խորիջի, կէսն՝ շիա, և այսպէս զանազան աղգ են: Իբրև աղգ եղև իշխանին Հաւուզայ, որոյ անունն էր Ալիմարդան խան, թէ Ղուլի խանն գալ, մեծամեծ ընծայիւք և բազում մեծարանօք զնաց ընդ առաջ նորա: Եւ Ղուլի խանն բազում պատուասիրութեամբ ընկալաւ զնա և ծիրանիս զգեցոյց նմա և զօրագլուխ կարգեաց զնա՝ երթալ ի վերայ Բաղդիարայ, և էր անուն իշխանին Ալիմարդան խան:

§ 85 Եւ ինքն չու արար անտի և եկն ի Քրմանշայ և անդ կացեալ զաւուրս [30] հանդէս արար զօրաց

1) Ձեռագրում Բաղդիարայ բառից հետո գրված է նշան և աջ լուսանցքում արված է յերկուսոց հանդիւմ: իբրև են [. . .] արանցն Բ [. . .]:

իւրոց և ապա ել անտի՝ երթալ ի Բաբելոն, և եկն եհաս ի Մայտաշ, անտի ի Հառնաւա¹⁾, անտի Քրենտ, անտի ի Քուիքօռա, որ ստուգարանի ի մարաց բարբառս մանկամարդոյ սար, զի ելք նորա այնչափ դժուարին է, ընդ որ, եթէ ոք ծեր իցէ, ոչ կարէ ընդ այն անցանել: Արդ, ընդ այս ճանապարհ անցեալ Ղուլի խանն իղ [24] ժամ՝ ետես, զի ընդ այնչափ տեղիս ոչ ինչ երթեկութիւն մարդոյ է: Եւ պատճառն է, զի Քուիքօռայ է սար մի, որոյ մի կողմն է սահմանն օսմանցւոց, և միւսն՝ պարսից: Եւ ճանապարհ նորա է մի միայն, և ոչ առաւել, և ի նմին ճանապարհի է իջևան մի ճանապարհորդաց, որ ի բարբառս մարաց Խունալի Մէհմուն անուանի: Արդ, իջևանի յայսմիկ ի զօրացն օսմանցւոց պահապանք կալին, որք զճանապարհն զայն պահէին, և այսմ գիտակ էր Ղուլի խանն: Յորժամ հասարակ գիշեր եղև, ել երթալ և պատուէր ետ ամենայն զօրացն ընդ ճանապարհն ընդ այն ոչ զնալ, այլ իւրաքանչիւր ոք զձին հետեալ զկնի իւր՝ ընդ սարն ելանել և զնալ. և ինքն նույնպէս առաջի նոցա երթալ: Արդ, ընդ լերինս ընդ այսոսիկ անցեալ զնացին և ի մերձեալ ծագման արևուն մտին ի սահմանս օսմանցւոց, և զօրքն օսմանցւոց ոչ իմացան զանցանելն նոցա:

§ 86 Եւ եկին, մտին ի Զաղոմի, և էր իշխան նորա ոմն, որոյ անունն էր Ահմէտ բէկ, և ոչ սա կարաց իմանալ զայլուստ Ղուլի խանին: Քանզի նա պահապանս կացուցեալ էր ի ճանապարհի և վասն այսորիկ ոչ հաւատալը, թէ Ղուլի խանն այնպէս առանց ուրուք իմանալոյ կարէր անցանել ընդ այն և գալ: Արդ, իբրև ետես զնա հանկարծ մտեալ ի Զաղով, ել ընդդէմ նոցա տագնապաւ, վեց հազար զօրօք, պատերազմիլ ընդ նմա: Եւ յառաւօտէ մինչև ի հասարակ օր պատերազմեցան: Ի պարտութիւն մատնեցաւ Ահմէտ բէկն, և հարան զօրք նորա սրով սուսերի, և ինքն փախստական եղև: Մի ոմն ի զաճար աղգէ զհետ նորա

1) Ձեռագրում Հառնաւա:

պնդեալ մինչև ցժամ մի՛ կհաս նմա, եհար զնա նետիւ, և նետն ի գլուխ նորա մխեցեալ մնաց: Եւ եհաս նմա և ձեռքակալ արար զնա և առեալ տարաւ առ Ղուլի խանն և զ 113 թումէն զրամ պարգևս յաղթութեան ընկալաւ ի նմանէ:

30.v

§ 87 Զվեց օր եկաց ՝ Ղուլի խանն ի Զաղով և լետ աջնորիկ կալաւ զճանապարհն Բաբելոնի: Եւ իբրև զբրիս ժամս գնացին, հասին ի գետ մի, զոր Զանգանոյ ջուր անուանեն: Եւ գետս այս ընդ այն աւուրս լոյժ աճեցեալ և բարձրացեալ չորդ գնալր: Զտեղի էառ անդէն Ղուլի խանն ժամս ինչ և տարակուսեալ խորհէր ընդ իւրսն՝ միթէ կարիցեն անցանել, թէ ոչ: Եւ ապա ասէ ցամեհալն հեծելագորսն. «Որ զիս կամի, անցցէ ձիով ընդ գետս այս զհետ իմ:» Զայս ասաց և ինքն լառաջ քան գամեհեսեան մխեցաւ ի ջուրն և էանց լալնկոյս, և հեծելոցն քաջալերեալ՝ մտին զկնի նորա և անցին լալնկոյս. այլ ի նոցանէ ի ջուր անդ ընկողմեալ՝ կորեան անձինք իբրև հարիւր: Իսկ հետևակքն մնացին լալնկոյս գետոյն: Եւ արար վասն նոցա կազմեալ լերկաթի շղթայից հաստ առասանս երկուս, զորոց զծայրս յերկուց կողմանց չեզերս գետոյն ամբացուցին և ի վերայ նոցա տախտակս ի փայտից շարադրեալ և հող արկեալ ի վերայ՝ անցս կազմեցին և դամենալն հետևակս անցուցին լալնկոյս: Եւ լետ նոցա զդորսն և զայլ կազմածս իւրեանց անցուցին: Յառաջն կամէր գնալ ի վերայ Բաբելոնի, բայց յետոյ փոխեաց զխորհուրդ իւր և գէմ եղ գնալ ի Քարբուտա:

§ 88 Եւ եկն, եհաս ի Լէլլան գիւղ, որոյ բնակիչքն բազում հպատակութեամբ և պատուով ընկալան զնոսա, զի աղանդով¹⁾ համաձայն էին պարսից: Եւ էառ անտի գտանուտէրն ընդ իւր առաջնորդ ճանապարհի և սպառազինեալ տանէր զնա ընդ զօրս իւր: Բայց իբրև եկին ի Լէլլանայ, ուղղեցաւ գնալ ի վերայ Բաբելոնի, և եկին,

1) Ձեռագրում այս տողի զիմաց ձախ լուսանցքում արված և միատող հավելում. [. . .] snli:

բանակեցան ի Ղարաթաբա և անտի եկին Ղարաբատ և գտին զնա ամալի, զի բնակիչքն փախուցեալ մտեալ էին ի Բաբելոն: Այլ արդ, թէ ընդէ՞ր երբեմն ընդ այս և երբեմն ընդ այլ ուղղէր զգնացս և ոչ ի մի կողմ ընթանայր: Այս էր պատճառն, զի կամէր զօսմանցիսն զբզուել ի մարտ, այլ ոչ ոք ի պետաց տեղեացն ել ընդդէմ մարտնչիւր ի Ղարաբատայ հուեալ եկին, հասին ի Մանդալի, և անտի ելին գնալ ի Հիլա, և մինչ չև էր նոցա հասեալ անդ՝ երկու իշգնալ ի Հիլա, և մինչ չև էր նոցա հասեալ անուն էր Ալիմարտան և խանք պարսից, որոց միում անուն էր Ալիմարտան և միւսում՝ Բարա, եկին, հասին առ Ղուլի խանն լւ [30,000 զօրօք, զի լառաջագոյն ինքն պատուիրելով ժամադիր եղեալ էր նոցա՝ այնպէս առնել: Եւ աջնուհետև ինքն ոչ կամեցաւ գնալ ի Հիլա. զնոսա զերկուսին առաքեաց անդ:

§ 89 Իսկ ինքն զտեղի առեալ զաւուրս ինչ՝ ել, գնաց ի վերայ Բաբելոնի և հասեալ բանակեցաւ ի տեղին իմամ-Աղամ անուանեալ, միոյ ժամու ճանապարհաւ մերձ քաղաքին: Եւ էին անդ բազում շէխք տաճկաց, որք են օրինադէտք կամ մատենադէտք նոցա: Սոցա զպատուական խիլայս տուեալ՝ լոյժ պատուեաց: Եւ նոքա աջնուհետև մոլեալք ի սէր նորա՝ գրեցին ի բազում տեղիս առ բազում իմամս, որք իբրև քուրմք են տաճկաց, և գովեցին զնա և յորդորեցին զնոսա ի հպատակութիւն նորա՝ ցուցանելով նոցա՝ զորչափ ինչ մեծարանս արարեալ էր անձանց իւրեանց: Զոր լուեալ ամենեցուն նոցա՝ յանձն առին յօժարութեամբ ի հպատակութիւն մատուցանել նմա զինչ յօժարութեամբ ի հպատակութիւն մատուցանել նմա զինչ տեղուցն: Եւ արարին այնպէս: Յայսմ վալրի լուր եկն Ղուլի խանին, թէ Ալիմարդանն, Բարա խանն, զորս ի վերայ Հիլու լղեաց զօրօք, առեալ են զՀիլա և նուաճեալ են զժողովուրդն և անցեալ ընդ ջուրն Շատիկ՝ զիմեալ են գնալ իմամ-Ալի և կամ յիմամ-Մուսա¹⁾: Եւ վաղվաղակի գրեաց առ նոսա, թէ «Մի երթալք ի վերայ զոցա, զի արդէն նոքա հպատակք են մեզ:» Եւ նոքա այնուհետև թողեալ զայն տեղիսն՝ եկին, մտին զօրօք

1) Ձեռագրում յիմամուս:

իւրեանց ի սահմանս Բարելոնի, յալն կողմն ջրոյն, և անդ զանհամարս յօսմանցւոց կոտորեցին սրով սուսերի, մինչև ասել, թէ անկոխն այն մեծ շաղախեցեալ արեամբ՝ նեխեցաւ, և ի հոտոյ զիականց անկելոց ի բազում ժամանակս ոչ ոք կարէր անցանել: Ապա Բարս զանն եկն, բանակեցաւ ի տեղի մի Դարշու-հախս անուանեալ յայլազ-զեաց բարբառս յայնմանէ, զի է մեծ քաղաք մի յալնկոյս գետով, որ է առաջի Բարելոնի:

§ 90 Արդ, իբրև հասին Բարս խանն և Ալիմար-զանն ի վերայ Բարելոնի, սոքա յալնմ կողմանէ պաշարեցին, և Դուլի խանն՝ յայսմ կողմանէ: Այլ զի ոչ ունէին զգորս, քանզի Դուլի խանն ոչ առնուր || Ընդ իւր զգորս վասն փութանակի յեղակարծիւ հասանելոյ ի վերայ քաղաքի և բերդի, ուր և արշաւէր, ուստի իբրև եղև յս [40] աւուրք պաշարման, ապա բերեալ եղեն զոքք ի Չաղովու, ուր յառաջմէ թողեալ էր: Եւ սկսան կառուցանել զնոսս հանդէպ քաղաքին և արձակել: Եւ այնպէս սոքա ի մէջ բերդին ձգէին, և օսմանցիքն ի վերայ բանակի սոցա: Այլ զի զօրք օսմանցւոց կարի առաւել մեծագոյնք էին, քան զսոցայն և յառաւել հեռագոյն տեղիս հասուցանել կարէին զզնդակսն, զի մի ի նոցանէ տանէր բարութս իբրև լտերս ութսուն, վասն այսորիկ թէպէտև ի բացուստ պատերազմէր բանակն Դուլի խանին, բայց եղև, զի անգամ մի ի յարձակել օսմանցւոց զգոր մի ի բերդէ անտի՝ գնդակն եհաս, անկաւ ի մէջ բանակի նոցա և եհար, սպան միանգամայն զհարիւր ոգիս: Չայս ֆնասս կրեալ՝ ի բաց հեռոցոյց Դուլի խանն զճակատ իւր ի տեղուջէ անտի: Եւ այնուհետև թէպէտ զօրքն օսմանցւոց ոչ հասանէին նոցա, բայց նաև զօրքն իւրեանց ոչ կարացին ձգել զգնտակ ի բերդն: Եւ նստեալ կային առանց արձակելոյ զգորս յաւուրս իբրև ծե [55]: Ապա օսմանցին դարձեալ արձակեաց զայն մեծ զօրն, և ի սաստիկ զղրղմանէն խախտեցաւ պարիսպ բերդին, և բազում տունք փլան, և այնուհետև օսմանցին զայս զօրս ոչ ի գործ էած: Իբրև ծե [55] աւուրք

31.r

եղեն պաշարման քաղաքին, օսմանցիքն վառեալք զինու- չանկարծակի ելին արտաքս ի բերդէ անտի՝ յարձակել միանգամայն ի վերայ պարսից: Եւ եղեն երկու առաջք ընդ երկուս զրուես ելանելով, որոց միում անուեն էր Սպիտակ դուսն, և միւսուն՝ Իմամ-Ազամայ դուսն: Քսան և չորք հազարք ելին ի Սպիտակ զրանէն, և տասն հազար՝ յԻմամ-Ազամայ դրանէ, ամենեքին օսմանցի զինուորք: Այլ փաշայն ոչ էլ արտաքս և զընակս քաղաքին ոչ եթող ելանել արտաքս. և այս էր պատճառն, զի կէսն ի նոցանէ պարսիկ էր, կասկածէր փաշայն՝ մի գուցէ ելեալ արտաքս՝ յաւելցին ընդ զօրս Դուլի խանին:

§ 91 Արդ, իբրև ետես Դուլի խանն զգիմելն օսմանցւոց ի վերայ իւր, առանց զորի լառաջ մատոյց զճակատ իւր: Իսկ օսմանցին ընդ իւր բերեալ զտասն պատրաստեալ զօրս՝ սկսաւ արձակել ի վերայ ճակատուն պարսից: Եւ յայնժամ Դուլի խանն զօրս իւր ի չորս առաջս բաժանեաց, զի մի բովանդակ զօրն ի դորիցն վտանգեցին: Այլ օսմանցին մէն մի անգամ արձակեալ զգորսն՝ զերկրորդ նուագն ոչ կարաց յաւելուլ, քանզի մինչդեռ նոքա զգորսն ընուլ, պատրաստել պարապէին, եհաս ի վերայ նոցա ի չորից կողմանց ճակատն պարսից, և արդեւան ի վերստին արձակելոյ զնոյնս: Եւ խառնեցան ի միմեանս երկրքին ճակատքն, և կոտորեցին զմիմեանս սրով և թվանգաւ մինչև ցեօթն ժամս: Եւ զօրն օսմանցւոց չաղթեցեալ փախեաւ, եմուտ ի ներքս ի քաղաք անդ և այլ ոչ էլ արտաքս:

§ 92 Իսկ Դուլի խանն մինչև յուլթսուն և ութ օր բանակեալ զքաղաքան՝ պաշարեալ պահէր: Եւ սով սաստիկ եղև ի ներքս քաղաքին, մինչև շան մսոյ մի օխայն¹⁾ քառասուն մարչիլ եղև. և ոչ գտանիւր: Ապա Դուլի խանն զգունդս զինուորաց առաքեաց ի կողմն Նինուէին և հարին զգիւրօրէս և զաւանս նորա, զերիտասարդսն կոտորէին

1) Ձեռագրում ոխայն:

սրով և զմատաղ մանկուհան և զկանայս գերի վարէին: Բայց ի Նինուէ ոչ մերձեցան, զի չունէին զբաւականութիւն զօրաց, այլ հասեալ մինչև ի սեղի մի, զոր տածիկքն Եօնուզ անուանեն յանուանէ Յովնանու մարգարէին, և անտի դարձան չեստ:

§ 93 Արդ իբրև ինն ամիսք եղեն պաշարելով քաղաքին, Մահմուտ սուլտանն օսմանցւոց առաքեաց ի Բաբելոն ընդդէմ Ղուլի խանին զԿաղ Օսման փաշայն երկու հարիւր յիսուս հազար զօրօք: Իբրև էառ զլուր նորա Ղուլի խանն, հրեշտակս առաքեաց ի ներքս ի քաղաք անդ՝ խօսիլ ընդ նոսա խաղաղութեամբ և ասել ցԱհմէտ փաշայն, որ իշխան էր Բաբելոնի, թէ «Տնւր ինձ զբերդն խաղաղութեամբ, և արասցուք զհաշտութիւն:» Պատասխանի արար Ահմէտ փաշայն, թէ «Ընդէ՞ր խնդրես զբերդս. երթ, մարտիր ընդ զօրս օսմանցւոց և, եթէ կարես ազարտել || զզօրսն օսմանցւոց, յայնժամ ունիցիս զբերդս զայս:» Արդ, իբրև հնաս Կաղ Օսմանն ի սահմանս Բաբելոնի, զզօրս իբրև վեց հազար եթող առաջի բերդին և ինքն մնացեալ զօրօք ել, գնաց ընդդէմ նմա:

32.v

§ 94 Եւ Կաղ Օսմանն աճապարեաց, կալաւ զՉուրն, և Ղուլի խանն ոչ կարաց լառաջ ժամանել նմա և զՉուրն ունել: Իբրև ետես Կաղ Օսմանն, զի Ղուլի խանն գայ, մերձենայ, հանդերձեցաւ, պատրաստեցաւ ամենայն զօրօք ընդդէմ նմա: Ունէր նա զդոքս իբրև հարիւր և հինգ, այլ¹⁾ Ղուլի խանն ոչ էր բերեալ զզօրս: Կարգեաց Ղուլի խանն զճակատն իւր ընդդէմ օսմանցւոց՝ յարձակիլ ի վերայ նոցա փութանակի. զերկոտասան հազար թվանկաւորսն յառաջ կացոյց և զայլ զինու վառեալն՝ զկնի նոցա: Ապա բաղխեցան ընդ միմեանս երկոքին ճակատքն, և յաղթեաց զօրն Ղուլի խանին օսմանցւոց զառաջին նուազն: Եւ փախուցեալ գնաց մերձ ջրոյն ի հեղեղատ մի մեծ և խոր և անդ ախոյեանս կառուցեալ զօրն օսմանցւոց՝ արձակէր զհրացանս և հարկանէր զզօրն պարսից յաջողութեամբ: Զի

1) Չեռագրուծ այ:

էին նոքա յերեսս երկրի յամենայն կողմանց բաց, և զիպէր նոցա գնտակն արձակեալ. իսկ զօրացն պարսից ոչ յաջողիւր հարկանել զնոսա, զի էին ի խորս հեղեղատին ծածկեալք, և ոչ զիպէր նոցա ինչ ի գնտակաց: Եւ ծարաւեցաւ զօրն պարսից և ոչ ունէին, ուստի առցեն զՉուր, զի, որպէս յառաջագոյն ասացաք, զօրն օսմանցւոց ի հասանիլ իւրում ի սահմանս քաղաքին Բաբելոնի՝ յառաջ զՉուրն կալաւ, և պարսիկն ոչ կարաց վաղ աճապարել և զՉուրն ունել: Եւ յորժամ ի պատճառս սաստիկ ծարաւութեան զթվանկաւորսն, զորս յառաջադէմ կարգեալ էր ի ճակատուն, յետ դարձոյց՝ երթալ, զՉուր ըմպել, և Չուրն կէս ժամու ճանապարհաւ հեռի էր, յայնժամ զօրն օսմանցւոց արտաքս ելեալ՝ իբրև զյորդ անձրև և իբրև զխիտ կարկուտ զգնտակս ի թվանկաց տեղեաց ի վերայ պարսկական զօրացն և ազարտեալ զճակատն նոցա՝ ցիր և ցան ի փախուստ դարձոյց զնոսա, և ի փախուցելոցն սակաւ հեծեալք միայն զերծան, իսկ որք հետևակք էին, ի սուր սուսերի մաշիցան ամենեքեան: Եւ ոչ եթէ նուազութիւն ջրոյն միայն եղև պատճառ խորտակմանս այսորիկ, այլ և այս, զի յետ ժամու միոյ մարտին շնչեաց հողմ սաստիկ ընդդէմ ճակատուն պարսից, որ զամենայն փոշին աւաղախառն և զծուխս բարութացն առ հասարակ յերեսս նոցա արձակեալ՝ զաչս նոցա խնոյր: Միանգամայն և սաստիկ տօթն եզանակին, որ ի գաւառին լալնմիկ առաւել դժնդակ էին, կիպէր զնոսա. զի այնչափ սաստիկ ջերմ ամառն լինի ի գաւառին յայնմիկ, մինչև ասեն, թէ՛ և զհանդերձս առանց հրոյ մրկեալ կիզու: Եւ ի ցրուեալ զօրաց կէսքն ի կողմ Մանտալիոյ գնացին, և կէսքն՝ ի կողմն Դզրաբատու. և ոմանք՝ ի կողմ Զաղովու:¹⁾

§ 95 Իսկ ինքն Ղուլի խանն անգիտելի ի զօրացն ընդ կողմն ինչ փախուցեալ գնայր, և ոչ գիտէին զօրքն, թէ ապրեալ իցէ արդեօք, կամ թէ սպանեալ: Եւ էին ի զօրս պարսից վեց քրիստոնեայք լազգէս մերմէ, որք էին

1) Չեռագրուծ Ղազովոյ:

հազարապետք Ղուլի խանին և ունէին զօրս հարիւրաւորս. անուն միոյն՝ Դաւիթ, զոր Գորբջենցի բէկ ասեն, երկրորդն էր Ատովմին¹⁾ որդի Աբիճան, երրորդն էր չարնեցի Այդիւն բէկի որդի Աղաճանն, չորրորդն՝ չափնեցի Մուսիսին²⁾ որդի Բալիզն, հինգերորդն՝ ճաղակերեանց Թօփուզի որդի Հախնազարն: Արդ, ի սոցանէ Հախնազարն ընդ Ղուլի խանին գնացեալ էր ի փախչիլն նորա, և ոչ ոք գիտէր: Իսկ այլք ի Զաղով քաղաք գնացեալ էին ի փախչիլն: Եւ էր անդ եկեալ շոշեցի պարսիկ իշխան ոմն, որոյ անունն էր Ճան: Եւ ասաց հայոց. «Ի՞նչք մնացէք աստ և մի ելանէք աստի. ես միւս անգամ դառնամ ի վերայ օսմանցւոց ձեօք հանդերձ»: Իսկ նոքա ոչ լուան նմա, զի ասացին. «Մեք մինչ չև գտեալ իցեմք զՂուլի խանն, ոչ երթամք միւս անգամ ի վերայ օսմանցւոց:» Եւ ելեալ անտի ուղղեցան դէպ ի Համատան և եկին ի Քրմանշա:»³⁾

§ 96 Ղուր եկն, թէ իշխանն Համատանայ ուրախութիւն արարեալ է, թէ Ղուլի խանն հասեալ է անդ և ի գլուխս ճանապարհաց դէտս կացուցեալ է, զի փախուցեալքն ի զօրաց իւրոց մի ցրուեցին, այլ առ ինքն ժողովեցին: Եւ այսպէս ապրեալք ի սրոյ՝ ժողովեցան առ նա: Եւ հանդէս արարեալ զօրուն՝ ետես, զի վեց իշխան գերծեալ էր: Եւ ի միջոյ փախուցելոցն || զհարիւր երկոտասան մեծամեծս սպան վասն վատասրութեան նոցա և փախստեան: Եւ զպակասեալն ի զօրաց իւրոց ելից, որչափ կարաց, և ի տեղի կոտորելոց իշխանացն զայս կացոյց իշխանս, քանզի յիննսուն և երկու հազար զօրաց ժե[15] հազար միայն մնացեալ էր: Ապա Ղուլի խանն հնգետասան հազար զօրօք հանդերձեցաւ զնալ միւս անգամ ի վերայ Կաղ Օսման փաշային: Չու արար ի Համատանայ, խաղաց, գնաց և յեօթն աւուրս գհնգետասան աւուր ճանապարհն վճարեաց և եհաս ի Զաղով: Եւ անտի չերիս աւուրս տաղնապաւ

33.1

1) Չեռագրում Ասովմեան:
 2) " " Մուսիսեան:
 3) " " Քրմայու:

եհաս ի Քարբուտ: Ապա յանկարծակի ի լեոնոտանէ միոյ գիշերայն ելեալ՝ եհաս յեղակարծիւ ի վերայ քանակի Օսման փաշային յառաւօտու, մինչդեռ բազումք ի զօրաց ի քուն էին, և ամենեքեան առ հասարակ անկազմ, անպատրաստ կային: Սոսովեաց զբանակն և եհար, կոտորեաց զնոսա և զՕսման փաշայն ձերբակալ արար և հատեալ զգլուխն նորա՝ չլեաց ի Բաբելոն առ Ահմէտ փաշայն: Եւ յայսմ վայրի զօրք Ղուլի խանին կոտորեցին ի զօրացն օսմանցւոց աւելի քան զլս[40] և հինգ հազար և զմնացեալսն ի փախուստ դարձուցին: Յետ այսորիկ Ղուլի խանն դիմեաց զնալ ի վերայ Բաբելոնի: Իբրև եհաս, ոչ ձեռն էարկ պատերազմիլ, այլ դաշինս խաղաղութեան արար և եղբայրագիր եղև ընդ փաշայի քաղաքին, որ էր Ահմէտ փաշայն, սքանչանալով ընդ հաւատարմութիւն նորա, զոր պահէր առ սուլտանն իւր: Սոսեցաւ ընդ նմա և ասաց, թէ «Սիրտ իմ վառեցաւ ի սէր քո վասն այդպիսի հաւատարիմ բարուցդ այսմիկ. զի ես զինն ամիս պաշարեալ զքաղաքդ դայդ՝ զքեզ ի նեղ արկի սովով և սրով, և դու ոչ ետուր զբերդդ ինձ՝ զհաւատ և զարդարութիւն պահելով ընդ սուլթանին քում և պահելով զաւերութիւն և զանուն սուլտանին քոյ: Յայսմհեռէ մի լիցի ի մէջ մեր թշնամութիւն ամենևին, այլ սէր եղբայրական մինչև ի մահ:»

§ 97 Ապա Ղուլի խանն դարձ արարեալ անտի՝ գնաց ի Հաւուզա: Եւ առեալ ընդ իւր զԱլիմարդան խանն և զհարա խանն՝ գնաց ի վերայ Բաղդիւրալ: Ջի բաղդիւրացիքն լուեալ, թէ Ղուլի խանն յաղթեցաւ յօսմանցւոց, ապստամբեալք էին և կացուցեալ էին իւրեանց թագաւոր զոմն Ալի անուամբ և զօրս կուտեալ էին զալ ի վերայ Շօշայ՝ առնուլ զնա և տիրել ամենայն թագաւորութեան պարսից, որպէս ի վեր անդր յայտ արարաք: Իսկ Ղուլի խանն յայսմ ժամանակի ոչ ունէր զօրս աւելի, քան զհինգետասան հազար: Ջի թէպէտ յառաջ քան զառաջին մարտն Օսման փաշային ունէր զիննսուն հազար, բայց չորժամ

գառաջինն աղարտեցաւ ի նմանէ, կոտորեցան բազումք ի նոցանէ, և ֆնացին հնգետասան հազար միայն, որպէս ի վեր անդր գրեցաք: Սակայն Ալիմարդան խանն և Բարա խանն, երկոքին սոքա միայն ունէին զ[30,000] զօրս, զորս Ղուլի խանն յաւել ի զօրս իւր, և եղեն [սե[45] հազար: Եւ ելեալ գնացին ի տեղի մի Զմլար անուանեալ, մերձ Բաղդիարալ: Բաղդիարացիքն ընդդէմ ելին նմա և պատերազմեցան ընդ Ղուլի խանին սաստիկ՝ զաւարս ժե[15]: Եւ ապա յաղթեաց նոցա Ղուլի խանն և կոտորեաց ի նոցանէ այնչափ բազումս՝ մինչև ասել, թէ գետք խաղացին չարեանէ նոցա: Եւ յիտ կոտորելոյ զօրսն՝ էսո զքաղաքն և գերի վարեաց զընակիչս նորա: Զքառասուն և ութ հազար տունս գերի վարեաց և առաքեաց ի Սորասան, այն ինքն է՝ Մաշատ: Ոչ գամենեսեան միանգամայն ի մի տեղի, այլ բաժանեալ զանձինս գերիս հարիւրս ի միում նուազի ի մի քաղաք, զհազարս ի միւս քաղաք և զայլս ի յայլ քաղաք վտարեաց: Եւ ի տանելն զնոսա յիւրաքանչիւր տեղիս, ուր և հանդիպէին ի ճանապարհին, բնակիչք տեղւոյն վճարէին զծախս ճանապարհին և այնպէս յուղարկէին զնոսա, մինչև ամենեքեան սփռեցան յիւրաքանչիւր տեղիս:

§ 98 Յետ այսորիկ Ղուլի խանն ել անտի գնալ ի վերայ Շիրազու: Իշխան տեղւոյն էր ոմն Մահմէտ անուանեալ, ապստամբ և հակառակ Ղուլի խանին: Զսա յառաջագոյն Ղուլի խանն առաքեալ էր ի վերայ բլուջի՝ նուաճել գնա, զի բլուջն էր անհնազանդ և ապստամբեալ ի Ղուլի խանէն: Եւ Մահմէտ խանն փոխանակ նուաճելոյ զնոսա ի հնազանդութիւն Ղուլի խանին՝ ինքն գլխովին ապստամբեալ ի նմանէ՝ զզօրս ժողովեալ էր անդ ընդդէմ Ղուլի խանին և խորհէր գնալ ի վերայ Շօշալ: Եւ գնացեալ ի Բանդար դաւառն՝ զբազումս կոտորեաց ի սուր սուսերի, որք ոչ միտեցան զկնի իւր: Իսկ զնոսա, որք միտեցան, յաւել ի զօրս իւր և գնաց ի Շիրազ և պատրաստելը գնալ ի վերայ Շօշայ: Ազգ եղև Ղուլի խանին, թէ նա այնպէս առնել պատրաստի, հրեշ-

34 v

տակս առաքեաց առ նա՝ ասել, թէ «Զի՞նչ է այդ, զոր դու առնես. դու ի սկզբան հաւատարիմ ծառայ մեր էիր և այնչափ բարեբարութիւնս ընկալեալ ես. քանզի ես զքեզ այդչափ բարձրացուցեալ՝ ի վերայ բազում իշխանաց իշխան կացուցի: Եւ այժմ զի՞նչ եղև քեզ, որ այդպէս ընդվզեալ օտարանաս ի մէնջ և ընդհակառակն մերում իշխանութեանս զէն առնուլ, զօրաժողով լինիլ նկրտիս: Ապաշաւեան դու ի խոտորմանէ այգի և ի բաց կաց ի չարութեանէդ, մի գուցէ՞») զստուերս անցէ շաց քոց հացն իմ:» Այսպիսի խաղաղութեան խրատս բազում անգամ գրովք արար Մահմէտ խանին Ղուլի խանն, այլ նա ապախտ արար զբանսն նորա և առաքեաց ասել նմա հրովարտակօք, թէ «Բացատրեալ եմ ես զգլուխ իմ ի ճանապարհին, զոր կալալ. որպէս և կամեսցի Աստուած, այնպէս արասցէ և ընդ իս և ընդ քեզ: Կամ ես զքեզ, և կամ դու զիս ի կենաց աստի վճարեցես. այսպէս իմաստցիս:»²⁾

§ 99 Զայս իբրև լուաւ Ղուլի խանն, լայնմ հետէ ոչ ևս յաւել խօսիլ ընդ նմա: Կարգեաց զգուհոս զօրաց իւրոց և ել, գնաց ի վերայ Շիրազու, որոյ իշխան էր Մահմէտ խանն: Իբրև մերձենայր ի քաղաք անդ, ազգ եղև Մահմէտ խանին գալուստն նորա. ել ի քաղաքէ անտի ի դաշտավայրն՝ պատահիլ նմա: Եւ ի զիմի հարկանիլն նոցա ի փախուստ դարձան. զօրք Մահմէտին և հարան սրով սուսերի, և ինքն մաղապուրժ փախտական եղեալ՝ անկաւ չամրոց մի մեծ Բանդարայ, որ անուանի Այվազայ բերդ: Եւ էր տէր ամրոցին շէխ մի Զափար անուանեալ և ինքն էր լոյժ հմուտ արուեստին կախարդութեան, զոր ժողովուրդք գաւառին սուրբ համարեն և ամենայն բանից նորա հաւատան, վասնզի զբազում և զզանազան գիւթական արուեստիւ զգործս նորա տեսեալ՝ սքանչելիս համարէին առնել: Արդ, Մահմէտ խանն իբրև եհաս անդ, եմուտ առ

1) Զեռազրում գուցէ:
2) Զեռազրում հենց այսպես իմասցիս:

նա և պատմեաց նմա զանցսն, որք անցին ընդ նա, և աղաչեաց զնա միջնորդել վասն իւր առ Ղուլի խանն. քանզի զիտէր, զի նա առ ի մեծի համարի էր առ Ղուլի խանն, և ամենալն աղաչանք նորա ընդունելի լինէր նմա:

§ 100

Ընկալաւ շէյխն զհայցուածս նորա և առաքեաց զիրս աղերսանաց վասն նորա առ Ղուլի խանն՝ ասել նմա, թէ «Վասն սիրոյն, զոր առ իս ունիս, ընկալ զՄահմէտ խանն, որ զղջացեալ ի ստահակութենէ իւրմէ՝ կամի դառնալ ի հպատակութիւն վսեմութեանդ. ներեա սմա և մահու մի սպանաներ, թէպէտ և արժանի է:» Եւ գրեաց պատասխանի առ նա՝ ասելով, թէ «Եղիցի այդպէս. վասն քո աղաչանացդ ոչ սպանից զնա. և արդ առաքեա զնա առ իս:» Յայնժամ շէյխն եցոյց Մահմէտ խանին զխոստումն Ղուլի խանին, և նա վստահացեալ զնաց առ Ղուլի խանն: Եւ եղև յորժամ լանդիման եղև նմա, ասէ ցնա Ղուլի խանն. «Գիտես արդեօք զայնու ժամանակաւ եղեալ իրան, մինչդեռ ես ի Բաբելոն էի և հրովարտակա առաքեցի առ քեզ ասել, թէ՛ մի այդպէս ստահակիր, մի ընդհակառակն իմ գումարիր, և դու պատասխանի գրեցիր առ իս՝ որպէս և կամք իցեն Աստուծոյ առնել, արասցէ. կամ դու բառնաս զիս ի կենաց աստի, և կամ ես զքեզ: Եւ արդ, այժմ ահաւաղիկ Աստուած ետ զքեզ ի ձեռս իմ, ուստի իրաւ է ինձ սպանանել զքեզ:» Պատասխանի ետ Մահմէտ խանն, թէ «Որպէս և կամիս, այնպէս արա. ահաւասիկ կամ ես ի ձեռս քո:» Ասէ Ղուլի խանն. «Թէպէտ և արժանի ես դու մահու, սակալն վասն շխիւն, որ աղաչեաց զիս չսպանանել զքեզ, ոչ սպանից, ալ տաց քեզ փոքր մի պատուհաս:» Ապա հրամայեաց միում ի մանկուտոյն՝ բրել զերկու զաչս նորա: Եւ յետ կուրացուցանելոյ շնորհեաց նմա զճ [100] թուման զրամ և ասէ, թէ «Երթ, զեկամուտն || այսչափ զրամոց կեր և վասն իմ աղօթս արա:» Եւ ետ զնա ի ձեռս

35.7

ծե [15] յուղարկաւորաց և առաքեաց ի Մաչատ: Եւ յետ այտորիկ ել անտի ինքն և եկն ի Շօշ՝ զպատրաստութիւն զօրաց առնել և երթալ ի վերայ Շրվանայ և Շամախու: Եւ յետ պատրաստութեանցն ել անտի զնալ ի վերայ Շամախու և Շրվանայ¹⁾:

1) Ձեռագրում սրանից հետո նոր սողի մեջտեղում գրվածն է Վ Ե Ր Գ:

Արարւում Երևանցի-6

վճարել: Եթող մօսկոֆն զԿիլան և զնաց յերկիր իւր և հաստատեաց զդաշն խաղաղութեան ընդ պարսից, զի շահն իւրաքանչիւրում ամի դուքսուն հազար թուման վճարիցէ:

[Գ Լ Ո Ւ Ե Ե Օ Ք Ն Ե Ր Ո Ր Կ]

[Մեռաւանք Ղուլի խանի ի Հայս, ի Վիրս, յաւխարհն Սեդուանից եւ յերկիրն Լէկզու: Պատերազմ եւ պարսուքիւն զօրացն օսմանցւոց: Բանակիւն Ղուլի խանի ի Մուղան գաւօսի եւ քաղաւորելն ի վերայ պարսից:]

§ 101 Վասն յայտնագոյն առնելոյ զառաջիկայ պատմելիս մեր՝ կարևոր է յառաջ բերել զվաղագոյն զեղեալսն:

Արդ, ի ժամանակին, յորժամ շահ թամազն զՇօշ քաղաքն թափեաց ի ձեռաց աղուանից սուլտանին, որպէս ի վեր անդր պատմեցաք, Կիլան էր ի ձեռս մօսկովաց: Իրբևէ առ շահ թամազն զՇօշ, հրեշտակս առաքեաց առ օսմանցւոց սուլտանն՝ հրովարտակօք ասել նմա, թէ «Տնւր ինձ զքաղաքս իմ, զորս առիւր ի ժամանակս բռնութեան աղուանին: Զի այժմ ես յաջողութեամբ տեսուն զօրացեալ հարի և ի բաց վանեցի զաղուանն յերկրէս և նստալ յաթոռ թագաւորութեան հօրն իմոյ:» Պատասխանի ետ սուլտանն օսմանցւոց և ասէ, թէ «Պարտ է քեզ նախ զԿիլան ի ձեռաց մօսկովացն առնուլ և ապա առ ի մէնջ, եթէ ունիս զիրաւունս ինչ պահանջել:» Նովին օրինակաւ հրովարտակս առաքեաց ի ձեռս հրեշտակաց իւրոց առ արքայն մօսկովաց՝ խնդրել զԿիլան ի նմանէ: Եւ անդէն պատասխանի արար, թէ «Ես վասն ասպատակչաց պահպանելոյ զքաղաքք՝ զայնչափ բազում ծախս արարեալ առ ի զԿիլան և պահեցի մինչև ցայժմ: Եւ արդ պատրաստ եմ տալ զնա ցքեզ, եթէ զայն ամենայն ծախս, վասն նորա առ ի մէնջ արարեալ, հատուցանիցես և վասն իւրաքանչիւր ամի ութսուն հազար թուման ի վերայ այնորիկ յաւելեալ զտոկոսիսն վճարիցես:» Յանձն էառ շահ թամազն զնսացեալ պարտսն

§ 102 Իրբև կատարեցաւ ամն և եհաս ժամանակ ընդունելոյ զխոստացեալ դրամս, հրեշտակս առաքեաց մօսկոֆն առ պարսիկս՝ պահանջել ի նմանէ զդրամն: Եւ հրեշտակն այն էր կարնեցի Սիմոն անուամբ ոմն ի հայոց ազգէ: Արդ, իրբև եկն, եհաս նա ի Շօշ, ետես, զի շահն, լորմէ զդրամն խնդրէին¹⁾, ոչ գոյր անդ, զի նա արդէն ի Ղուլի խանէն կապանօք ի Սորասան էր առաքեցեալ: Եւ զմտաւ ածեալ, թէ ոչ ոք է, որ զինքեան յանձնեցեալ գործն առնելոյ նպաստ լիցի, տարակուսեալ վարանէր: Ապա Ղուլի խանն կոչեաց զնա առ ինքն և խօսեցաւ ընդ նմա և ասէ. «Ուստի՛, առ թ և առ Բնչ եկեալ ես դու աստ:» Պատասխանի ետ Սիմոն զեսպանն. «Ես ի մօսկովաց արքայէն հրովարտակ բերեալ եմ առ շահն:» Ասէ Ղուլի խանն. «Տնւր ցիս զհրովարտակն, զի տեսից, թէ զինչ խնդրէ թագաւորն քո ի շահէն մերմէ:» Պատասխանի ետ Սիմոն. «Ոչ կարեմ ես զայդ առնել, զի հրովարտակն այն առ շահն է առաքեցեալ և ոչ առ քեզ: Այլ պարտ է ինձ նմա հասուցանել զգիրն:» Ասէ Ղուլի խանն. «Թէ այդպէս է, ապա նիստ դու աստ զժամանակ ինչ, մինչև ես երթալց, վճարեցից զպատերազմ, զոր առնելոյ եմ ընդ աղուանին, որ յարուցեալ է ընդդէմ մեզ, և չեա դառնալոյ իմոյ անտի տաց բանից քոց պատասխանի:» Եւ ետ նմա ապարանս բնակելոյ ի Շօշ և ինքն զնաց ի պատերազմ:

§ 103 Արդ, նստաւ անդ Սիմոն զեսպանն զամս երկուս, մինչև Ղուլի խանն դարձաւ ի Շօշ: Կոչեաց դարձեալ Ղուլի խանն զՍիմոն զեսպանն, խօսեցաւ ընդ նմա և ասէ. «Տնւր ցիս զգիրն արքային քո, և ես արարից նմա զպատասխանի:» Պատասխանի ետ Սիմոնն, թէ «Ես ոչ կարեմ զայն գիրն տալ քեզ, բայց այժմ || զայս ունիմ

1) Զեռագրում խնդրեցին:

ասել, թէ թագաւորն իմ իմացեալ, զոր ինչ մի անգամ արարեր դու ընդ շահն, առաքեաց առ իս ասել քեզ, թէ յետ առնելոյ քո ալգպէս՝ դու ես այժմ տէր երկրիդ, դու ինքնին դատ արա. պարտականն իմ լերկիրն քուժմ է. կամ տուր զնա ի ձեռս իմ, և ես առից ի նմանէ զիրաւունս իմ, կամ դու հատն ինձ, զոր պարտի նա:» Պատասխանի ետ Ղուլի խանն, թէ «Նա, որ պարտական է քեզ, և ինձ է պարտական. զի նա տխմար գինեմոլ ոմն էր, անխելութեան տալը զինքն և յանխելս եղեալ՝ զերկիրն մեր ետ օսմանցուոց: Բայց վասն պարտուցն, զոր պահանջէ ի մէնջ թագաւոր ձեր, զայս ունիմ ասել ցթագաւորն ձեր, թէ՛ շահն մեր ոչ ել ընդդէմ ձեր ի պատերազմ. և դու ընդէ՞ր ելեր¹⁾ ի վերայ քաղաքին մերոյ և ի զուր զայնչափ ծախս արարեր և առեր զքաղաք: Մի՞թէ ոք կամէր զԿիլան լափշտակել, և դու թափեցեր զնա ի ձեռաց նորա վասն մեր: Է՞ր աղագաւ առեր զնա և պահեցեր ընդ քոյ իշխանութեամբ զայսքան ամս»: Զայսպիսի բանս խօսեցաւ Ղուլի խանն ընդ Միմոն դեսպանին, և զօրացաւ բան նորա ի վերայ նորա:

§ 104 Եւ յետ ժա[11] աւուրց ալլ ոմն մեծ դեսպան յերկրէն Մօսկովայ եկն ի Շօշ օ[500] արամբ և այլ բազում սպասուք և շքով և էր մեծազգի և թագաւորին մօսկովաց ընտանի: Իբրև եղև նմա մտանել ի քաղաք, արժանաւոր մեծարանօք ընկալեալ եղև: Եւ կարգեաց Ղուլի խանն տալ նմա զպէտս սեղանոյ, զնպարակս և զըմպելիս. և զգինին ըմպելի պատուական տային նմա ի Զուրգայոյ: Եւ յետ զ[6] աւուրց եմուտ դեսպանն առ Ղուլի խանն և զհրովարտակն արքայի իւրոյ մատոյց նմա, և խօսեցան ընդ միմեանս բազում շքով և պատուասիրութեամբ: Իբրև դարձաւ անտի ի դարպաս իւր, առաքեաց Ղուլի խանին ի ձեռն արանց իւրոց պատուաւորաց ընծայս, զմի պատուական հայելի և ժամացոյց մի յոսկւոյ մեծազին: Ընդ որ յոյժ հաճեցաւ Ղուլի խանն և ընկալաւ զնոսա:

1) Ձեռագրում դու ընդէ՞ր ելեր դու:

Ալլ որպէս ի վեր անդր ասացաք, Ղուլի խանն զօրս պատրաստեալ էր գնալ ի վերայ Շրվանայ և Շամախու ի պատերազմ ընդդէմ Աղուանից: Ընդ իւր էառ զդեսպանն և ուղղեցաւ գնալ յայն կողմն և եկն, եհաս ի Թաւրէզ: Զտեղի էառ անդէն աւուրս ինչ, և ահա եկն ի Մօսկովայ ալլ դեսպան բարկութեամբ և սրամտութեամբ ի թագաւորէն՝ ասել նմա, թէ «Ընդէ՞ր զերկոսին հրեշտակս իմ պահես առ քեզ և ոչ արձակես զնոսա բերել ինձ զպատասխանի:» Ապա Ղուլի խանն զՄիմոն դեսպանն արձակեաց և երկուց մնացելոցն պատասխանի արար ասել արքային իւրեանց՝ թէ «Ոչ եմք մեք պարտական տալոյ ինչ քեզ, զոր պահանջես. և եթէ պատերազմ առնել կամիս, պատրաստեալ եմք ի մարտ պատերազմի ելանել ընդդէմ քեզ. զայս գիտասջիր, զի ոչ ինչ տամք քեզ:»

§ 105 Եւ արձակեալ զհրեշտակսն՝ չու արար ինքն զօրօքն հանդերձ և եկն, եհաս ի դաշտն Երևանայ և անդ բանակեցաւ: Զի լալնժամ Երևան էր ի ձեռս օսմանցուոց: Ազդ եղև օսմանցուոյն գալուստն Ղուլի խանին, այլ նա ոչ ել ընդդէմ նմա ի մարտ, այլ եկաց, մնաց ի քաղաքի անդ և պահէր զբերդն: Ապա Ղուլի խանն լառաջ մղեալ զզօրսն՝ պաշարեաց զքաղաքն: Իսկ օսմանցին ամենեկին ոչ ձեռնամուխ եղև ի պատերազմիլ և ոչ զդրբ մի արձակել, այլ զխաղաղութեան նշան կանգնեալ՝ բանս առաքեաց նմա՝ տալ նմա զքաղաքն: Հրաման ետ Ղուլի խանն, զի որք ի քաղաքի անդ տաճիկք էին, որք կամիցին մնալ, մնասցին, և որք կամիցին երթալ, երթիցեն խաղաղութեամբ, ուր և կամիցին: Եւ ալնպէս արարին: Բայց զնոսա, որք մեծատունք էին, կեղեքեաց. յոմանց զժ[50] թուման էառ, յոմանց՝ ի[20], յոմանց՝ իս[40] և յոմանց՝ ժ[10], ըստ դոյիցն իւրաքանչիւրոց: Սոյնպէս արար և քրիստոնէիցն, որք անդ գտան:

§ 106 Յետ ալսորիկ ի մասնէ զօրացն իւրոց պահասանս եթող քաղաքին և ինքն ել անտի՝ գնալ ի վերայ

37.r

Գանջայ: Եւ եհաս ի տեղի մի, որ յալլազգեաց բարբառով
 Ղօրուզ անուանի և է այն մերձ Արամուզայ¹⁾ և Արախու-
 զայ, զի ունի ի մի կողմն իւր զԱրամուզ, և ի միւս կողմն՝
 զԱրախուզ, ի տեղի մի, զոր յալլազգեաց բարբառս Գոգ
 քլիսա կոչեն: Եւ պատճառ այսպէս անուանելոյն այս է,
 զի անդ է եկեղեցի մի կապոյտ երանգով, || ուր, վաղըն-
 ջական աւանդութեամբ պատմելոյն, առ ժամանակօք շահ
 Աբբասին բազում աղօթաւոր ճգնաւորք լեալ են: Եւ ի դի-
 մել շահ Աբբասին՝ գնալ երբեմն ի վերայ նոցա՝ երկիրն
 բղխեալ զշուր՝ զկապոյտ ծովակ մի արարեալ է առաջի
 երեսաց նորա, և յայսմանէ ոչ կարացեալ է յառաջ խաղալ
 և հասանիլ ի դիւզն այն, և եկեղեցին այն կապոյտ անուա-
 նեալ՝ ի միջի է մնացեալ ծովակին և յամենայն կողմանց
 ի ծովակէ անտի շուրջ պատեցեալ: Եւ շահ Աբբասն յայն
 սակս դիմեալ է ի վերայ այն գեղջն գնալ, զի կարծեալ
 էր, թէ բնակիչք տեղոյն իցեն ազգ անծանօթ, որք ոչ
 ունին զհնազանդութիւն տէրութեան իւրոյ: Արդ, իբրև
 այս նշանս եղեալ էր, ըստ որում ի վաղնջուց այսպէս
 աւանդութեամբ պատմեն, զայս տեսեալ շահ Աբբասին՝ այ-
 նուհետև զզօրն լետս դարձուցեալ է ասել, թէ «Տեսից մի
 անգամ և զիտացից, թէ որպիսի ինչ հնարք է այս:» Ապա
 արձակեաց զարս ի տեղիսն, որք շուրջ կան, և բերին ի
 քրիստոնէիցն²⁾ զոմանս, և եհարց ցնոսա, թէ «Ո՞ք և կամ
 չորմէ ազգէ են, որք բնակին ի տեղիս յայս, յորում զայս-
 պիսի հնարս կամ զարմանալիս տեսի:» Նոքա պատասխա-
 նի ետուն նմա և ասեն, թէ «Մոքա քրիստոնեայ կրօնա-
 ւորք են, որք զցայոք և զցերեկ աղօթս առնեն և ճանապարհ
 Աստուծոյ խոկանս:» Ասէ շահ Աբբասն. «Եթէ դոքա աղօ-
 թաւորք են, ես ընդ դոսա ինչ ոչ ունիմ:» Եւ յայնմհետէ³⁾
 անուն տեղոյն կոչեցաւ Գոգ քլիսա, զոր շահ Աբբասն
 անուանեսց: Իսկ տեղին, որ Արախուզ անուանի, այսպէս

1) Ձեռագրում Արմաուզայ:
 2) » ի քրիստոնէիցն:
 3) » յայննետէ:

անուանեցեալ է ի խուզմանէ ոչխարաց, զորոց ասրն առեալ՝
 կրօնաւորաց սքեմս առնեն: Իսկ Արամուզն ի մեկելոյ, այ-
 սինքն¹⁾ կլթոյ ոչխարաց անուանեցեալ է: Չայս ամենայն
 աւանդեն բնակիչք տեղոյն: Այլ մեք դարձցուք անդէն ի
 կարգ բանիցն, զոր առաջի ունիմք պատմել:

§ 107

Արդ, ի Ղօրուզ անուանեալ դաշտի անդ
 զօրքն Ղուլի խանին գերիվարս իւրեանց յարօտս տուեալ՝
 թողին²⁾ արածիլ զաւուրս ին [25] և ապա անտի գնացեալ
 հասին ի Գանջայ քաղաք, զի յայնժամ քաղաքն այն էր ի
 ձեռս օսմանցւոց և լի էր օսմանցւով: Ընդդէմ ելին նմա
 օսմանցիքն, և եղև պատերազմ սաստիկ զաւուրս լ [30]: Եւ
 զհեղեղս արեան գնացուցեալ՝ ապա էառ զԳանջա և ի սուր
 սուսերի սատակեաց զօսմանցին: Մերձ նմա է գեօղ մի,
 որ Քլիսա-քանթակ անուանիւր Բազումք լօսմանցւոց ան-
 տի փախուցեալք չերեսաց պատերազմին՝ ի տունս հայոց
 թագուցեալ կալին: Ազգ եղև զօրացն Ղուլի խանին, գնա-
 ցին, գտին զնոսա և ի սուր սուսերի սատակեցին զամե-
 նեսեան:

Ի Գանջայոյ ելեալ Ղուլի խանն գնաց ի վերայ Շա-
 մախու և էառ զնա, նոյնպէս և զՇրուան: Եւ յետ ամե-
 նայնի ալսորիկ գնաց ի վերայ լակցի³⁾ թաթարաց, որոց
 իշխանի անունն էր Հաճի Տաւութ բէկ: Չսա ևս յաղթեաց
 և էարկ երկրին հարկ և բազում դրամս էառ չերկրէն լէկ-
 զու: Եւ անտի խաղաց, գնաց ի Վրաստան, ուր մեծամեծ
 իշխանքն և ազատորդիքն վրաց ընդ առաջ ելեալ՝ փառօք
 մեծաւ ընկալան գնա ի Մցիսիթ քաղաք: Եւ նա զպատուա-
 կան խիլայս զգեցուց նոցա: Չև ևս եկեալ էին ազատորդիքն
 կախեթոյ: Կոչեաց զնոսա, և նոքա եկին լողջոյն նորա: Եւ
 զնոսա ևս առաւել խիլայիւք պատուասիրեաց՝ զլօղիկս ազ-
 նիւս և զճիս նժոյզս պարգևելով նոցա. զի սոքա առաւել

1) Ձեռագրում ն: Յենթագրում եմ, վոր հին նյ = այսինն հա-
 մառոտագրությունն ե, վոր արտագրողը կարգացել և ն:
 2) Ձեռագրում բողիլ:
 3) » լակզի բառի փոխարեն հենց այսպես լակցի:

հզօրք էին և ոչ էին նուաճեցեալք ընդ բուսմբ պարսից և ոչ երկնչէին ի Ղուլի խանէն:

§ 108 Եւ եղև յետ այսպիսի պատուասիրութեանցս՝ յաւուր միում խօսեցաւ ընդ գլխաւորին ազատացս այսոցիկ, որոյ անունն է Զօհրար, և խնդրեաց զբուստը նորա իւր կնութիւն: Պատասխանի ետ Զօհրարն և ասէ, «Յոյժ բարի է ինձ խնդիրն տեսոն իմոյ, և ես ինձէն յօժարութեամբ ընծայեցից զնա քեզ, և արասցես զիս իշխան երկրիս»: Յանձն էառ Ղուլի խանն առնել զնա իշխան ըստ հայցուածոյ նորա: Բայց քանզի կասկածէր, թէ նա ի զիշերի միում փախչի և ոչ տայ ինքեան զբուստը իւր, զի քրիստոնեայ էր Զօհրարն, որպէս և ամենայն ազգն վրաց, նմին իրի ծածուկ պատուիրանաւ պահապանս կացուցեալ էր զգուշանալ, զի մի փախիցէ: Եւ յետ աւուրց ինչ կոչեաց Ղուլի խանն զԶօհրարն և ասէ. «Ես խնդրեցի ի քէն առնել զբան մի, և դու խոստացար ինձ առնել. և արդ, որպէ՛ս արարեր»: Պատասխանի ետ Զօհրարն և ասէ. «Բարի է հրաման քո, ապա արձակեա զիս երթալ, կատարել զհրաման քո և բերել քեզ զօրիորդն»: Ասէ Ղուլի խանն. «Գիրս առաքեա ի տուն քո և պատուիրեա, զի բերցեն»: Պատասխանի ետ Զօհրարն և ասէ. «Այդպէս արարից, որպէս և հրամայեցեր»: Ապա զբեաց Զօհրարն զարձանազիր մի՝ առաքել զբուստըն իւր ընդ մօր նորա ի Մցխիթ, զի Ղուլի խանին հարսնացցի: Եւ զայլ գիր մի ի ծածուկ գրեաց, թէ «Այսպէս ը ծանիցեն քրիստոնեայքն երկրին իմոյ, զի այլս այս կալեալ է զիս և բռնադատէ տալ ինքեան զբուստը իմ ի կնութիւն. մի առաքեսցեն զբուստը իմ՝ տալ անօրինիս այսմիկ:»

38.v

§ 109 Իբրև տեսին զբան երկրորդ հրովարտակին մարդիկ երկրին, մանաւանդ մեծամեծքն, ի նախանձ բարկութեան բրդեցան, ի մարտ պատրաստեցան ընդդէմ անօրինին յարձակիլ, զանձինս իւրեանց զնել և ոչ կատարել զցանկութիւն անհաւատին: Եւ զպատգամաւորսն ունայն յետս դարձուցին: Եկին պատգամաւորքն առ Ղուլի խանն

և ասեն, թէ «Ոչ ետուն զաղջիկն մարդիկ երկրին և զմեզ սրով սպանանել կամէին, և մեք մազապուրժ գերծեալ փախեաք»: Յայնժամ բարկացաւ սրտմտութեամբ Ղուլի խանն ի վերայ Զօհրարին և ասէ. «Զի՞նչ է այս, զոր դու արարեր ինձ. զիմորդ ոչ զբեցեր առ նոսա զգործունեայ բանս յղերոյ զաղջիկն, և նոքա ոչ յղեցին: Եւ ահա մահու մեռանելոց ես դու ի ձեռաց իմոց:» Յառաջ մատեաւ Զօհրարն և ասէ. «Ես վասն այսորիկ ասացի տեսոն իմում, թէ զիս կարդեա իշխան երկրին, որպէսզի ամենեքեան հնազանդեցցին ինձ քոյին հրամանաւդ, զի նոքա ոչ են ինձ հնազանդ, և նուաճեցից զնոսա ի քում տէրութեանդ հնազանդութիւն, և դու ոչ արարեր. և ես զի՞նչ ունիմ նոցա առնել:» Յայնժամ Ղուլի խանն հաստատեաց զիշխանութիւն նորա ի վերայ երկրի նորա և հրովարտակս տուեալ նմա՝ առաքեաց զնա լերկիր իւր՝ երթալ, զամենեսեան հնազանդեցուցանել իշխանութեան Ղուլի խանին:

§ 110 Էառ Զօհրարն զհրովարտակն կնքեալ կրնքով Ղուլի խանին և զերկուս յարանց պատուաւորաց Ղուլի խանին՝ զնաց յերկիր իւր: Եւ եղև ի հասանելն նորա անդ՝ ժողովեցան առ նա մեծամեծք երկրին և զգիրն ընթերցան, յորում գրեալ էր Ղուլի խանն, թէ «Զաս ի վերայ ձեր իշխան կարգեցի»: Ի բարկութիւն բրդեցան իշխանքն և խորհուրդ արարեալ ի մէջ իւրեանց՝ զմինն երկուց անտի, որք ի Ղուլի խանէն ընդ Զօհրարին եկեալ էին, սպանին և զմիւսն առաքեցին առ նա պատմել նմա՝ որ ինչ եղևն, զի այլ մի ես վստահեցի իշխել ի վերայ իւրեանց: Եկն, եհաս զերծեալ այրն առ Ղուլի խանն և պատմեաց նմա զամենայն, որ ինչ եղև, և յաւել ասել նմա, թէ՛ «Եւ Զօհրարն, զոր դու իշխան կացուցիր երկրին, ապստամբեալ ի քէն՝ չէ քեզ հնազանդ և նա ետ զընկերն իմ սպանանել:» Իբրև լուաւ Ղուլի խանն զբանս զայս, բարկացաւ յոյժ և առեալ զզօրս իւր՝ զնաց պատերազմիլ ընդ նոսա, բայց ոչ կարաց զվրէժ իւր ի նոցանէ աւնուլ, այլ ի պարտութիւն մատնեալ ի փախուստ դարձաւ և եկն,

եմուտ ի Մցխիթ և այլ ոչ ևս յաւել պատերազմիլ ընդ նոսա և անտի ելեալ¹⁾ եկն յԵրևան:

§ 111 Յետ գումարելոյն օսմանցւոց ի վերայ տեառն իւրեանց սուլթան Ահմէտին և իջուցանելոյ զնա յաթոռոյն՝ իբրև նստաւ սուլթան Մահմուտն ի տեղի նորա, զԲեօրուրի օղլի Արղուլա փաշայն զօրավար կացոյց և առաքեաց զնա երեք հարիւր հազար զօրօք՝ երթալ ի Պարսս²⁾, և եկն, եհաս նա ի Կարս: Ազդ եղև Ղուլի խանին զիմեկն նորա յաշխարհն Պարսից, զօրաժողով եղև: Եւ էր պատրաստութիւն նորա չիսուն և երեք հազար զրահաւոր ձիաւորաց և երկոտասան հազար հետևակաց, և լցեալ էր բանակ նորա յԵրեւանայ մինչև յԷջմիածին: Եւ յետ ամենայնի պատրաստութեան՝ ել անտի զնալ ընդդէմ օսմանցւոց և եկն ի Թալիշ: Եւ ի Թալիշու ելեալ ի ճանապարհ՝ եկն ի տեղի մի Մաղարա անուանեալ, որ մերձ է ի դաշտն յԱրփա-չայ³⁾ անուանեալ՝ յանուանէ Առփա-չայ գետոյն, որ անդ է: Եւ տանէր ընդ իւր զիր[28] հազար ձի ասպատանիկ ի պատրաստութիւն և ի զգուշութիւն, զի ի պակասիլ երիվարաց զօրուն՝ անտի առնուլ մարթասցին: Եւ պատճառն այսպիսի ձիոց պատրաստութեան էր այս, զի զերից աւուրց ճանապարհն միանգամայն ի միում գիշերի առնէր նա և զհինգ կամ զչորս աւուրց ճանապարհն ի միում աւուր կատարէր: Եւ այնպէս շտապով տաքնապաւ մղէր զզօրսն, զի լիցի նմա յանկարծակի յեղակարծիւ հասանիլ ի վերայ հակառակամարտիցն իւր և անպատրաստ գտեալ զնոսա՝ խռով արկանել ի վերայ նոցա և տկար առնել Արդ, յայսպիսի շտապն ընթացից հարկ լինէր բազում երիվարաց պայթիլ, և նա լասպաստանեացն փոխանակեալ՝ նուազութիւն երիվարաց ոչ լինէր: Ապա ելեալ⁴⁾ ի Մաղարոյ և անցեալ զգետն Արփա-չայ՝ գնաց ի

1) Ձեռագրում եկեալ:
2) » ի Պարս:
3) » յԱրփա-չայ:
4) » պակասում ե կեալ բառը:

տեղի մի Սու-բատան անուանեալ և անդ բանակեցաւ և այլ ոչ յառաջ խաղաց:

§ 112 Ազդ եղև օսմանցւոց զալուստ Ղուլի խանին, և փութացաւ շուրջ զախոյանն կազմել և զզօրսն յախոյան անդ մուծեալ՝ ճակատեցոյց և ոչ մղեաց առաջ խաղալ¹⁾ ի վերայ պարսից: Խօսիլ սկսաւ Ղուլի խանն ընդ զօրավարս իւր և ասէ. «Լուարո՛ւք ինձ, քաջ զօրավարք իմ, եթէ զօրն օսմանցւոց ելցէ արտաքս յախոյանէ անտի, զիտասջիք, զի Աստուած ձեզ տուալ է յաղթութիւն. իսկ եթէ ոչ ելցէ յախոյանէ անտի, Աստուած նոցան է պատրաստեալ յաղթութիւնն: Եւ արդ, այժմ մեք զառաջինն զիմեսցուք ի վերայ նոցա. և յորժամ նոքա միանգամայն զհրազէնս հեղուն ի վերայ մեր, մեք յետս դարձցուք, որպէսզի նոքա համարիցեն փախիլ յերեսաց նոցա և ելցեն յախոյանէ անտի՝ պնդիլ զկնի մեր: Եւ յորժամ ելանեն, նոյն ժամայն դարձցուք հարկանել զնոսա, զի այնուհետև նոքա զախոյանն և զկարգաւորութիւնն ի բաց թողեալ՝ տկարանան և ցրուեալ ի փախուստ դառնան:» Զայս ասաց Ղուլի խանն և անդէն վաղվաղակի յարձակեցաւ ի վերայ ճակատուն մեծաւ տաքնապաւ:

39.r

§ 113 Իբրև առաջին հարկանումն եղև նոցա առ միմեանս, յետս դարձոյց Ղուլի խանն զզօրս իւր յերեսաց օսմանցւոց, և գնացին իբրև զժամու միոյ ճանապարհ, և եցոյց նոցա, իբր թէ ի փախուստ դարձաւ: Զայն տեսեալ օսմանցւոցն՝ ամենայն մարտիկքն²⁾ նոցա ելեալ յախոյանէ անտի՝ զիմեցին ի վերայ զօրուն պարսից, զի համարեցան, թէ նոքա զանգիտեալք ի փախուստ դարձան: Եւ էր զօրն օսմանցւոց այնչափ, մինչև անց մարդկան ոչ զօրել եզերօք³⁾ պարփակել ի տափարակ դաշտի՝ հայե-

1) Ձեռագրում խաղաղ:
2) » մարտիկն:
3) » եզերօք:

յեալ ի բարձանց, զի ամենայն բլուրս և զձորս, զլեբրինս և զսարս տեղւոցն մարտի լցեալ էր բազմութիւն զօրացն օսմանցւոց և անդր քան զնոսա երկարածիք սփռեալ, որք ի խաղալն իւրեանց իբրև զորդունս յերեսս երկրի եռալին: Արդ, իբրև այն ինչ եղև բաւականս համարել ելանելոյ և մեկնելոյ նոցա յախոյանէ անտի՝ դարձաւ Ղուլի խանն յետս զօրօքն հանդերձ՝ ճակատիլ ընդդէմ պնդելոցն զկնի իւր: Եւ խառնեցան ի միմեանս երկոքին ճակատքն և սկսան կոտորել զմիմեանս: Եւ ծածկեցին զգաշտն և զամենայն ճանապարհն զխակամբ¹⁾ անկելոց. և տոգորեցաւ ամենայն հողն արեամբ պատերազմողաց զօրաց: Եւ անդ էր ոչ քար, ոչ թուփ և ոչ հող տեսանել, այլ մարմինս անկելոց, առաթուր կոխելոց յերիվարաց և հետևակաց: Ի պարտութիւն մատնեցաւ զօրն օսմանցւոց, յաղթական եղև Ղուլի խանն ի վերայ նոցա և պնդեալ զկնի փախուցելոցն՝ եհար զնոսա մինչև ի Մժնկերտ և մինչև ի Հասանդալայ: Եւ կալան զԱրդուլլա փաշայն կենդանի և ածին առաջի²⁾ Ղուլի խանին, և սպան զնա և հրաման ետ թաղել զնա և ի վերայ նորա շինել յարկս ի ծածկոյթ բռեալս կրով, զի երևելի լիցի շիրիմ նորա ի պարծանս իւր: Եւ առին ի բանակէ անկելոցն զաւար բազում:

Յետ այսորիկ Ղուլի խանն յառաջ խաղացեալ զօրօքն հանդերձ՝ եկն մինչև ի սահմանս Վանայ: Եւ ի գաւառէ անդ, ուր ամենայն զիւզօրէքն են ազգիս հայոց ընդ իշխանութեամբ օսմանցւոց, ասպատակեցին: Եւ զբիւրաւոր մանկունս, զկանայս և զերիտասարգս գերեալ առաքեաց ի Պորասան պարսից:

§ 114 Ապա դարձ արարեալ անտի՝ եկն յաշխարհն Պարսից, բայց ոչ կամեցաւ զնալ, մտանել ի Շօշ, այլ հասեալ ի տեղի մի Մուղան³⁾ կոչեցեալ՝ անդ բանա-

1) Ձեռագրում դիակամբ:
2) » առաջ:
3) » Տամղան:

կեցաւ: Եւ առաքեալ կոչեաց զամենայն իշխանս և զմեծամեծս պարսից, և ամենեքեան եկին: Եւ ապա ի հանդէս ժողովեալ զնոսա՝ խօսիլ սկսաւ ընդ նոսա և ասէ. «Գիտէ՞ք արդեօք, թէ վասն էր կոչեցի զձեզ: Ահա այս քանի՛ ամ է, զի ես վասն ձեր սուսեր առեալ՝ մինչև ցայսօր զթըշնամիս ձեր — զաղուանն, զօսմանցին և զմօսկոյն ի բաց հալածեցի յերկրէս և զամենայն քաղաքս թագաւորութեանս Պարսկաստանի թափեցի ի ձեռաց նոցա, և այժմ վճարեալ զամենայն՝ դարձալ, եկի աստ: Եւ արդ, չետ նուաճելոյ իմոյ զամենայն թշնամիս և ի յաներկեան խաղաղութիւն հաստատելոյ՝ պարտ է ձեզ զթագաւոր նստուցանել:» Եւ իշխանքն յուշ եղեալ բանիցն՝ լռիկ կային, մինչև նա զայս բանս երիցս կրկնեաց: Ապա երկու ոմանք ի մեծամեծ իշխանացն պատասխանի տուեալ ասեն. «Բարեոք ասացեր, տէ՛ր մեր. եթէ կամք են տեսնող, զշահ թամազն բեր, նստոյ յաթոռ իւր, և լիցի թագաւոր մեր:» Ընդ որ բարկացեալ Ղուլի խանն՝ հրաման ետ վաղվադակի զնոսա սպանանել, և սպանին զնոսա: Դարձեալ կրկնեաց նա զառաջին բանն և ասէ, թէ «Դձւք զինչ ասէք վասն բանիս այսորիկ:» Եւ նոցա ամենեցուն զահի հարեալ պատասխանի ետուն նմա ի մի բերան և ասեն երիս անգամ. «Դճւ ես թագաւոր մեր:» Ապա ասէ Ղուլի խանն. «Եթէ ճշմարտութեամբ զիս թագաւորեցուցանել կամիք, տուք ինձ զձեռագիր:» Եւ նոքա ամենեքեան առ հասարակ զրեցին զհրովարտակ և || կնքեցին, թէ «Ղուլի խանն է մեր թագաւոր, և բաց ի նմանէ չիք մեր այլ թագաւոր:» Եւ ետուն զհրովարտակն ի ձեռս նորա և արարին նմա նաւակատիս թագաւորի աւուրս բազումս և թագաւորեցուցին զնա: Եւ չետ վճարելոյ ամենայնի այսորիկ՝ առաքեաց նա հրեշտակս առ սուլտանն օսմանցւոց Մահմուտն և խնդրեաց զամենայն իբրեալսն յերկրէն Պարսից յետս դարձուցանել: Ընկալաւ սուլտանն զհրեշտակն բազում պատուասիրութեամբ և հրաման ետ ժողովել յիւրաքանչիւր գաւառաց զգերեալսն.

40.v.

յերկրէն Պարսից և ազատ արձակել զնոսա իւրաքանչիւր
յերկիր իւրեանց: Եւ որչափ հնար եղև, յետս դարձուցան
գերիքն, և հաստատեցաւ դաշն խաղաղութեան ի մէջ պար-
սից և օսմանցւոց:

Վ ե ը 2: 1)

ՀԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Ձեռագրում նոր տողի վրա հենց այսպես Վերջ:

1977-1980

1977-1980

I. ԱՆՁՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՅՈՒՆԿ *

- Աբասյի բեկ 26:
 Աբբաս շահ, [1] 31, 86:
 Աբբաս շահ, Ապպազ շահ, մահուկ [III] 57, 67:
 Աբդուլլա փաշայ, Քոփուբյու, Քեօբուբլի օղլի 9—11, 13, 14, 18, 19, 23, 27—29, 32, 90, 92:
 Աբգըբահման, Ապտըբահման, փաշայ 49—52:
 Աբիճան, որդի Ատոզմին 76:
 Ակայ-զոչի, իշխան 28:
 Ալեքսան պարոն 16:
 Ալի ոմն [Թաղաուր Բաղդիարայ] 77:
 Ալի փաշայ, վեզիր 50, 59:
 Ալի-Հասան, բեկ 36:
 Ալիմարգան, Ալիմարտոն, խան 68, 71, 72, 77, 78:
 Ալի-բրբիզ 36:
 Ախիջանեան, տես Միրզէ Ախիջանեան:
 Աղաբար [Կարբեցի] 13:
 Աղապատա պարոն 16:
 մէլիք Աղամալ [մէլիք Սահակի հայր] 18:
 Աղաջան, որդի Այդինբեկին 76:
 Աղամ պարոն 16:
 Աղայ-Վէլի [մէլիք Սահակի յեղբայր] 18:
 Անձեւ բեկ 53, 69:
 Անձեւ սուլտան, օսմանցուց [III] 7, 9, 26, 38, 49, 90:
 Անձեւ փաշայ 33, 38, 39, 41, 40, 61, 74, 77:
 Այդին բեկ [հայր Աղաջանի] 76:
 Անտոն պարոն 23, 25:
 Անտոնիոս, Մարիամին որդի 17:
 Արաֆ շահ, Աշրաֆ սուլտան 42, 44:
 Ասուածատուր կաթուղիկոս [համատանցի] 12, 14, 21:
 Ատոզմ [հայր Աբիճանի] 76:
 Արդի նինուէացի 53:
 Արղուձբեկ պարոն 16:
 Աւազ [կարբեցի] 13:
 Աւեսիս պարոն, Սրապիոնեան 16:
 Բաբա, խան, զան 71, 72, 77, 78:
 Բարաջան Մոծակեան 18:
 Բարուբյան, տես Ղազարոս Բարուբյան:
 Բալիզ, որդի Մուսիսին 76:
 Բարխուզարեան, տես Միքայէլ Բարխուզարեան:
 Բէյրամ պարոն 16:
 Բլուչ Մահմէտ 41:
 Բութիկ, Պաթուհին որդի 17:
 Փայուստ պարոն 16:
 Քրիզոր վարդապետ 15, 16, 20:
 Չափթ բեկ, խորհրդական 62:

* Ազգանուններէ չմտնող անունները յետոյ և վերջինի ինքնանունները ղրկուած:

Դաւիթ Գորբնեցի բեկ 76:
 Դաւիթ Միրզէջանեան 15:
 Դաւիթ պարոն 16:
 Եայրուզ Հասան 9, 10:
 Երամ պարոն 16:
 Զաֆրան իշխան 45:
 Զըլայ, զորավար 30, 31:
 Զօհրաբ, Զօհրապ [վրաց իշխան] 88, 89:
 Զօհրապ պարոն [հայ] 16:
 Էմիր 40:
 Էմիր-զէրզ 40, 42:
 Թազէս պարոն 16:
 Թամազան, փաշայ 31, 32, 35:
 Թամազ, Թամազզուլի, խան 43, 44, 62, տես Ղուլի խան:
 Թամազ շահ [III], Թամազ 3-5, 12, 14, 23, 42-49, 57, 60, 61, 63, 68, 82, 93:
 Թամուբ, փաշայ 46, 51, 52, 54-56, 58:
 Թոռուն, մուշեցի 53:
 Թօխմախ, զօրադուխ 50:
 Թօփուզ [Հախնազարի հայր] 73:
 Իբրահիմ, զօրադուխ 61:
 Իբրահիմ փաշայ 50:
 Խաթուն [Բութիկի մայր] 17:
 Խարակօզու. տես Քալբալի Ղուսում աղա Պարակօզու:
 Կազ Օսման, փաշայ, Օսման փաշայ 74, 76, 77:
 Կասչիկ. տես Յովհաննէս Կասչիկ:
 Կարապետ պարոն 18, 23:
 Կլուզ պարոն 16:

Հախնազար, Թօփուզի որդի ճաղակերեանց 76:
 Հաճի Տաւութ բեկ 87:
 Հանա, Կ. պոլսեցի 53:
 Հասան փաշայ 28, 32, 33, 51:
 Հիւսէյն շահ սուլտան [I] 3, 42, 43:
 Հիւսէյն փաշայ 50:
 Հունդիբէկեան. տես Յովհաննէս Հունդիբէկեան:
 Ղազարոս Բարուբեան 16:
 Ղասում բեկ 26:
 Ղարա-Բիրար [կարնեցի] 36, 53. տես Սարուխան:
 Ղարա Մուստաֆա փաշայ, Մուստաֆա փաշայ 38, 39:
 Ղըլայ իշխան 45:
 Ղուլի խան 42-64, 66-80, 82-85, 87-93. տես Թամազ խան, Թամազզուլի խան:
 Ղօշ Ալի 9, 10:
 Ճազակերեանց. տես Հախնազար ճան, պարսիկ իշխան 76:
 Մալխաս պարոն 16:
 Մահմէտ, խան [Շիրազի] 78-80:
 Մահմէտզուլի, խան 5-7:
 Մահմուտ սուլտան, աղուանից 3:
 Մահմուտ սուլտան, օսմանցուց [I] 60, 74, 90, 93:
 Մանասէ, համատանցի 54:
 Մանասէ [վաճառական] 37:
 Մայեար խան 61:
 Մասեհ [վաճառական] 37:
 Մատթէոս [վաճառական] 37:
 Մարիամ [Անտոնիոսի մայր] 17:
 Մէժլումբէկ 24:
 Միաժին (Յիսուս) 21:
 Միհրաբի, խան 10-12, 14, 24-26:
 Միրզէ Ախիջանեան 20:

Միրզէջանեան տես Դաւիթ Միրզէջանեան:
 Միրալէ Բարխուդարյան 18:
 Մկրտիչ պարոն 16:
 Մղուս պարոն 16:
 Մոծակեան. տես Բարաջան Մոծակեան:
 տեր Մոսէս 17:
 Մուսէս [Բալիզի հայր] 76:
 Մուստաֆա փաշայ [Կարնոյ] 7, 8:
 Յարութիւն ոմն 20:
 մահտեսի Յարութիւն 37:
 Յիսուս Քրիստոս 20:
 Յովհաննէս Կասչիկ 15:
 Յովհաննէս Հունդիբէկեան, պարոն Յօհան Աւնդուբէկեան 15, 16:
 Յովսէփ մարզաբէ 74:
 Յօհաննէս քալանդար 66:
 Նիկողայոս պարոն 16:
 Նիկողայոս Գօտէմարտիկ 17:
 Նոյ (Նահապետ) 28:
 Նուբի պարոն 16:
 Շահբաս-Ալի 36:
 Շահնաւազ [վրաց արքայորդի] 7:
 Շէյխ Նապըր 38:
 Շհալի բեկ 26:
 Շիխալի 33:
 Աւնդուբէկեան տես Յովհաննէս Հունդիբէկեան:
 Ռաջաբ, փաշայ 19:

Չափար, շէխ 79:
 Չէրչե-բաշի 24:
 Պետրոս պարոն 16:
 Պետրոս [վաճառական] 37:
 Պօղոս [կարնեցի] 13:
 Պօղոս Քէշիբէկեան 15:
 մէլիք Սահակ, մէլիք Աղամալի որդի 18, 23:
 Սամբէկ 13:
 Սարգիս, կարնեցի 13:
 Սարուխան [ար կոչուբ Ղարա-Բիրար] 53:
 Սարու Մուստաֆա, Սարու Մուստաֆա, փաշայ 9, 19:
 Սեղբոս, մեծատուն [ամիրայ] 13:
 Սըփանզիբդի, իշխան 54:
 Սիմոն զեսպան, կարնեցի 83-85:
 Սրայիտեան. տես Աւետիս պարոն:
 Վազգան, իշխան 5-8:
 Վարդան (վաճառական) 37:
 Փարաքար 17:
 Փերիզուլ պարոն 16:
 Քեալբալի Ղասում աղա Պարակօզու 30:
 Քեօրուրի օղլի, Քեօփուրու. տես Արդուլա փաշայ:
 Քէշիբէկեան. տես Պօղոս Քէշիբէկեան:
 Քրիստոս 22:
 Օսման փաշայ, տես Կազ Օսման փաշայ:
 Ֆրափօսօն, իշխան 4:

11. ՏԵՂԵՐԻ ԱՆՎԱՆԱՅԱՆԿ

Արիմուհէ ջուր 52: Դէսփէլ 47, տես Դասփէլ:
 Արուզուրան գետ 45, 68: Դերկազն, քաղաք 31:
 Աղորեաց թաղ 18: Եղեսիա 49, տես Ուռնա:
 Աղուանից աշխարհ [Կովկասյան] 82: Եղզ 46:
 Աղուանք [Կովկասյան] 85: Եկնկի շայ, տեղի մի 35:
 Աշրաւապատ 62: Եկբատան 4, տես Համատան:
 Այլաղայ բերդ 79: Եղեփարդ 9:
 Ասինչ [գյուղ] 17: Եղեփարդայ դաշտ 13:
 Ասփաշայ գետ 90: Երեփան, Երեան 9—11, 13, 17, 19,
 Ասփաշայ դաշտ 90: 22, 28, 56, 57, 85, 90:
 Ասփաշայ, տեղի մի 90: Երեանայ արձակաքաղաք 15, 17:
 Աքախուղ 86: Երեանայ բերդ 14:
 Արամուղ 86, 87: Երեանայ դաշտ 85:
 Աւան 17: Եօնուղ, տեղի մի 74:

Բարելոն, Բարիլոն 38, 39, 53, 2անդարան, 2անտարան բերդ 43,
 60, 61, 69—72, 74, 75, 77, 51, 52:
 80: 2աղով, դաւառ, քաղաք 33, 69, 70,
 72, 75, 76:
 Բազդաս 38: 2անդանոյ ջուր 70:
 Բազդիար 45, 46, 68, 77, 78: 2անդու գետ 16, 17, 20, 21, 26:
 Բանդար, դաւառ 78, 79: 2անկվան 39:
 Բնսջուռն 35: 2աֆրան, տեղի մի 39:

Գանջայ, քաղաք 86, 87: Էջմիածին 13, 14, 23—26, 50:
 Գիրէնդ 33, համա. Քրենո? Թալիշ [Արագածոտնի] 90:
 Գոգ-բլիսա 86, տես Կապոյտ Թարւէզ, քաղաք 4, 5, 14, 22, 27—
 Եկեղեցի: Եկեղեցի 17: 29, 31, 32, 50, 52, 54—58, 65,
 85, տես Դաւրէզ:
 Դաւրէզ (Յերեփանի), տես Սամ- Թաւրիզու դաւառ 29:
 Դաւրէզ 27, տես Թաւրէզ: Իմամ-Աղամ, տեղի մի 71:

Իմամ-Աղամայ դուռն 73: Հարսթ, քաղաք 57, 58:
 Իմամ-Ալի [տեղ] 71: Հաւուզա 63, 77:
 Իմամ-Մուսա [տեղ] 71: Հիլա 71:
 Հարին գետ 39: Հին Երեան թաղ 17:
 Հային դաշտ 32, 35: Հոռոմաստան 7, տես Օսմանցուղ
 Հակբան գիւղ 34: Երկիր:
 Հաքլար, տեղի մի 60: Զաղ 17:
 Լէկզու երկիր 82, 87: Զագաւան 17:
 Լէյլան գիւղ 70: Զորագիւղ, թաղ 15, 17, 18:

Խոյ քաղաք 27: Ղազբին, Ղազուին. 63, 65 տես
 Խոյայ դաւառ 27: Կազբին:
 Խոյայ բերդ 27, 28: Ղարա-թարա 71:
 Խորասան, Խորասան 22, 47, 57, Ղարշու-եախա, տեղի մի 72:
 58, 60—63, 67, 78, 83, 92: Ղարաբաթ, Ղարաբատ, դետ 39, 71,
 Խուսնայի Մէհմուռն, Իջևան 69: 75:
 Կազբին 68, տես Ղազբին: Ղորուղ, դաշտ 86, 87:
 Կարէթ, Կարիթու դաւառ: 6, 87: Մազանդարան 65:
 Կապոյտ Եկեղեցի 86, տես Գոգ- Մազարա, տեղի մի 90:
 բլիսա: Մայաաշ 33, 69:
 Կարբի, գիւղաքաղաք 10, 11: Մանդալի, Մանտալիա 71, 75:
 Կարին, քաղաք 7, 9, 53: Մաշատ 47, 57—59, 78, 81:
 Կարմիր սար, տեղի մի 60: Մարանդ, գիւղաքաղաք 28, 39, 55:
 Կարս 90: Մժնկերտ 92:
 Կաւակերտ 17: Մուղան 82, 92:
 Կիլան 45, 46, 82, 84: Մուշ դաւառ 49:
 Կոնդի թաղ 16, 19: Մցիկթ, Մցիկթ, քաղաք 3, 5, 6—9,
 Կոստանդնուպոլիս, Կ Պոլիս 7, 87, 88, 90:
 13, 26, 33, 41, 42, 49, 59: Մօսկով 85:
 Զամազան, Համատան 4, 9, 28, Մօսկովայ երկիր 84:
 31—35, 38—40, 42, 46, 49— Մօսկովաստան, Մօսկովաստան 7, 8:
 52, 60, 61, 76, տես Եկբա-
 տան: Յամիթ 49:
 Հայաստան 13: Յանավանդ, տեղի մի 50:
 Հայոց տուն—3: Իննուէ 73, 74:
 Հայք 82: Շասախի 81, 85, 87:
 Հաննափա, Հաննափայ 83, 60: Շասիկ ջուր 71:
 Հասանդաղայ 92:

Շիրադ, քաղաք 45, 46, 78, 79:
 Շուշտար 47:
 Շրվան 81, 85, 87:
 Շոշ, քաղաք 3-5, 9, 29, 31, 42-46, 60, 62, 63, 67, 68, 77, 78, 81-84, 92:
 Շօր չուր, տեղի մի 28:
 Ուլուկերա, քաղաք 50, 52:
 Ուսնա 50, տես Եղեախա:
 Պարսից աշխարհ, յերկիր, Պարսք, 3, 90, 92-94:
 Ջլմար, տեղի մի 78:
 Ջրման բերդ 68:
 Ջուղա [նոր] 66, 84:
 Սալնայվա զիւղաքաղաք 34:
 Սախըզ 54:
 Սահանա քաղաք 33:
 Սամբէկի Դալմա, ջրմուղ 13:
 Սալդավա քաղաք 34:
 սուրբ Սարգսի վանք 15:

Սին, Սին, քաղաք 50, 54:
 Սու-բատան, տեղի մի 91:
 Մնուդ-քօբբի 5:
 Սպիտակ դուռն 73:
 Սօֆիան զիւղաքաղաք 28:
 Վան 92:
 Վերք, Վրաստան 5, 6, 82, 87:
 Քանկավառ զիւղաքաղաք 33:
 Քասրա գավառ 33:
 Քարբուա, Քարբուաա 70, 77:
 Քէչի-կալէ բերդ 30:
 Քլիսա-քանթակ զեօղ 87:
 Քազահիա 15:
 Քուիքօուայ սար 69:
 Քրենա 69, հմմա. Քիբէնա?
 Քրմանշա, Քրմանշայ Քրմաշա 33, 51, 68, 76:
 Օզրէկաց աշխարհ 58:
 Օսմանցոց երկիր, 53 տես Հոսսմաստան:
 Փալնան, զիւղաքաղաք 29, 30, 32, 33:

III. ՆՅՈՒԹԱՅԱՆԿ

արդալի աղուան 61:
 արդիլուանդ 32:
 աղաբակ 13:
 աղատօրդի 87:
 տիոյան [= դասնեշ] 60, 74, 91, 92:
 ախան 36:
 ախանահաա 36, 53:
 ախուհը 12, 41:
 աղանդ 31, 40, 70:
 աղուան 3, 4, 5, 9, 29, 30-32, 38-46, 49, 57, 58, 61, 82, 83, 93:
 աճքարտակ 25:
 ամրոց 18, 56, 79. տես բերդ:
 այդի 17:
 ապրանք 53:
 առփնիդացի 55:
 Ասլան-թօփ 34:
 ասպաստանիկ ձի 90:
 ասպաստանիք 90:
 ասորեստանեայք 39:
 ասորի 53:
 արձակաքաղաք 15, 17:
 արծաթ, արծաթեղեն 7, 12, 36:
 արաբացի, արապ 59, 60, 68:
 աւան 75:
 բաքելացի 38, 39, 53:
 բազդիբայի, բազդիարցի 47, 77, 78:
 բաթիլան 32, 60:
 բարութ 12, 36, 75:

բաւականութիւն զօրաց [= պարեն] 74:
 բենեզ 47:
 բերդ 7, 14, 15, 18, 22-28, 30-32, 34-36, 46, 51, 55-58, 68, 72-74, 77, 79, 85. տես ամրոց:
 բօշայ 18, 19. տես փօշայ:
 զերգաստան 31, 58:
 զինի 66:
 զիւղ, զեօղ 10, 11, 13, 17, 18, 30, 34, 39, 68, 70, 86, 87:
 զյուղաքաղաք 10-13, 28, 29, 33, 34:
 զիւղօրէք 17, 27, 29, 34, 46, 47, 68, 73, 92:
 զյուղական (= զյուղացի) 34:
 զասվիլ - շուշտարացի 47:
 զարդաս 63, 84:
 զէսվիլ - շուշտարք 47:
 զօր, զօր 14, 18, 26-30, 32, 35, 36, 39, 42, 51, 60, 70, 72-74, 85. տես թոփ:
 զօրակ 66:
 զուրս 18:
 զրամ 36, 37, 53, 67, 70, 80, 87. տես փոզ:
 եղիպտացի 18, 19:
 եկամուա (= հասույթ) 80:
 երկրորդն սուլտանին, երկրորդն [= վեզիր] 50, 51, 56:

էմիր 41:
 Թաթար 7:
 Թաղ 15-19:
 Թուման, Թումէն 46, 54, 59,
 70, 80, 82, 83, է5:
 Թուրք 54:
 Թվանդ, Թվանկ 17, 19, 73, 75:
 Թվանկաւոր 74, 75:
 Թօփ 34: տես դոր, դօր:

 Ժամայոյց յոսկւոյ 84:

 Խմամ 71:
 Իջեան 83, 69. տես պանդսկ:

 Լակդի 5, 7:
 Լակդի Թաթար, Լակցի Թաթար
 3, 4, 5, 87:
 Լիար 42, 72:
 Լօս (= գօրն Բաղդէարու) 46, 68:
 Լուրիկեցի 55:

 Լիւայ 13, 25, 41, 47, 71, 87:
 Լորիջի 62:

 Ժախ 46, 78, 82, 84:
 Ժաւայ 20, 37, 59, 79:
 Ժառատան, Ժառատունկ 17, 18:
 Ժիրանի 68:

 Կարբեցի 10:
 Կարնեցի 9, 36, 83:
 Կարուակ 36:
 Կերպաս 47:
 Կ Պոլսեցի 53:
 Կունա 40, 41:

 Կազարացի 4, 8:
 Կամաստեղութիւն 67:
 Կամաստեցի 37, 54:

հայ 12-16, 19, 21, 22, 24, 25,
 27, 34, 36-38, 41, 53, 54, 62,
 66, 76, 83, 87, 92:
 հայաստանեայք 3:
 հայեղի պատուական 84:
 հայկազեան Թուական 3, 6, 8, 9,
 21, 27, 38, 43:
 հարկ 87:
 հարճ 67:
 հիւանդութիւն (= համաճարակ) 29:
 հրազեն 35, 91:
 հրազեն դնտակ 32:
 հրացան 16, 29, 74:
 հրէայ 54:

 ձի նժոյգ 87:

 զախում 53:
 զաճար ազգ 69:

 ճախրագործ 41:
 ճլղաւայ 53:

 ժար 14, 39, 49, 50, 60, 69: տես
 քուրդ
 ժարգայերի 7:
 ժարջանի տար 32:
 ժարջիլ 73:
 ժեծատուն 13, 16, 85:
 ժեատքս 53:
 ժլթանի կովապաշտ 36:
 ժուշեցի 53:
 ժօս յով 45, 46, 82, 84, 93:

 նինուէացի 53:

 շխա 68:
 շեխ, շէխ, շէյխ 71, 79, 80:
 շուշտարաց ազգ 47:
 շօշեցի (= սպտհանցի) 76:

սակեղէն, սակի 7, 12, 36:
 սուր 17:

 չաքնեցի, չափնեցի 76:

 պանդսկ 36, 37. տես իջեան:
 պանդար եաշմաղ 53:
 պարս, պարսիկ 3, 9, 14, 15, 22,
 24-31, 33-35, 40, 44, 47,
 49-51, 53, 54, 56-58, 61,
 67, 69-71, 73-77, 82, 83,
 88, 91-94:

 ջրմուղ 13:

 սեվանդ 53:

 սանդրաջ 53:
 սամուր 53:
 սանն հասարակաց զինուորական
 [= յենիշերի ընդհանուր կաթ-
 սա] 59, 60:
 սերաստացի 34:
 սիկարեան 50:
 սով 4, 57, 58, 73, 77:
 սպահի 60:
 սրաւոր աղուանք 57:
 սիտոց (= փոփածք) 36, 37:

 վաճառական 36, 37, 53:

վեզիր 50-52, 59:
 վեր, վրացի 7, 8, 88:

 տաճիկ 71, 85:
 տանուակր 70:
 տոկոսի 46, 82:

 փիղ 41:
 փոզ 53, 54, 59. տես զրամ:
 փօշայ 16: տես բօշայ:

 քաղաք 3-10, 13-18, 20-23, 27-
 29, 31-37, 40, 43-50, 52-57,
 59, 60, 62, 64, 67, 71-79, 82,
 84, 85, 87, 93:
 քաղաքացեա 30:
 քաղաքացի 14, 64, 67, 68:
 քուրդ 32. տես մար:
 քուրմ 71:
 քսակ 53:
 քալանդար 66:

 օզրէկ 58, 59:
 օխայ 73:
 օսմանցի, 3, 7, 9-22, 24-29, 31,
 34, 41, 45, 46, 48-50, 52-58,
 60, 61, 63, 64, 69, 71-73,
 75-77, 82, 84, 85, է7, 91-94:

 ֆրանզ կարգաւոր 53:

1. Աբրահամ Բերեվանցու հրահարակութեան արքիվ V
2. Գլուխ առաջին.
 Քէ որպէս շահ թամազ որդի արքային պարսից Հիւսէինին ձեռն էարկ զթագուորութիւն հօր իւրոյ պափշտակեալն յաղուանից յինքն դարձուցանել, և թէ որպէս Մցխիթ քաղաքն սուպատակեցալ ի լակղի թաթարաց և յետոյ առաւ յօմանցւոց 3
3. Գլուխ յերկրորդ.
 Քէ որպիսի մարտիւ պատերազմիւ առին օսմանցիք զերեկօն 9
4. Գլուխ յերրորդ.
 Քէ որպիսի մարտիվ—պատերազմի Սոյ և թաւրէզ քաղաքք պարսից առան յօմանցւոց 27
5. Գլուխ չորրորդ.
 Ջիւրդ ի ձեռն Ղուլի խանին շահ թամազն մարտիւ պատերազմի էտո զմեծ քաղաքն Շօշի ձեռաց աղուանից և նստաւ յաթոս թաղաւորութեան հօր իւրոյ 43
6. Գլուխ հինգերորդ.
 Ջիւրդ էտո Ղուլի խանն զձամատանն ի ձեռաց օսմանցւոց քաղում պատերազմաւ 49
7. Գլուխ վեցերորդ.
 [Պարտութիւն շահ թամազի յօմանցւոց և գահընկեցութիւն: Թաղաղբութիւն շահ Աբբաս մանկան Միւհեմեմանութիւն Ղուլի խանի և յաղթութիւնք նորին] 57

8. Գլուխ յարեոտդ.

[Արշալուանք Ղուլի խանի ի Հայս, ի Վերս, յաշխարհն
Ազուանից և յերկիրն Լեկզու: Պատերազմ և պար-
տութիւն զորացն օւսմանցւոց: Բանակիլն Ղուլի խա-
նի ի Մուղան զաշտի և թագաւորելն ի վերայ պար-
սից]. 82

9. Յանկեր 95

